

ԷԶՄԻԱԺՆԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ, ՌԱՂԱՆՆԱԿԱՆ ԵՒ ԸՈՐԸ-ԵԳԻՊՏԱԿԱՆ ԳԵՂԱՐՈՒՆԵՍԻ

Գ Բ Ե Ց

Յ Բ • ԵՈՂՍԷՓ ՄՅՁԻԳՈՂՍԿԻ

ԸՌԿՆՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՅԻՉ ԳԵՂԱՐՈՒՆԵՍԻ ՊԵՏՐՈՒԹԵԱՆ Ի ՀԵՐԸԱՍԵՐԿԱՆ ՊԵՆՆԱՅ

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Է Ց

Հ. ԲԱՌՆԱՐԱՍ Վ. ՊԻԼԷՂԻԿՃԵԱՆ

Մ Խ Թ Ա Ր Ե Ա Ն Ո Ւ Ե Ց Է Ն

22

U-95

Արայ:

Է. ԶՄԻԱԾՆԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ

750.56 (47.925)

091 (= 91.99)

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԱՏՈՒԳՎԱԾ Է 1967 թ.

ՀԵՅԿԿԿԵՆ, ԹԵՎԵՆՆԵԿԵՆ ԵՒ ԸՍՈՐԸ-ԵԳԻՊՏԵԿԵՆ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ

Գ Բ Ե Ց

Շ Բ • Շ Ո Վ Ս Է Փ Ս Շ Ջ Ի Գ Ո Վ Ս Կ Ի

ԸՌԸՆԶՆԵԿԵՆ ՈՒՍՈՒՑԻ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԳԵՏՈՒԹԵՆ Ի ՀԵՐԸԼՈՐԸՆԻՆ ԳԵՆՆԵՑ

Թ Ը Բ Գ Բ Ը Ն Ե Ց

Հ. ԲԱՌՆԱՐԱՍ Վ. ՊԻԼԷՋԻԿՃԵԱՆ

Մ Ի Ի Թ Ը Բ Ե Ը Ն Ո Ւ Խ Տ Ե Ն

18 զնկատիպ պատկերով և 6 լուսատիպ տախտակներով:



ՎԻԵՆՆԱ, 1892

Մ Ի Ի Թ Ը Բ Ե Ը Ն Տ Պ Ը Բ Ը Ն

23-073

A 1405

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Քիզանդական նախկին պետութիւնը կազմող երկրաց սոց ելլելով 1888 Ազգոստոսէ մինչեւ 1890 Ապրիլ ոսումական ճանապարհորդութիւն կատարեցի, նպատակ ունենալով քիզանդական արուեստի առ մեզ նսսած յիշատակարաններու նսսուրլլալ կամ՝ զաղտփար մը կազմել: Սեւանիկ եւ Աթոս լեռը, Աթէնք եւ Յունսստան, Կ. Պոլիս եւ իւր լայնսածսալ շրջակայքը, Փորք Ասիոյ արեւմտեան եզերքն ու կրկնները, Տրսսափզն եւ Կաւկաս, Մոսկոս ու Փեթերսպուրկ այս սոսաջին ուղևորութեանս, որ սակի ընդհանուր Ներսածութիւն մին էր, օթեւաններն եղան: Կրթութեան կայսերական-թսզսգստրական սղաշտօնարանին կողմսեթ նիթեական օգնութիւն եւ յանձնարարականներ ընդունելով, յԱթէնք՝ Նորին Վսեմութեանէն Պարոն Փոն Բօսեէր ղեսսպանէն, եւ ի Կ. Պոլիս ֆոն Շիսլէ ղեսսպսստանս կործրդակամէ՝ օգնութիւն գտնելով, Վիեննայի նսմսւղարանի նսսախօսակեան-արձանսղրական քսմփի վարչութեանէն լուսանկար գրրծիք մը փոխ սոնելով կրցայ ուղևորութիւնս յսջողութեամք ի գլուխ նսնել: Այս սոսաջին սոթիթը կը գործսմեմ՝ ձեւնարկութեանս սոմէն նսսսստողաց կորին շնորհակալութիւնս յայտնելու:

Ուղևորութեանս ստուղներն են քիզանդական արուեստի յիշատակարանաց մսսսին սոսացուսմ տեսութիւն մը, տեղեկութիւնք եւ շտիմներ նորսգիտ յիշատակարանաց եւ իրր 700 կտոր սոնուսմ լուսանկարք՝: Սոյն նիթեոց վրայ աշխատսմ ժսմմնակս երկու ձսմքայ սիտի քննեմ. նսսս տեղսղարութեան նեոնեկով գոնեայ Կ. Պոլսոյ եւ շրջակայեց, Յունսստանի եւ Աթոսի յիշատակարանաց վրայ սսսսնձնն շատրններու մէջ սիտի խօսիմ. իսկ սստմսւղրական ձսմքով գեղարուեստի մէն մի ձիւղին գարգսզման սստմութիւնն գրել սիտի փորձեմ, եւ նսսլ՝ ձարտարսսկտութեան եւ մարդանկար արձանսղրութեան (Plastik): Ան այս քնսկանարար նոր ձսնսսսղրորդութիւնք սիտի քլլուին: Վսսսմսնս է քիզանդական գեղարուեստի ընդարձակ սստմութիւն մը յօրինել: Այս սոսաջին աշխատութեանս գտսմ ընդունելութեանէն կսսստմոնի՝ յստսջսղիք նսսստսկիս նսսնիլը: Կրկն շնորհակալ կըլլամ, եթէ սիսսսնաց նեո որ սնտարակոյս աշխատութեանս մէջ սիտի գտնուին, օգտակարն եւս շեշտուի:


¹ Նսրի կը նսմքիմ սստէն յիշատակել քսնի մը յօրուսմներ, որոնք ուղևորութեան ժսմմնակ գրուեցան. շին քիզանդացի, 600ին կստուցեալ կսթեոդիկէի մը ձարտարսսկտութեան ու քննսղակսղրութեան մսսսգրղնն ի Բսսկիսեթլս կղզույ վրայ սես ի Λεπίον τῆς ἱστορικῆς καὶ ἐθνολογικῆς ἐταιρείας ἐν Ἀθῆναις 1889, էջ 711: Տիսստոսի τοῦ κεντρικοῦ τῶν φιλοσοφῶν μὲνսսստսնը եւ մ կարու յոյս զարկերը: Անդ, 1890, էջ 117: Արդոսղիս՝ նն-քիզանդական ժսմմնակ: Mitt. d. k. deutschen arch. Instituts, Athen 1889, էջ 271: Տրսսսիզնի սստեկրաց ձեոսսղիք մը՝ յսմէ 1346 ի Repertorium für Kunstwissenschaft, 1890: Տն-քրթստնէական արուեստի մսսսցրղը ի Յունսստան ի Römische Quartalschrift, 1890:

Առաջիկայ Հատորիս մէջ կ'ամփոփեմ՝ այն նիւթը, զոր ինձ մատակարարեցին քիզանդեան գեղարուեստի սահմանակից երկիրներն: Բաց ի յիշատակարանաց ծանօթութեան դրականապէս սուած քնդարձակութենէն եւ նկարագրաց համեմատութեամբ մէն մի ճիւղի առաւել եւս որոշ զանազանուելէն, հետաքրքրական պետի ըլլայ տեսնելն, թէ՛ նրբ եւ մինչեւ իր աստիճան քիզանդական արուեստն մուտ գտած է ի ընէ գեղարուեստի կողմանէ այնպէս աղքատ երկիր մը, ինչպիսի է Հայաստան: Ասով կանոն մի կը ստացուի արեւմտից գեղարուեստին համանման յայտնանիշ նշանները դատելու:

Հատորս հրատարակ չեմ՝ կրնար հանել առանց խորին շնորհակալութիւնս յայտնելու Ծորին Վսեմութեան՝ Ռուսական դեսպան Նելիտովի, որ իմ՝ ուղեւորութիւնս ի Կովկաս շատ դիւրացուց պաշտօնատանց ուղղեալ բաց նամակ մ'ի՛նձ տալով, եւ Վիեննական Մխիթարեան Միաբանութեան, ի մասնատրի տոյն Միաբանութեան Ընդհանրական Արքային՝ Այտնեան Հ. Արսէն Վ. Արքեպիսկոպոսին՝ որ խոհեմութեամբ եւ յօժար պատրաստակամութեամբ, որ այնչափ աւելի գովելն է՝ որչափ արեւելքի մենաստանաց մէջ ստացած փորձառութիւնքս տխուր էին, ուսումնասիրութեանս նպաստեցին եւ տպագրութեան ծախքն ու հոգն եւս իրենց վրայ առին:

Վ. Կ. Ա. Ա. Ա., Փետրուար, 1891


ՅՈՎԱԼՓ ՍՏԶԻԳՈՎՍԿԻ



Բ Ո Վ Ա Ն Գ Ը Ո Ի Թ Ի Խ Ն

էջ

Էջմիածին	1
Վանք եւ եկեղեցի, էջ 2. Պաղոսի եւ Թեղլի բարձրաբանդակըն, 5. Յունարէն արձանագրութիւն, 7. Կողովածոն խոյսի մենագրով, 8. Ներսէս Գի (640—661) շինութիւններն, 10. Հայոց քրիստոնէական նաագոյն ճարտարագիտութիւնը, 12. Բիւզանդեան ազդեցութիւն, 13:	
Էջմիածնի աւետարանը.	15
Զարդը եւ եզերագարդը նոյ ընագրին յամէ 989, էջ 18:	
Ռափնեան փղոսրեայ կողը.	21
Հինգմասնեայ կրկնակողը, 24. Պատկերներու նամնատական նետա- գոտութիւն, 27. Ուխարովի տախտակն, 37. Կողին կազմութեան ժամա- նակն ու տեղը, 41. Պատկերագործական դպրոցն ի Միլան, 41. Ի Ռա- փնեա, 42. Ի Կոստանդնուպոլիս, 43. Աւետարանի կողին պատկեր- ները, 44:	
Ատրական մանրանկարք ի սկզբան.	45
Նմանութիւն 585ին գրուած ասորական Ատուածաշնչին նետ, 48. Պատ- կերաց նամնատութիւն, 49. Կարոլինգեան ընդօրինակութիւնը, 51. Ժա- մանակն ու տեղն, 57:	
Ատրական մանրանկարք ի վերջն	57
Պատկերաց նամնատութիւն, 59. Ժամանակն ու տեղն, 63:	
Մանրանկարչութիւն հայկական	64
Հայկական արձանագործութիւն, 64. Մարդանկարք 1000էն յտաջ, բիւզանդեան ներածութիւն, 65. Վրացի ձեռագիրք, 66. Ատրական ազ- դեցութիւն, 68. Էջմիածնի աւետարանին նշանակութիւնը, 70: — Հայ- կական գեղարուեստն մինչեւ ԺԳ դար, 73. ԺԳ դարէ ետեւ, Ս. Գրոց եւ աշխարհական տեսիլներ, 74. Զարդոց ոճն, 74. Արժանեսական սիւնակ- ներ, 76. Չկնաթոշուն զլիազարքը, 78. Պարիկներ, 79:	
Յանկի նիւթոց	83



Յ Ը Ն Կ Պ Ը Տ Կ Ե Ր Ա Յ


ՊԸՏԿԵՐՔ Ի ԲՆԱԳՐԻՆ


ևճ

Խորանագրոյք ևճ զլեռագիրք վիեննայի Միխիթարեանց մատենադարանին թ. 14 Աստուածաբանական, որ 524դ թղթին յիշատակարանին համեմատ՝ գրուած է Յովնանենու ևսկակոպոսէ Էմմանուէլ արքեպիսկոպոսին համար, ևճ 482դ ևճ 507դ թղթերու համեմատ՝	
Մեղքիսնչիկ քահանային մանրանկարուած է	1, 64, 73
Յատակագիծ վանաց Էջմիածնի	2
Յատակագիծ կաթնոստիկիին Էջմիածնի	3
Բարձրարանցոյի Պառչոսի ևճ Թեկղի յԷջմիածին	5
Յուսարեն արձանագրութիւն յԷջմիածին	7
Խոյակ յԷջմիածին	8
Մենագիր Խոյակին	9
Խորանագրոյք Միանելեի արքանի գրատան թ. 1 առևտարանին (յամկ 1278) թղ. 14ական	15
Զորոյք 989ին գրուած առևտարանին	18
Կանայք ի Գերեզմանի, ևզերագրոյք 989ին գրուած առևտարանին	19
Էրկրպագութիւն մարտոց, ևզերագրոյք 989ին գրուած առևտարանին	20
Կրկնակոյ Պրոքիանտի ի Պերլին	28
Ռաբարովի ժողովածոյին փղոսկրեայ կրկնակոյն ի Մոսկուս	37
Կարոյիցեան մանրանկար Գոդեսկոյիի առևտարանին	50
Զինամուշուռն զլեռագիր վիեննայի Միխիթարեանց մատենադարանին թ. 30 Ա. անագրեան	76
Զինամուշուռն զլեռագրեր անխարոյիցեան ձեռագրերի	78

ԼՈՒՍԱՏԻՊ ՏԱԽՏԱԿԵՐ

- Ա. Էջմիածնի առևտարանին փղոսկրեայ կոյը :
- Բ. — Գ. Ատրական մանրանկարք ի սկզբան Առևտարանին Էջմիածնի :
- Ե. — Զ. Ատրական մանրանկարք ի վերջն Առևտարանին Էջմիածնի :





ԷՋՄԻՏԻՈՒ




Եւ Մարատայ ստորոտն ձգուող Արասխայ դաշտա-
 վայրին զլեւաւոր երկու կէտերն են Արիւան, Համ-
 անուն կուսակալութեան մայրաքաղաքն, եւ Աջմիա-
 ծին, Հայոց Ասիոյ զինուորին ամրոտանիստը: Արիւան,
 Արասխայ դաշտին հիւսիսային եզերքը, իւր զլեւաւոր
 երկու յիշատակարանաց, այն է՝ Մարտարի Պալատին
 աւերակայն եւ դէպ ի նախագաւիթը բացուող լայնա-

կամար զլեւաւոր մղկթին պատճառաւ բոլորովն պարսկական նկարագիր ունի:
 Արիւանէ տասնեւութ վերստ հեռու է Աջմիածին. այս ճամբան չորս ժամ
 կը հասցնէ անապատ մը, որուն հորիզոնը միայն ի հարաւոյ բարձրացող
 Մարատայ ձիւնաթաղ դազաթը կ'ընդմիջէ: Բայն կողմ թուս աւազը դաշտ
 մ'աչաց առջև կ'ըլլէ, եւ վերը՝ հրատապ սուրբիչ երկինք մը: Սերթ ընդ
 մերթ այս անապատը կ'ընդհատեն ովասիաներ, դեգորայք, զորոնք կը հոփա-
 նաւորեն ցարասիք եւ եւկաղիպոսներ, Մարատան բղետը եւ Արասխ խառ-
 նուող առուակայ եզերքը: Բակէ ետեւ դարձեալ անապատ կը յաջորդէ:
 Վերջապէս հարաւ-արեւմտեան հորիզոնին վրայ զարարագոյն կանաչութեան
 մէջէն վեր բարձրացած կ'երևան երեք զանգակատուն՝ Խ-Ն-Ք-Լ-Է ըստ Տաճ-
 կաց, այսինքն՝ Արեք-Արեղեցիք կոչուած: Վանցելիք Ս. Հռիփսիմեայ եկե-
 ղեցւոյն քովէն, Վաղարշապատու երկայն սողողայն կ'երթանք կառք, եւ կը



հասնինք վերջապէս գեղին միւս ծայրը՝ Լճմիածնի Աթմողիկոսական Աճնաց բարձր պարսպորմը, որուն արեւմտեան կողմն, շուկային զիմաց, կը բացուի աւաղ դուռը:

Ար մասններ ընդարձակ նախադասիք մը (C), կը զիմենք շէնքին ձախակողման չորքին մէջ դանուող սնցք մը, որ «Վուսն Տրդատայ», կը կոչուի (f), եւ փողանցքի մը մէջէն (24) կը նշմարենք Մայր Եկեղեցին, Հայուն աղբային սրբավայրը: Եւս եկեղեցին յատկապէս «Լճմիածնին», կը կոչուի, այսինքն Լճք Ս՛խածնին, վասն զի ըստ վրայա-




ԹԱՏԱԿԱՆՔԻՑԻ ՎԼՆԱՅ ԷՋՄՐԱԾՆԻ

1. Եկեղեցի: 2. Աթմողիկոսին բնակարանը: 3. Միարանից սենեակներ: 4. Հին տպարան: 5. Սինոդի գիւմաստանը: 6. Մատենադարան: 7. Հաշարան: 8. Տպարան: 9. Միժեքանոց: 10. Փուս կամ հացարան: 11. Գորանոց: 12. Խցիկներ: 13. Ուխտաւորաց տուն: 14. Խոհանոց: 15. Միժեքանոց: 16. Մարազ: 17. Հումմարան ջրեղնի: 18. Երասայից բնակարան: 19. Ըսպան: 20. Վխոսներ եւ մարազներ: 21. Բաղնիք: 22. Հուկոց: 23. Տրամբար եւ իջնորդ: 24. Փողանցք: 25. Maedonald ցնդակեան մահարձանը: A. Վազարապատ: B. Գոմաստան: C. Նախադասիք: a. Հուկոյի դուռը: b. Վազարապատի դուռը: c. Մարի-Գուսն: d. Այլի-Գուսն: e. Բողանոց դուռը: f. Գուսն Տրդատայ:

բանական աւանդութեան՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Հայոց առաքիւն, այս տեղ տեսաւ «չայլն ահաւոր», որ կիջնար: Եկեղեցին կը շրջապատեն ձախ կողմէն՝ Միարանից բնակարանները (12), աջէն՝ Աղանատունը (7), Գրան կողմը՝ Աթմողիկոսին բնակարանը (2), իսկ եկեղեցւոյն յատակողման գաւիթը կը փակէ շէնքիւս չորքող շարք մը,

որուն ետեւը նախ Պամաստանք (B), եւ ապա նորաչէն Ճեմարանը կը բարձրանան:¹ Ըմբողջ են զիրքը բիւզանդեան վանքերու յատուկ յատակադիճն ունի, որուն համեմատացը եկեղեցին կամ «կաթնուղիէն», (καθολικόν) քառակուսի դաւթի մը մէջտեղն կը



ՅԱՏԱԿԱԳԻԹ ԿԱԹՈՒԴՈՒԿՆԵՐՆ ԷՋՄԻԱԾՆԻ

կենայ, զոր ամէն կողմանէ շէնքեր կը սրտանն, որ են վանականաց բնակարանք, ճաշարան, ուխտաւորաց սենեակներ եւ այլն:²

¹ Պատկերս, որուն վրայ Ճեմարանը շէնք, առնուած է. M. Brosset, Rapports sur un voyage archéologique dans la Géorgie etc. exécuté en 1847-1848. St. Pétersbourg 1851. Տախտակ յ-Գ. Գարձեայ Ամէն. Ը. Երաստ. Վենետ. 1890. էջ 216: Էստրատորդ թռչանակակէ (à vol d'oiseau, Vogelperspective) նկարուած է 1672ին Ի զիրս Voyage du Chevalier Chardin en Perse. Amsterdam 1735, I, pl. IX.

² Միայն Լաւրս. Իվերոն. Վաստպեցի. Ռուսիկոն. Քսենոփոս. եւ Կուսարմասիոս. Վանայ նման մեծ վանքեր Միջոս լեռան. Ս. Սարգիս Մոսկուայի քով. եւ այլ նման մեծ վանքեր Թրակիա (Ճաշարանք) եկեղեցւոյ մեկը զիմաց դաւթին մէջ կը փոխադրեն: Յուելուած Ի զիրս J. Schlosser, Die abendländischen Klosteranlagen des früheren Mittelalters. Wien, 1890, S 2ff.

Էջմիածնի հիմնարկու կը համարուի նոյն իսկ ինքն Ս. Գրիգոր Լուսաորիւ: Բայտաւնդու թեան՝ Տրդատայ զարձէն ետքը արդէն 302 ին եկեղեցւոյ հիմնադրար գրաւ այն աւղն, ուր արքունի պալատան քով Արտեմեայ զիւտար մեհեանը կանգնած էր, եւ ուր Սիւրբ Երեմիայի երեւեցաւ իրեն: ¹ Այս պատճառաւ արդի շինուածքին վրայ, որ յայտնապէս նոր շինութիւն է բայտաւնդն, այս հնագոյն հիմնարկութեան մնացորդները գտնել ջանացած են ոմանք, որոնց մէջ ամէնէն յատաճարձմ իզու Տիւրուս: ² Այս զիտնականը չէ թէ միայն միւս ճանապարհորդաց պէս յանձն առած է հիմնական որմունքն այն հնագոյնները կարծելու, այլ եւ հնագոյն եկեղեցին վերակազմելու ջանացած է, ³ որ բոլորովին կամայական է, ինչպէս նաեւ այն հետեւութիւնը՝ թէ, որովհետեւ ի բովանդակ Հայս միայն ասոր վրայ յունական արդեցութիւն կը կարծէ տեսնել, այս չէնքը Տրդատայ ժամանակի նախնական շինութիւնէն բլայ, որ Հոսով սնած բլայով հոռոմկական շինութեան ձեւեր մուծանելու ջանացած է՝ կրտ: ⁴

Վառակուսի ձեւով է եկեղեցւոյն յատակադիւր, ⁵ բայց ամէն կողմն դուրս կարկառուած բազմանկիւն կողակներով (apside), որոնց արեւելակողմանն ամէնէն քիչ դուրս զցուած է, վասն զի երկու կողմերէն ալ ուղղանկիւնի մատուռներով պատասպարուած է: Այս կենդրոնական, թուի լաւայի բեկորներէ շինուած արտաքին պարսպորմին կը համարատարանէ ներքին չէնքը: Չորս մոյլեր կը վերցրնեն գմբէթը, եւ հաւասարաթեւ խաչաձեւի մը չորս անկիւնները կեցած են, որուն վրայ առանցքներու ուղղութեամբ հովանաւոր կամարներ ձգուած են, իսկ անկիւնամասանց վրայ խաչակամարներ: Այս պայտաւնդայ յատակադիւրն ի բաց առեալ հիւսիսակողման, հարաւակողման եւ արեւմտեան կողակայ ⁶ բնիկ հայկական ձեւը՝ բոլորովին համեմատ է բիւզանդական գմբէթաւոր եկեղեցեաց առաջին կաղապարին, որ Հռուսիսիանու ժամանակ սխաւ գործածուիլ:

Բայց այս յատակադիւրն որ հաւանականապէս հնագոյն շինուածքէ մնացած է, չի վերաբերիր արեւմտեան կողմը կարմիր պորփիր բաննան քարէ շինուած զանգակատունը, որ 1654 ին շինուած աւելցուած է: Նաեւ եկեղեցւոյն հիմն վեր կը զած շինուածքը նոր է բոլորովին. վասն զի Շահ Բքաս 1604 ին եկեղեցին ու վանքը կործանեց եւ վրատակները Սպահանու մերձակայ Տուզա տարաւ՝ որ նոր եկեղեցի մը շինուի: Սովսէս վարդապետ, որ ետքէն կաթողիկոս կըլ, նորոգեց 1627 ին աւերակները: Իւր յաջորդը Փիլիպպոս շարունակեց գործը, զոր 1682 ին լրացուց Աղեղապար կաթողիկոս: Այս ժամանակէն ետքը զոյն փոփոխութիւնը միայն կըլ յիշուի: ⁷

Վարդապետ մնաց իմ ջանքս հնագոյն քրիստոնէութեան դարերէն անկախ բնիկ հայ գեղարուեստական յիշատակարաններ գտնելու հոս: Ինչպէս հաւատանք քանի մը նշխարներ

¹ C. Ritter, Erdkunde, X, S. 528.

² Dubois de Montpéroux, Voyage autour du Caucase. Paris 1839, III, S. 371.

³ Անք. Տիւրուսի, Շար. Գ. տախտակ. Ի. նկար 1.

⁴ Այս վերջին կարծեաց հիմն է Գառնիի աւերակները, որոնք յունական սաճարի մը մնացորդն են: Հոս կրտուի թէ Տրդատ իւր քեւ համար պալատ մը շինեց: Պատկերը Տիւրու. Dubois, Atlas Sér. III, pl. VII եւ Ա. իշխան, անգ. էջ 364:

⁵ Պատկերադիւր մը հրատարակեց նախ Chardin, անգ. I, pl. X. Աւելի լաւ է Dubois, Atlas III, pl. VII, fig. 3; Brosset, անգ. Atlas, pl. XVI, որով առած էմ նկարու: Հմտ. նաեւ Grimm, Monuments d'arch. en Géorgie etc. Pétersbourg, 1859 ff. եւ Ա. իշխան, անգ. էջ 217:

⁶ Հմտ. Schnaase, Geschichte der bild. Künste. 2. Aufl. III, S. 327:

⁷ Բայտաւնդ, անգ. III, p. 371; Grimm, անգ. էջ 9; Ritter, Erdkunde, X, S. 530. Հմտ. Շահխաթունեանց. Պորտաղբուրի ինչ հիմնարկ եւ հնիկ գրաւուաց: Էջմիածնի, 1842. կրկու հատոր:

գտայ յունական արձանագրութեամբ եւ արուեստով, որ իրենց նկարագրին պատճառաւ այս ժամանակէն են, եւ որոնք զրոցս մարմնոյն մէջ հետազօտելի Վշմիածնի Վ. Ետարանին հետ մեկտեղ պայծառ լոյս մը կը սփռեն այն աղբերաց վրայ, որոնցմէ բղխած զարգացած է քրիստոնեայ Հայոց քաղաքակրթութիւնը:

Պոռէ,¹ որ 1838 ին այց ելաւ վանացս, ուստի եւ եկեղեցին արդի վեճակին մէջ տեսաւ, գասու արտաքին կողմն երկու յոյն արձանագրութիւններ կը յիշէ, որոնց գրութեան կերպն, կրօտ, քրիստոնէական առաջին դարերը մասնանիշ կ'ընէ: Մէկուն վրայ, կրօտ, աղօթքներ կան եւ ննջեցեաց անուանք. միւսին վրայ Պաւղոս եւ Թեկղ կը յիշուին: Բա Պոռէի կարծեաց՝ այս արձանագրութիւնք կ'ապացուցանեն նախ՝ որ նաեւ Ս. Գրիգորի գալէն յառաջ, որ բովանդակ ազգը վերջնականապէս դարձուց, այս կողմերը քրիստոնէութիւնը տարածուած էր. եւ երկրորդ՝ որ յոյն լեզուն նոյն ատեն կը գործածուէր արարողութեանց մէջ առօրեային հետ հաստատարապէս, զոր օմանք մի միայն գործածութեան մէջ կը կարծէին: Ախիթէր² այս նախագասու թիւններն ընդունեցաւ եւ ասոնց հետ կապեց նախ Վայմանէն³ ծանուցուած այն կարծիքը՝ իբր թէ ամենէն հնագոյն հայ պատմագիրն Վզաթանգեղոս նախ յունարէն գրած է,³ եւ թէ Վթէէքի, Բիւզանդիոնի եւ այլ տեղեաց յունական զարոյցները կը զիմէին հայ երիտասարդը: Վյս վերջէն տեղեկութիւնն, զոր կը հաստատեն Պորիւն եւ Կորնեսայի, ուղղէ է, եւ զոր պիտի գործածենք յետոյ: Բայց Պոռէի հաստատածները շատ կարեւոր ուղղութեանց կարօտ են:

Պոռէ միայն այն երկու արձանագրութիւնքը կրնայ նկարագրած ըլլայ, զոր նաեւ եւ տեսայ եկեղեցոյն հիւսիս-արեւելեան որմնոյն վրայ բաւական վերը՝ որմնոյն մէջ աղուցուած: Վռաջներ, որուն վրայ Պաւղոս եւ Թեկղ կը յիշուին, 0-65 մեզր լայն եւ 0-47 մեզր բարձր քարի մը վրայ է, որ յոնիական սեամբ մ'երկու կամարի բաժնուած է:⁵



ՈՒՐՉՈՒՐԱՆԵՆԿԱԿ ՊԵՆԿՈՍԻ ԵՒ ԹԵԿՂԻ ՅԷՋՄՈՒՆԻՆ

Վշակոզման խորշին մէջ բարձրաքանդակ մը կայ երկայնաճեր եւ երկայնամօրուս մարդու մը, կարճ պատմութեան հազած, երեսն դէպ ի ձախակողմն՝ ծաւառոյ աթոռոց վրայ նստած, երկու ձեռքերը կարկառած ձախ կողմ, ուր երկրորդ խորշին մէջ՝ անմօրուս դէմքով մէկը քանդակուած է կարճաճեր, երկայն եւ գօտեպինդ պատմութեան մը հազած, երեսը դէպ ի աջ ուղղուած եւ ձեռքը կուրծքին վրայ է, ստող անձին զիւրուն կողմը գրուած է

ΠΑΥΛΟΣ, իսկ կեցողին՝ ΘΕΚΛΑ. Վրանդակն այնչափ յոռի է՝ որ ի սկզբան նոր

¹ E. Boré, Correspondance et mémoires d'un voyageur d'Orient. Paris 1840, p. 41ff.
² ԱՅդ. էջ 531.
³ C. F. Neumann, Über armenische Sprache und Literatur, ի թերթին Hermes Jahrbuch der Literatur. Bd. XXXIII, (1829). S. 159, 194.
⁴ Վյս կարծեաց զէմ՝ գրեց Պամբճեան ի Հնդկ-Վճարեայ, 1889. Թիւ 2. Վզաթանգեղոս կը գործածէ զԲարսեղ Մեծ, ի է գարու կ'աղբեր եւ հայերէն գրած է:
⁵ Պատկերս է բոտ Հաստատութեանս, էջ 20. բայց սենս խոյսիւր բնագրին համեմատ ուղղած եմ: Հմմտ. Միշան, անգ. էջ 213:

նմանողութիւն մը կարծեցի, ինչպէս վերջին դարուց ամէն յոյն եկեղեցեաց մէջ կը գրաներ, բայց միշտ աւելի յաջողած: Մտայն բայ ի այն պարագայէն՝ որ քանդակ արդէն ժՎ դարուն եկեղեցոյս որոնց մէջ աղուցուած էր, նաև նկարիս առարկան նորագոյն արուեստին խորթ է: Ե.յս առարկան կը պակիս Եթոս լեւան՝ Կիարաց-մասնին մէջ թէ Didronի հրատարակութեան¹ եւ թէ Ե. Կոստանդինոպոլիս Ծիրացեալ խմբագրութեան մէջ:² Ինչհասկառան մատենագրական աղբիւրներ, մանաւանդ Պ. եւ Լ. դարու,³ փոքրիկ, առիտակ մը բրիտանական թանգարանի (Garr. 446, 11)⁴ եւ Եթոս լեւան Եմե-նակալի Ելլակերպութիւն եկեղեցոյն ժՎ դարէն՝ Կոր Կոստարանի ձեռագրին 63³ թղթոյն վրայի մանրանկարը — ձախ կողմը Պաւղոս՝ որ կը գրէ, աջ կողմը թեկղ զարմացած կը նայի պատուհանէ մը — կը ցուցնեն՝ որ հին բիւզանդեան ժամանակն այս նիւթը սիրելի էր: Իսկ ի 1 ընտան բարձրաքանդակի մը մէջ Պաւղոս նստած է աջ կողմն երեսն ի ձախ, ինչպէս Եթմիածնի քանդակին վրայ, իսկ թեկղ ձախ կողմն է: Ուստի ընդհանուր ձեւը նոյն է Եթմիածնի քանդակին, թէ եւ մանրամասնութեանց մէջ տարբերութիւնը կան եւ ամբողջն աւելի ազնիւ քանդակուած է: Չենք կրնար ուրեմն Եթմիածնի քանդակը Լ. կամ Օ. դարէն շատ ետքը ձգել, ինչպէս եւ ոչ 1 ընտանինը: Ե.յս ժամանակին հետ համեմատ է եւ այն պարագայն՝ որ երկու խորշերն իրարմէ բաժնող սեւան յոնիական խոյակն ունի նաև դարեւանոց մը, զոր ամէնէն կանուխ միայն Ռ.բոստէն (400—410) շինուած Ռաւեննայի S. Giovanni in Fonte կաթողիկոսաց մկրտարանին մէջ կրցած ենք գտնել: Ենցողակի յիշենք՝ որ Պաւղոսի եւ թեկղի խօսակցութեան այս հայկական քանդակը, նոյնպէս ուրիշ փոքրատիական կիճեաց բարձրաքանդակ մ'որ Ենանիայի պատժուիրը կը ներկայացնեն, եւ զոր ուրիշ առթիւս պիտի հրատարակեմ, կը ջնեն Պիքէրի այն կարծիքը թէ հարուային-գաղղիական աղբեղութիւն կրած են զլիւս-որ առաքելոց կենաց արկածները ներկայացնող այն պատկերները, զորոնք Պրէշնայի քանդակաց գպոցին դրած կը համարին⁵:

Լքրկորոց արձանագրութիւնը, որ ըստ Պոսէի ննջեցելոց սնուանք եւ աղօթք կը կրէ, ի հնուց ծանօթ է եւ հրատարակուած նախ Տիւպուայէ:⁶ Ե.յս արձանագրութեան պատկերը հոս վերստին կը դնեմ, վասն զի ընդհանրապէս թէ նկարն եւ թէ արձանագրութիւնը սխալներով հրատարակուած է: Վանդակագրան է 0.68 մեղր երկայն 0.52 մեղր բարձր:

Երձանագրութեան վերին մասը՝ բոլորակի մը մէջ, ուր գրուած է ΒΟΗΘΙΑΝ-ΤΑΣΤΟΥΣΕΥΧΟΜΕΝΟΥΣ-ΕΝΤΗΕΚΑΗ — արձանագրութիւնը, կը գտնենք Քրուսոգրամմա Խաչ Քը (crux monogrammatica) հաւասարութեւ եւ Քի ծայրը դուրս դարձած: Վրիստտի այս մենագրին երկու կողմն վերը գրուած է ΓΕΗ | ΣΟΥ, վարի կողմը՝ ΖΙΒΙ | ΘΑΙΝ. Վանդակաաւստակին վերի երկու անկիւններն երկու աղւանի կայ, որ հաւասար գրից մէջ՝ բոլորակին շրջանակը կը կայցնէ: Չախ կողման ա-

¹ Zump. Schäfer, էջ 348 ff.

² էջ 'Αθήναις 1885 σ. 217 κτλ.

³ Joh. Fieker, Die Darstellung der Apostel in der altchristlichen Kunst. Leipzig 1887, S. 38.

⁴ Garrucci, Storia dell'arte cristiana Tav. 446, fig. 11.

⁵ F. Fieker, էջ 147.

⁶ Ենց. Atlas Sér. III, pl. VII, fig. 5. Հմեմ. բնագիր III, էջ 376; Brosset, անց. էջ 16; C. I. Gr. IV, Nr. 8915, ուր գրուած է այս ծանօթութիւնը. «Chersonesi, ut videtur, Tanricae. E schedis Dubois, in quibus quo loco repertus fuerit titulus, non legitur adnotatum.» Հաշտաթ ունեան, էջ 19: Եիշան, էջ 211:

զանոյն ներքեւ հան այս սողերը՝ **KYPI | ΕΛΕΗΣΟΝ | ΤΟΝ ΔΟΥΛΟΝ | ΣΟΥ**
ΑΡΧΙΑΝ, աջ կողմն վարը՝ **K | KYEΛΕ | ΕΛΠΗ | ΔΙΝ**։ Խաչանշանին տակը կայ
 «նիստը որոհորսի մը» (Tabula ansata) երկբողուն արձանագրութեամբ՝ **ΔΑΝΗΛΑ**
ΤΙΡΕΡ | ΓΑΡΙΚΙΝΙΣ։ — Շրջանակին մէջ գրուած աղօթքին, — որ է **Βοίξαι πάντας**
τους εχθόμενους ἐν τῇ ἐκκλησίᾳ (օրնեա ամենայն աղօթողաց յեկեղեցւոջ), — ենթակայ
 մը կը պահուի։ Կարելի էր որ Վրիտանոսի մենագիրը նշանակէր այդ ենթական։ բայց եւ կար-
 ծեւ՝ որ խաչին թեւին վրայ եղած գրութիւնը կը բովանդակէ այն ենթական։ Տիւրքու
 շէյխուսն օրինակած է սխարմանը, ուստի եւ մեկնութիւն մը տալէն կը հրատարի։ Այդն-
 պէս Վրիտանոսի Corpusի մէջ, որ սաւառին Լեդսոս անունը կը մեկնուի այսպէս։



ՅՈՒՆԱՆԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԷԶՄԻԱՅԻՆ


՝Դ(դսօս)[է] ի(օ)է [Տ](եօ)ծ. (Յիսուս որդի Ըստուծոյ)։ Եւեղան կը կարգայ «որորմեա
 Չուիթայ», ՝Պրոսէ ուղղութեամբ ընդունեցաւ որ Լեդսոս գրուած է փոխանակ ՝Դսօս
 գրելու, իսկ շէյխուսն անցայտ անձնաւորութիւն մը, որուն անունն Լջմիւսանի տալ-
 րանի նորադոյն արձանագրութեան մը մէջ կը գտնուի «Չիպիտայ», (Zipitai) ձեւով։ Ես
 կը յաւերամբ լով որ Չուիթայ անունը իրրեւ քահանայի անուն կը յիշէ նոյն իսկ Խո-
 բենացի (Պ. գլ. լե.) եւ Փաւստոս Բուզանդ (Պ. գլ. ճե—ճէ)։ Ըստ կրնայ այն քա-
 հանային անունն բլրայ, որուն էր եկեղեցին՝ ուր արձանագրութիւնը գրուեցաւ։ Ընդուշտ
 այս աղօթքին մէջ չնշուի) էլ լեդսոս լօժ ձօնուօր սօս՝ *Αρχία* (Տէր որորմեա ճառագի
 քում Երբեց), ինչպէս նաեւ ասոր գիտնոյն եղող խօսքին մէջ, զոր եւ չ(աի) չի(զե)
 էլէ(չսօս)՝ *Ελπίδιον* (եւ Տէր որորմեա Աշխիւցայ), կը կարգամ, յիշուած են երկու
 ամուսինը, որոնց յիշատակին համար դրին այս քարաքանդակը *Δανίηλ*, *Τίρερ*, *Γαρικινίς*
 (Պանիէլ, Տիրէր, Գարիկինիս)։ Բոս Պրոսէի Տէրէր¹ անունն ի Վրանաքեւո գտնուած 1266
 սարեց քարէ կօպմ՝ արձանագրութեան մէջ ալ կը գտնուի։ Բայց աստի Տէր բառին հետ
 նմանութիւն ունի։ Տիւրքու եւ Ռիթթիէր *Γαρικινίς* անունը կու գէին մեկնել իրր *Արքի*

¹ C. I. Gr. 8915 ասոր տեղ գրուած է լով PE, եւ լրացուած այսպէս՝ [π]α[ρ]α[β]ε[τ]ε[ρ]ο[ս] δ[.]

քաղաքի անունը, և ասիէ կը հետեւցնէին արձանագրութեան շատ հին բնույթը: Բայց հաւանականացոյն Պարթևներն անունն է և ասորական վերջաւորութեամբ:

Նաև այս արձանագրութիւնը շենք կրնար 302 էն աւելի հին համարիլ, ինչպէս Պոուէ կուզէ: Արտչէ է այս նկատմամբ Վրիտտոսի մենագիրը, որ այսպիսի ասանցիկ ուղղութեամբ ասածն անգամ 355 ին՝ արձանագրութեան մը մէջ (Inscr. I 75, Nr. 125) կը գտնենք:¹ Ս. Պարսոյ մէջ այս անսահէն ամենահինը հազել 390 ին թ. հոգոս Սեծին Ոսկերան վրայ կրնանք գտնել: Արկրորդ անգամ կը գտնենք նոյնը թ. հոգոս Բ ի Վրկադեայ համար կանգնած սեան վրայ, որմէ մնացորդ մը կայ Ս. Վրէդպար: Ե. յս երկու յիշատակարանք, որ ցայժմ հրատարակեալ չեն, յաջորդ գործոցս մէջ պիտի ներկայացունին: Ա. որովհետև չենք կրնար ընդունիլ՝ թէ մենագիրն ի Հայոս նախ սկսած է քան ի Հռոմ և Ս. Պարթև, ուստի արձանագրութեան յորինման ժամանակը պէտք է մինչև և կամ Գ. դար յետ մղել:

Ուստի այս երկու արձանագրութիւնք չեն ապացուցաներ, ինչպէս Պոուէ և Ռիվերէր կարծեցին, թէ քրիստոնէութիւնը Վրիկոր Մ. սասորչէն յատալ ի Հայոս մտաւ գտած էր: Մանաւանդ թէ կը ցուցնեն՝ որ նաև Ս. Երուսղայ վրայ գիտէն ետքը (իր



ԽՈՅԱԿ ՅԵՂՄԻՍԻՆ

406) յոյն լեզուն ու գրութիւնը սովորական էր ի Հայոս: Միտ գտնենք նաև՝ որ ննջիկոյ երկուքը՝ *Αρχίαι* և *Ελπίς* յունական, իսկ մնացեալ անձինք *Ζιβιδαι*, *Τίφει*, *Γαριζαί* հայ անուն ունին: Ե. յս ամէնը կը ցուցնեն Հայոց և Հունաց սերտ հազորակցութիւնը նաև և կամ Գ. դարուն, և քիչ մ'ետքը զարմանալի պիտի լերկուց մեղն որ նոյն իսկ Վճմիրաճնի մայր եկեղեցին յետյուստինեան բիզանդական յատակադիժ ունի:


Ե. յս նկատմամբ մեծ նշանակութիւն ունին այն չորս նշանաւոր խոյակները, որոնց ցայտօր ճամբորդ մը մտալիր եղած չէ, և որոնք Վճմիրաճնի Ղեմարանին պարտիզազութին մէջ կը կենան: Ետնց ամէնուն ձևեր նոյն է, և նոյն իսկ իրենց մեծութեամբը աչքի կը զարնեն: Խոյակին յարկը 0.95 մեզր կողմնական երկայնութիւն ունի, իսկ բարձրու-

¹ Հմտ. Kraus, Real-Enc II, S. 227.

Թիւնն է մինչև վարի կտրած ծայրը՝ 0.78 մկր: Զեւին նայելով՝ առանձին տեսակ մը բխումնդական կողմաձև կոյակներ են: Վ սան զի ներքին մասն է երեքկուղան փուրուածքներով Տիւսիէն կողմ մը, որուն վրայ կը հանգչի յանխան, սաւար եւ հաստարեւտ խոյակ մը: Կոյակին որբածին պատուածքները կը կապէ իրարու բարբա-կաձևէ գարձած ձուարդը մը, որուն ներքեւ պատկերազիրներ (médaillon) ազու-ցուած են, որոնց յաւաճակողմանին վրայ մենազիր քանդակուած է, իսկ յետակող-մանին վրայ կացար որ խոչ մը: Կակ երկու կողմերը տերեւարդը զրուարած որբածոյ բարձաձևեր կը կազմեն: Ըսոնց վրայ նստած է ցած դարեւանդ (imposte) մը՝ առ ի շեղ կողմնակի երեսներով:

Բխումնդական խոյակի զարգացումն, ինչպէս միտք ունիմ ապացուցանելու ուրիշ գործքի մը մէջ, որուն համար ընդարձակ եւ մասամբ անտիպ նիւթ հաւարած ունիմ, կը ցուցնէ այսպիսի կողմաձև կոյակաց համար հասանականութեամբ՝ թէ այս ձևն ուրիշ բան չէ, բայց ի՞նչ է ճշտաբնիմու ճարտարապետին ձեռքով եղած փոփոխու-թիւն մը թէկոյանն խոյակին, որուն կանոնն էր բաղադրեւ նախաձևէ մը: Ելանիթի տերեւոց սեղ հնարուեցաւ կողմաձևէ մը. որբածոյ պատուածքներուն սեղ կողմին եղբքն անանիթներ գրուեցան, որոնք յարկը կը բաւան: Ըսի, յայտնի է որ Էջմիածնի այս խոյակները սեպհական ձև մ'ունին: Արդիպարդը յայտնի կը ցուցնէ որ այս խոյակներն ճշտաբնիմու ժամանակին կանուխ չեն, բայց որբածոյ պատուածքը պա-հերմի՞ այս մասին եզական օրինակ են, որչափ գիտեմ:

Ըսյ չարս խոյակաց մենազիրը երկու ձև ունին, որ է այս՝



ՄԵՆԱԶԻՐԸ ԽՈՅԿԱԿԱՆ

Ըսաջին ձևը լոկ մի անգամ, երկրորդն երեք անգամ կը գործածուի: Մեկու-թիւնը տարակուսի աակ չի կրնար իյնալ. առաջինն է Ναυσου (Նարսու) երկրորդը Καπολιου (կաթողիկու): Հայ հայրապետաց մէջ յունական Καπολιου (կաթողի-կու) տիտղոս կրելու սխիլէն ի վեր հնադոյն ժամանակներն երեք կաթողիկուսեք կան “Ներսէս, անուամբ, այսինքն՝ Ներսէս Ը ՄԵԾ (340—374)՝ Ներսէս Բ (524—533) եւ Ներսէս Գ Շինող (630—661):¹ Ժամանակին նայելով՝ միայն վերջներ հաս կրնոյ ըլլալ: Ներսէս Բ-ի վարչութեան ժամանակը կանուխ է եւ ճշտաբնիմու գա-հակալութեան առաջին տարիները կը հանդիպի, երբ կողմախոյակը դեռ չէր իսկ գտնուած անշուշտ, զոնէ չի գործածուիր Մոփիաց եկեղեցոյն ներքին կողմը, նոյնպէս Սարգսի եւ Բարսի եկեղեցիները: Իսկ Ներսէս Գ-ի ոչ միայն ժամանակը յարմար է, այլ նաեւ “Շինող, մականունը զինքը մասնանիշ կրնէ:

¹ Ըստ J. Saint-Martin, Mémoires hist. et géogr. Paris 1818, ի շարս հայրապետաց:

Ներսէս Չօփի եւ իւր շինութեանց վրայ մանրամասն անդեկուծ թիւններ պահած է Սերբուս,¹ որ եպիսկոպոս էր եւ Վրասայ ժողովոյն (645) մէջ կը յիշուի: Իւր պատմութեան մէջ, որ 660 տարին կը հասնի,² այս Աթուղիկոսին վրայ կը գրէ ի մէջ այլոց. «Ներսէս... անկալ ի մանկութենէ յաշխարհին Հրոնաց եւ ուսնալ զԵրուսաղէմ եւ զԳարուսթիսն և շրջնալ ընդ աշխարհս զօրու կարգօք զինուո՞րութեան:»,³

Իւր զանգիտնի հետ ունեցած այս կապը շուտով առիթ տուած է նաև սոսակաւ պէլաց յորինման: Եւսպիւս Ժ զարուս վերջերր Մովսէս Աղարանկատուացոյ շարունակողը կը գրէ.⁴ «Ի նորին (Արտասնդնի Բ, 641—668.) յինն եւ ի տասն ամին նափ կաթուղիկոս Հայոց աէր՝ Ներսէս ամն քանն. եւ հայ թուականն հարիւր եւ մասասն էր:»⁵ «Սա էր հայրազիւր նորին Արտասնդնի եւ զանձիւք նորա շինեաց զբազմապայծառ փարսին ընմաւոր հօտից ի Վաղարշուղաշափ ի սուրբն Չօփիոք:»⁶ եւ ի նաւակատար կոչեաց զԹագաւորն Հրոնոնց, որ յաւէթ հիսցեալ ընդ շինուածն՝ եւ հրաման շինողացն գնալ զգինի իւր, զի գնոյնանէն յարմարեցէ ի պալատանն: Աչ ոչ ժամանեալ գնալ ի տուն իւր ի ճանապարհին վախճանէր:», Սերբուսի տուած անդեկուծ թիւնն ու Մովսիսի Աղարանկատուացոյ շարունակողին խօսքը կը ցուցնեն առ նուազն, որ Ներսէս Իւր զանգիտնի հետ սերտ հաղորդակցութիւն ունէր, եւ անշուշտ առիթ ալ ունեցած էր՝ բնականական ճարտարապետութիւնը ճանչնալու: Այս ան ի հարկէ յիշականին Մովսիսի պատմածին ճշդիւ հակասակն եղած պիտի ըլլայ, այսինքն՝ Ներսէս անշուշտ Հրոնաստանէն բերել տուած էր ճարտարապետներ: Եսոր ապացոյց են մեր այս խոյակները, որոնց ձեւն իրենց յունական մենագրոյն հետ՝ այսպիսի աղբիւր մը կ'ակնարկեն:

Խոյակաց հոս զպաւ կերպին վրայ այս անդեկուծ թիւնը տուաւ ինձ Տր. Վարամեանց՝ Ուսուցիչ Էջմիածնի ճեմարանին. «Աս ճեմարանի աշակերտ էի 1875ին, երբ այս խոյակաց երկուքը, որ երկար ժամանակ փնթին հարաւային դաւթին մէջ էին, ճեմարանին առջեւ բերուեցան: Այն տարին հոս բերին միւս երկուքն ալ, բայց ոչ թէ Աղարշուպատէն, այլ Էջմիածնէն շորս վերստ հեռու Արիւսան տանող ճամբուն ալ կողմն եղող շանգած Էջիզդեցի, կոչուած անդէն:» Եւս կարևոր անդեկուծ թիւնն միջնորդութեամբ կրնանք որոշել թէ որ շինութեան կը վերաբերէին այս խոյակները: Արքայ յիշած Սերբուս Ներսէս Չօփի շինութեանց վրայ կը գրէ. «Հայնմ՝ ժամանակի արկ ի միտս իւր Աթուղիկոսն Հայոց Ներսէս շինել իւր բնակութիւն մերձ առ սուրբ եկեղեցեացն՝ որ ի Վաղարշուպատս քաղաքին ի վերայ ճանապարհին՝ յորում ասնն ընդ առաջ եղև թագաւորն

* Անշուշտ ընթերցումի՝ «ի Քաղաքաղաշափ» (գտարն Գրիգոր... ինչպս աղղէն ժ զարուն կը կոչուէր այս եկեղեցին):

Ժ. Թ. Ա. Գ. Բ.

¹ Հոս սկսելով հայ պատմագրական աղբիւրները գործածել, պարտք կը համարեմ ի սրտէ շնորհակալութիւն յայտնել Հ. Գալեմբեարեան Սերբուսին Վիսիմ արեան Սարգսեանին, որ անձնանու էր եւ սիրալիք եւ անգեղամբ օգնեց ինձ թարգմանելու թէ այլ ուս ինձ ծանօթ եւ թէ իւր իսկ ցուցած աղբիւրները:

² Հմմտ. Լ. Երիզանդեցի. Ժամանակագրութիւն, Պետք. 1867, էջ 37. H. Hübschmann, zur Geschichte Armeniens und der ersten Kriege der Araber, S. 7.

³ Սերբուս. հրո. Պատմական, Պետք. 1870, էջ 140:

⁴ Պատմութիւն Արտասնդնի, Գիրք Գ. գլ. ԺԵ. (տպ. Մոսկ. 1860, էջ 256): Առաջին երկու գրքերը միջև 685 կը հասնին, երրորդը 980—1000 ուրիշ շարունակողէ մը գրուած է:

⁵ Արտասնդնի գրանցելու 197 տարին (660) եւ Ներսէսի 207 տարին (661) չեն միարան ճժԼ = 662 թուականին:

«Տրդատ սրբոյն Վարդգորի: Ը ինեաց անդ եւ եկեղեցի մի յանուն երկնաւոր զուարթնոցն,
 «որոյ՝ երեւեալ ի տեւեան սրբոյն Վարդգորի բազմութիւն երկնաւոր զօրացն, եւ շինեաց
 «եկեղեցին բարձր շինուածովք՝ եւ շքեաց զարմանալեօր, արժանի աստուածային պատուոյն՝
 «որում նուիրեացն:»,¹ Արիշ տեղ մ'ալ կը գրէ. «Այս ապա յետ վեցերորդի ամի Հաս-
 «րածանացն զարձաւ (Ներսէս) անդրէն ի տեղեւ իւր, եւ Հաստատեցաւ յաթնու կաթնու-
 «ղեկոսութեան, փութայր կատարել զշինուած եկեղեցոյն՝ զոր շինեաց ի վերայ սղող-
 «տային Վաղարշապատ քաղաքի:»,² Իսկամ յապարուսն կը գրէ, Յովհաննէս Կաթնու-
 «ղեկոս, «Վպա շինէ (Ներսէս Վ) տաճար սրբութեան եւ ի վերայ վերապի սրբոյն Վարդ-
 «գորի, ուր ի մէջ թունաւորացն թաղեալ՝ աստիւթանուէրն այլն Մատուծոյ զկամակոր
 «վեշտային ծախճախեաց զգլուխ . . . : Վարձեալ յուսացեալ ի Տէր եւ ոչ աճեալ զմտաւ
 «զկրթական արշաւան շինիցն թշնամեաց՝ զեղեցի իմն մուրթեամբ գնէ ապա շինն մեծ
 «եւ Հրաշալի բազմապայծառ յարի տանն Մատուծոյ ըստ անուանակրութեան սրբոյն
 «Վարդգորի՝ յանձն առնելով զկատարումն իմաստութեան շինողին Վրիտաոսի . . . Ի ներքոյ
 «շէնոյ ռեանոյ հասարակութեամբ բաժանեալ գնէ զնշխարս սեկերաց սրբոյն Վարդգորի առ ի
 «անշուշտ մնացականութեամբ պահել զանձոյն երկնաւորի ի զերչաց սպականչաց եւ
 «ի պարծանս Հաստոյ քրիստոնէական կարգաց:»,³

Հետ խօսքն է այլեւայլ շինութեանց վրայ, որոնք Ներսէս Վ Կաթնուղեկոսին «Ը ի-
 նոց, յորձորձու մը տուին: Ըրդէն Սոփսէս Կազանկատուացոյ շարունակողը կը յիշէ
 «զբազմապայծառ եկեղեցին բանաւոր Հօսիս Վրիտաոսի:», «այն անուամբ կը յիշէ նաեւ
 Յովհաննէս Կաթնուղեկոս, բայց կը յաւելու այս մեծագին ծանօթութիւնը՝ թէ Ս. Վարդ-
 «գորի մասունքն կը պահուէին շէն հասարակութեամբ: Մտով պէտք ենք ըսել
 թէ նաեւ այս եկեղեցոյն կենդանական յատակադիւր նոյն էր Լճմիածնի մայր եկեղեցոյն
 Հետ: Ըյս սենաց վրայ կ'աւանդուր զմրեթը: Սեր վերը նկարագրած շորս խոյակներն
 իրենց անհեթեթ մեծութեան պատճառաւ՝ դժուարաւ կրնային սակէ զատ ուրիշ նպա-
 «տակաւ յորինուած ըլլալ: Ըաց աստի՛ Ներսիսի մենագիրը կը կրեն. ուստի ներքին է
 զասոնք նշխար կարծել մնացած այն եկեղեցիէն բանաւոր Հօսիս Վրիտաոսի: Օպայ կը
 Հաստատէ նաեւ այն պարագայն, որ Ըրշան՝ որուն անձանօթ են այս խոյակները, Ներ-
 «սիսի Ը ինոցի կատուցած այս եկեղեցոյ տեղը կը Համարի այն՝ «Հանգած Ըկեղեցի», կո-
 «չուած վայրը, որմէ բերուած են խոյակացս երկուքն ըստ տեղեկութեան Տր. Վարաւ
 «եանցի: Ըյս եկեղեցոյն, որ ըստ Սերէոսի Լարկնաւոր Օւարթնոց նուիրեալ էր, իսկ
 ըստ Յովհաննէս Կաթնուղեկոսի՝ Ս. Վարդգորի, եւ այս՝ Հասանականազոյն սրբոյն նշխա-
 «րաց հոն փոխադրուելէն ետքը, ինչպէս Ըրշան կը կարծէ, կը պատմէ Մխիթար Ըրթի-
 «մանցի յՎ. զարուսն, թէ այս աշխարհահարաշք եկեղեցին կործանեցին Վրարացիք՝ անշուշտ
 յապարուսն. վասն զի ըստ թմայիլ Ըրճրունոյ Վրդգոր Վ Կաթնուղեկոսը (876—97)
 «գետ կանգուն գտաւ, իսկ Ըտողիկ, որուն պատմութիւնը մինչեւ 1004 կը Հասնի, ար-
 «դէն կործանած կը յիշէ: Վազիկ 1001ին այս եկեղեցոյն նման մեծ եկեղեցի մը շինել
 «տուաւ յԸնի, որ կործանեցաւ երբ Ըրթի Ըրան տուաւ քաղաքը (1064), եւ այսօր

¹ Սերէոս. անոց. էջ 118—9.

² Նոյն անոց. էջ 150—1.

³ Յովհաննէս Կաթնուղեկոս, Պատմութիւն Հայոց, Մոսկուա, 1853, էջ 48.

աւերակ կը կենայ:¹ Բայց նախնականին աւերակաց գանուած տեղը Վազարչապատոյ մօտ՝ կը կոչուի մինչև ցայսօր “Հանգած Եկեղեցի”,² այսինքն՝ կործանեալ:

Ըզր որովհետև այս եկեղեցին կենդրոնական յատակադիմ մ'ունէր, եւ խոյաներէն չարկելով՝ նաև բխրանդեան մանրամասնական ձևեր, կրնանք նոյնն ըսել նաև Կաթնուղեկոտական փանայ հնագոյն եկեղեցւոյն համար: Իբրց ալ յատակադիմը բխրանդեան գմբէթաւոր եկեղեցւոյն է: Բայ Արիմիի եւ Ռիթիթէրի³ հաւաքած տեղեկութեանց՝ եկեղեցւոյս պատմութեան, այն գիտենք որ Ս. Պարիպրէ հիմնուած հնագոյն շինութիւնը կործանեց Շապուհ Բ 380 ին եւ յետոյ Վահան Սամկոնեան նորոգեց: Կաթը 483 ին ուրիշ Վահան մը, որ մարդպան եղաւ, ծայրէ ի ծայր նորոգեց երկրորդ անգամ, ինչպէս կը պատմէ Պարպրէ Փարպեցի: Ըստիկոց հայրապետական եկեղեցւոյն քովն Սուրենայ Վահանայ փանահայր եղած կը յիշուի: Ըստ հիմնարկութիւնը ոմանք՝ Աերսէս Բ-ի, այլք՝ Աերսէս Պ-ի ասան կը դնեն: Կոմիտաս Կաթողեկոս (617—25) եկեղեցւոյն փայտեայ յարկը 618 ին քարէ գմբէթի փոխել առաւ: Բայս Աերսէս Պ նորոգեց յետոյ կրած փոփոխութիւնքը վերն յիշեցինք:

Իջմիածնի այս շինութեանց նայելով՝ հայ գեղարուեստին զարգացման մասին այս կենայ ըսուիլ: Ընդ այդպայն որ հռոմեական ժամանակէն մնացեալ մի միայն շինութեան, այսինքն՝ Պատնիի պալատան կամ մեհենին աւերակաց զուտ յոնիական ձև ունենայր, եւ այն՝ որ ուրիշ յիշատակարանք կը պատին այս ժամանակէն, կը ստիպին զվեց հետևեցնելու՝ որ Հայք նախքրիստոսական ժամանակն ուրոյն գեղարուեստական ոճ մը հնարած չէին, մանաւանդ թէ իրենց զրացի Աստանեան երկիրներէն աւելի՝ ենթակայ էին հռոմեական գեղարուեստից ազդեցութեան: Աստի, երբ քրիստոնէութեան ժամանակ հայկական բնիկ ձարտարապետական ոճ՝ կը գաննէր, պէտք ենք ըսել որ քրիստոնէութեան ժամանակ ծնու գարգացաւ այն: Շնագլ⁴ այս ազգային ոճին ծնունդը Եզարուն կը դնէ: Տրդատէն մինչև 618 չունի ըսելիք մը, եւ այս պարտաբը կը լեցընէ յառաջ բերելով Ըպիսաղաց Պիժունոյայի եկեղեցին, ուստի այնպիսի տեղոյ մը՝ զոր Հիւստինիանոս քրիստոնեայ ըրաւ, եւ Ս. Ըստուածածնի եկեղեցի մը շինեց:⁵ Նաև Պիժունոյայի եկեղեցին Հիւստինիանու կու տայ աւանդութիւնը:⁶ Բայց իւր ձևերուն քննութիւնն երևան կը հանն քանի մը նշաններ, որ հակառակ կ'ըլնեն ասոր:⁷ Թէպէտ յատակադիմը չորս մայր-թէ վերցուած բխրանդեան գմբէթաւոր եկեղեցւոյ մըն է, նոյնպէս խաւիսաւոյ որմանք, նարդիստարգրք, արեւմտեան կողման վերնատունք չեն տար երկրայութեան տեղե բխրանդեան հիմնապիմ օրինակի մը համեմատ ըլլալուն. սակայն գմբէթը բարձր կամարները փոքաձև են, ուստի չեն կրնար Սահմասականաց այս կողմերը մանեկէն յառաջ ըլլալ: Տիւրպուս կը յիշէ ուրիշ շատ մ'ապիսաղեան եկեղեցիներ՝ որ բխրանդեան ձևը կը ցուցնեն:

Իրաւամբը կը կարծէ Շնագլ որ նաև ի Հայս բխրանդեանն եղաւ հռոմեական

¹ Կեղանքը տես Սարգիստեան, Տեղագրութիւն. Վենետիկ, 1864, էջ 64: Ալեքան, Շիրակ, 1881, էջ 66:

² Հիմն. Արիմի. Այստոս. էջ 244 եւն. § 120:

³ Արիմի, անգ. էջ 9, Ռիթիթէր. Այստոսագր. Ժ. էջ 528 եւն:

⁴ Schnaase, Geschichte der bildenden Künste. Band III, S. 520 ff.

⁵ Արտիպիստ. Վասն գմբէթական պատերազմն, Գ. 3. այգ. Պան քաղաքի, Հար. Բ. էջ 472:

⁶ Շնագլ, անգ. էջ 325:

⁷ Կեղան. Տիւրպուս. անգ. Atlas III, pl. 1 եւ 2:

ածին ժառանգը: Միայն թէ, ըստ իմ կարծեացս՝ անոր առած տեւորութիւնը շատ քիչ է: Արնար յիշել Պրոտոպեայ վանն Շինութեանց Պ., 3 ակեր¹, որ զբաղէս կը հաստատէ բնութագրեան շնուածոց ի Հայս գտնուիր: «Շինեց, կ'ըսէ, (Հուստինիանոս) շատ մ'եկեղեցիներ եւ վանքեր (ի Հայս): Թեոդոսուպոլեա (Աարին) շինեց եկեղեցի մը Ս. Եւստուածածնի, եւ նորոգեց Պետրոս եւ Պաղարք կոչուած տեղեաց վանքերը: Ներկուպոլեա շինեց ԽԱՃ Արբոց եկեղեցին եւ Պաղարք վայնն եկեղեցին ի Բելգանի: Թեոդոսուպոլեայ քով նորոգեց Խ վկայեց վանքը», Եւս վկայութեան համաձեւ եւ կը ցուցընեն բնութագրեան օճին նաեւ Ե զարուն ի Հայս տիրելուն՝ այն ամէն տեղեկութիւնք, զոր տեսնը վերն Եջմիածնի հայրապետական եկեղեցոյն վրայ, եւ իրը 660ին Ներսէս Պ. ի շինած «Վրիտասոսի բանասոր հօտին», կոչուած եկեղեցին: Առտի անհասանական է որ Ներսէս Պ. յառաջ զուս բնիկ հայկական օճով յիշատակարանք կանդնուած բլրան:

Եւս պատճառաւ պէտք է վերադառնալ երեք ցարդ ամենահին համարուած հայկական եկեղեցեաց սկզբնաւորութեան պատմութիւնը, այսինքն Ս. Հովհաննէայ եկեղեցոյն, որ 618ին շինուած կ'ըսուի Ս. Պապիանեայ, որ 630ին կը զբաղի, որոնք երկուքն ալ ի Վաղարշապատ են, եւ Աղունքի եկեղեցին, որ 718—729ին շինուած կը պատմուի²: Եւս եկեղեցիք արդէն հայկական օճը բոլորովն կազմակերպեալ կը ցուցնեն: Ս. որովհետեւ այս օճին զարգացման այլ յառաջադիմութիւնքն ձ. զարուն հագնել կրնանք սարսուցեալ գնել, բայց դեռ նաեւ այս եկեղեցեաց հիմնարկութեան թուականները շինք զիտեր ճշգրտութեամբ, պէտք ենք իրելու հասանական ընդունիլ՝ որ այս երեք եկեղեցիք այն ասան շինուած են՝ երբ հայ ճարտարապետութիւնը բնութագրականին ուղղակի արդեցութիւնէն աղտոտած էր: Թեւրեւս թ. զարը յարմար համարուի:

Եւս այժմ կը բաւէ մտադիր ընել՝ որ ինչպէս արդէն Արիւն³ կը պատմէ հայ պատանեկց վրայ, որ Հուստասոսն կը կրթուէին, նաեւ Եջմիածնի մայր եկեղեցոյն երկու արձանագրութիւնք կը ցուցնեն՝ որ յունական կրթութիւնը է: Եւ նաեւ Զ. զարուն դեռ կ'աղկը Հայոց վրայ. իսկ Արեւոսի եւ ձ. զարուն երկու հայ պատմաբան տեղեկութիւնք կը ցուցնեն թէ ինչպէս Ներսէս Պ. այս յարաբերութիւնքն աւելի եւս ամրապնդեց Ե զարուն: Եւս յարաբերութեանց ամէնէն մեծ ազդեցոյն է Պապի Արթուրեկեան (465—475) առ Պերոզ արքայից արքայ զբաժնանակը, ինչպէս Փարսեցի կը հաղորդէ,⁴ յորում Պապի Հուստասոս հետ ունեցած յարաբերութեան համար կ'ըսէ. «Եւս որ ասեց, թէ երթեւեկը նորա ի Հռոմս, ոչ ըստ զորա կարծեաց եւ խօսիցն

¹ Անոցմէ յառաջ կարելի է դնել նաեւ Տեկոբոց եկեղեցին, (Անի բաղարին մաս) որոյ նապոյն արձանագրութիւնք մնալու է զոր նուիրին կ'ըսեալ թէ ունեցալ: (Ճմմ. Երշան, Երեսկ, 1881, էջ 131): Հայոց եկեղեցական ճարտարապետութեան վրայ մասնագետ անգամ՝ իմաստն եւ մանրամասն քննութիւն մը տակաւն չեն բուծ. ինքնակց եւ սեպհական նկարագիր մանջած են նայիական եկեղեցեաց վրայ, բայց թէ այս սեպհական նկարագրին սկզբնաւորութիւնն որչափ նի մասնաւորութիւն կը սկսի, այն տակաւն վերջնականապէս որոշուած է: Գործոց նշողնակը, ինչպէս մեզի ծանօթ է, արպիտի ծննդարկութիւն մ'ընտել, եւ Հայոց ճարտարապետութիւնն ամբողջովն մանրամասն ուսումնասիրելու մտազրուիւն ունի, եւ իւր ընդարձակ նմանութիւնն եւ մասնագիտական կարողութիւնն շատ քան կրնանք սպասել: Ժ. Ք.

² Հրոբ. Պան քաղաքի, Պ. էջ 255.

³ Ճմմ. Հնայե, անդ, Պ. էջ 334.

⁴ Ճմմ. Դասնօթութիւնք յուստասոսի վրանկան, ար. Վենետ. 1818, Հա. Բ. Բաջր. էջ 117.

⁵ Պատմութիւն Հայոց, հրոբ. Վենետիկ, 1873, էջ 344.

“այդպէս են իրքն. քանզի սուտ է. այլ փան զև զգպրութիւն զխաւթեանս մերոյ եւ
 “զեմնատ բանասոր ուսմանց՝ յաշխարհին Հոռունց ուսեալ եմ, եւ են իմ անդ ծանօթք
 “բազում եւ ուսումնակիցք, այլ եւ զկերպարան հանդերձիցս զոր ունիմքս մեք՝ անտի
 “զնեմք. փան զև եւ ոչ յայլ աշխարհի գտանի սա ուրեք՝ բայց անդ, հարկաւ որիմք անտի
 “զնեկ զայս ըստ ժամանակին պիտոյից:” Ինչ որ հոս զխաւթեանց եւ զգեատուց համար
 կըսուի, կարժէ նաեւ ճարտարապետութեան համար: Աւելեալ խոյակաց քննու-
 թիւնը ցուցուց՝ որ նաեւ՝ Աերսէս Պիտրով բնականական գեղարուեստն էր որ ձեւերն
 եւ նաեւ ճարտարապետներ փոխ սուտ Հայոց:

Բայց նախ քան բնականական արուեստին սղղեցութեան պատմութիւնը շարու-
 նակը՝ կը սխիմ իմ զլուստոր նպատակա՝ Աջմիածնի Աւետարանին հետազտութիւնը,
 որուն մէջ բայ ի բնականականէն պիտի գտնենք որ երկրորդ կրթութեան շրջան մ՝ ալ
 արդիւնաշատ սերմանք ցանած է հոյ արդին մէջ:






արվ. Աշմիածին Ի վերջն (Օ-
դասուսի 1889, Ասիմոդիկոսն

այն տեղ չգտայ. այս պատճառաւ մատենա-
դարանապետն՝ Աերսէս Եպիսկոպոս միայն Հա-
րեւանցի տեսուիթիւն մը մանրանկար ունե-
ցող ձեռագրաց շնորհեցինձ: Էշմիածնի մա-
տենադարանին ցուցակը Մ. Պրոտէի ձեռք
յամին 1840 Հրատարակուելն ետեւ¹, որ
միայն հայ ձեռագիրներն, եւ այն՝ հնադոյն-
ները՝ ՎՎ՝ դարէն սկսեալ յառաջ կը բերէ,
կը սպասէի պարզապէս դադարաբար մը կող-
մել՝ թէ հայ ծագողք մինչեւ որ աստիճան
բնականորէններէ կախուած են: Ընոր հա-
մար այնչափ աւելի անակնկալ էր ինձ համար,

երբ այն թանկագին իրաց մէջ ձեռագիր մը տեսայ, որ քրիստո-
նէական արուեստիւ սիգուսկրեայ մեծագին կող ունէր եւ բազմու-



¹ Brosset, Catalogue de la bibliothèque d'Etschmiadzin. St. Pétersb. 1840.

Նշոր վերստին տպուած է ի Rapports էջ 23 -- :

թիւն մը մանրանկարաց, որոնց մէջէն Բ. Կարանին սիրելին Եղածներն առաջին տեսութեան հին-քրիստոնէական, իսկ վերջը գրուածներն ասորական կերեւային, որոնց մէջունը հայապէր Բ. Կարան մը փյուն մանրանկարներով կազմուած էր: Մինչդեռ մասնադարձագեան անընդհատ կը ստիպէր՝ եւ այս մեծադին ձեռագիրը լուսանկարեցի: Հազիւ 1890 ին Հռոմէոս արին Մոսկուայի Հնախօսական ժողովոյն առթիւ խնայցալ որ այս ձեռագիրն ի Ռուսիա ծանօթացած է: Բղերսնայր Սարգիս Ռ. վարսի կոմսը Լճի-ածնի մասնադարձին յամեն 1863 հայերէն հրատարակեալ նոր ցուցակէն ոգտուելով, ի Տփղիս գումարեալ հինգերորդ Հնախօսական ժողովոյն Տեղեկութեանց մէջ 1882 ին նոյն Բ. Կարանին համնօտ նկարագրութիւնը հրատարակած է:¹

Չեռագրին մարմինը կը կազմէ, զոր սարգապէս «Լճիածնի Բ. Կարանը», կանուանեմ, մագաղաթի վրայ միջին երկաթադիր գրով գրուած հայերէն Բ. Կարան մը, 0·28 մեզր լայն եւ 0·34 մեզր երկայն: Բար վերջը կոյ հետեւեալ յիշատակարանը.²

«Իմանայի լուսով սրտափայլեալ աստուածընկալ սրբոյն միտք գերախոհ մակերեւութեան արփիահարաչ եւ ծայրագոյն լուսոյն անձնու ճառագայթիւք գերափայլեալ ի ստորինս եւ ի գերադոյննս, յիմանային եւ ի գոյալս, զոր եւ իմն պատկար եւ հարազատ մտքութեան մարմնոց եւ խաչակիր նահատակութեան թողեալ զհայրենական շքեղաշքութիւնն, քանոն կրանից միանձանց եղեալ յերկրի զանամբնոցն բերեալ աւրինակ, նոցին եղև հազարոց, թողով յերկրի իւրայոցս աշակերտեցոց, աւրինակ գնացից կենաց պղծապայն, եւ սանդուղս ի վերինն սիմփն. զանուանեալ նորս վանս. հիմնարկեալ ի սնն զվայցարան նոյն անուն իւր սրբոց նախափայլին Մակիանոսի:

«Իսկ եւ յեաին եւ ամենանուսառ Մակիանոս մեղորական կրանուոր եւ անարձան քահանայ նորին աշակերտ եւ կրարորդի. ոչ ըստ նորին աւրինակի, այլ յոյժ մեղուցեալ, որ թէկէտ եւ ըստ սին եւ սնտոի խորհմանց կենցաղոցս հայկազնեալ զոլ ասեկին յիս, այլ եմ ըստ ճշմարտութեանն որում եան վկայեմ ինձ աննշան եւ վաթթար եւ յեաին քան զամենայն մարդիկ ըստ չար դործոց եւ սնուցայ գնացից իմոց, սակայն քրիստոնեա զոլ եւ գինք արեան մեծին աստուծոց յիսուսի քրիստոսի ոչ ուրանամ զիս:

«Լուսով մեծաւ տարփմամբ ցանկացայ զբել վիսամախայ չորեքձայեան³ զհորեւոյն զտառս սրբոց աւետարանչացս ի զարդ գերարփի վայելչութեան եկեղեցւոյ. ի սնն պարկուշտ մանկանց նոր սիմփնի, աղերս թախանձանաց առ ամենսին հառաչազին հայցմամբ պաղատանաբ առաջն արկանելով զգութ սրբոյն քրիստոսի, որ ընթեանուք զաւ. եւ ձեռնադարձ համարձմամբ առաջն զենչոյն քրիստոսի վայելք ի սեղան անմահ սրբային, ողորմագութ զորփմամբ յիման արժանի արասլիք զտարժանեալ մեղաբ զհոյի իմ:

«Լուսով մի զբ իշխեսցէ ի բանէն աստուծոց հեռայ[ույ]անել զա իւր պատճա-

¹ Натый археологический съездъ въ Тифлисе, Москва 1882. էջ 352. որոյ թարգմանութիւնը հրատարակեց J. J. Mourier, La bibliothéque d'Etschmiadzine et les Manuscrits arméniens, ի Տփղիս (1885): Չարս քննադատեց Ստասով ի Журналъ М-на Народнаго Просвещенія 1886 թ. յիսի տետր, որ եւ միտմանակ հայերէն հրատարակեց. «Լճիածնի» ի մէջ ի Տփղիս 1886. թ. ք. 25, 26, 29: Հմն. Մայր ցուցակ ձեռագիր մասնակց գրագրարանի սրբոյ ամբողջ Լճիածնի, Տփղիս, 1863. էջ 16. թ. 222:

² Կերեւ իսկապարտ չուցեց թող տալ որ այս յիշատակարանը լուսանկարեմ: Ինչէ եւ այստեղ բնագիրն յառաջ բերել կարող եղայ, զայն պարտական եմ հոտանդնուպոսոյ զեպանական խորհրդական ֆոն Հոյի ազնիւ քանիցն, որ այս մասն իմ առ կաթողիկոսն ուղղեալ խնդրածքն ամենայն եղանակաւ ձեռնառու եղաւ:

³ Գաղեմեաբանն կը համարէ թէ «չորեքձայեան» ըստով չարս Բ. Կարանի ք կանգնուին:

ԲՈՒՆ

“**ռանաք** ի նորավանկց սուրբ եկեղեցւոյս, եւ թէ որ յանդին որոշել զայս աւետարանս
“ի սուրբ խորանէս, յախշակոյն ի փառաց որբոյն աստուծոյ որոշեալ լիցի իրբ աստա-
“նայ, նորովեալ յողի եւ ի մարմին ընդ անհաւատ սեղանակողզպանս եղիցի դատապար-
“տեալ յորդոյն աստուծոյ :

“Եւ զսա լիցին հանապաղ ընթերցեալ ի սուրբ եկեղեցւոջս, զն յստոյր ի հին յաւ-
“րինակաց գրեցաւ նոյն անձքը կացցէ ի վերայ այնոցիկ ոչք անփոյթ առնեն զհրամայեալս
“սա յինէն :

“Եւ գրեցաւ յամի թուոյ հայազանց : ‘ՆՂԻ’ : եւ ըստ թուոյ հոռոմի : ‘ՉԻՎ’ : յիս-
“մայեղական բռնակալութեան : ‘ՅԷԹ’ :

“† Տեառն Խոսեփանոսի է սուրբ աւետարանս

“Յովաննէս գրեցի յիշեցէք : ,

Եսոր կը յաճորդեն ամբողջ տարւոյ օրերուն մէջ ընթեռնել աւետարանաց տեղեք .
եւ ի վերջոյ կը կրկնուի վերասին՝

“ՏԵԱՌՏԻ ԱՏԵՓԼԵՆՆՈՒԻ Է ՍՈՒՐԻՒ
ԱԵՆՏԵՐԵՆՍ

Տացէ զսա տէր ի վայելումն
մանկանց նոր սիովնի : ,

Յիշատակարանիս վերջը գրուած թուականին համեմատ՝ Աւետարանս գրուած է
Հայոց ‘ՆՂԻ’ (438) թուին, որ 551էն կը սկսի, ուստի եւ 989 փրկչական թուին :
Թէ յունական եւ թէ արարական թուականն ասոր հետ չի միարանիր : Յունաց 742
թուականին կը համապատասխանէ 247 ին սկսող թուական մը, Իսմայէլացւոց 379
թուականին՝ 610 ին սկսող մը : Մեղի ծանօթ չէ թուական մը, որ այս տարիներուն
սկսի : Եթէ ենթացողն որ Յունաց թուականն ‘Մարտիրոսաց թուականն’, (284 ին) է,
Իսմայելացւոցն՝ ճշդիւ 622 է, այն ատեն ձեռագիրն առաջին դէպքին 1026 ին եւ եր-
կրորդ դէպքին 1001 ին գրուած է : Եւ այսպէս միայն սա մեկնութիւնը կը մնայ՝ որ
հայ գրիչն օտար թուականաց ճշդիւ տեղեակ չէր, եւ մենք ի հարկէ իւր ազդին թու-
ականին վրայ պէտք ենք մնալ¹ :

Բարեբախտաբար կարող ենք այս թուականն ուրիշ կողմանէ ստուգել : Եյս մեր
յիշատակարանին համեմատ՝ ձեռագիրս գրած է 989 ին Յովհաննէս օմն՝ Խոսեփանոս կրօ-
նաւորին եւ քահանային համար, որ եղծօրորդի եւ աշակերտ էր ‘Կորավանկց Հիմնադրին՝
Խոսեփանոսի : Երբ Խոսեփանոս Սիւնեցի ի Պատմութեան հանն Սիսական², կ’աւանդէ որ
ասոր մէկ ազգականն՝ Խոսեփանոս անուամբ՝ ‘Կորավանկց Հիմնադրեալ է Հայոց ՅՉԷ
թուին, որ է 936 փրկչական թուին, եւ կը յաւելու՝ թէ անոր 970 ին վախճանելէն

Ա 1405 23-073

¹ Ուսուցչական Քր. Մեղիք հաճեցաւ ծանուցանել ինձ, որ օտար թուականաց գործածութեան մէջ
նշմանքի անտուգութիւն կայ նաեւ Մերայէ Եսորոյ քով, Պատմութիւն, (Երուսաղէմ՝ 1871) էջ 256, ուր
կ’ըսուի թէ յովն ՊՉԷ թուականութեան Եսորոց (Սեւեհեանց) սկսած է Հայոց թուականն, այսինքն՝ (871
— 316) 556, եւ ոչ ըստ սովորութեան՝ 551 :

² Նշմանքը գրքին վերջն այս տեղոյ մասին նետեալ ‘ուղղելիք’, կը զնէ. ‘Իսմայէլացւոց (այն է՝ Երա-
րոցւոց) 379 թուականն, որուն անմտադրութիւն էր եղած այստեղ, ճշդիւ միտքան է 989 թուոյն, զիսն զի
Արարացիք լուսնական տարի ունէին, ինչպէս յայտնի է :


Նմանապէս Քր. Միլլէն ուսուցչականի մասին տրուած յիշատակած ծանօթութիւնը կ’ողորոսի այսպէս. ‘Եյս՝
ծանօթութիւնն փոխանակ (871 — 316) 556 կարգաւ. ընթերցիր (871 — 312) 559 : ,

² Հրոս. Է. վին. Մոսկուա, 1861, էջ 179 — Ուվարոֆ, անդ. էջ 551 :



ետեւ՝ ի սկզբան շայն շարհատ, եւ յետոյ հիմնադրին եղբորորդին Վրիստափոր, որ անոր նաեւ աշակերտն եւ յամենայնի նմանոցն էր, Նորափանից առաջնորդ եղած են: Եւ յայդս երկու արջուրեներն իրարու կը միարանին՝ բաց յանուանէն: Ընունը կարելի է ժ.Պ. դարու պատմիչը սխալած ըլլայ: Նորափանքն Վայոց-ձոր գաւառին մէջ է, եւ Նորափանից Ս. Ստեփանոս եկեղեցին կը յիշուի նաեւ Մղուլներու արշաւանաց ժամանակ, երբ Աշիկում այնտեղ թաղուեցաւ¹: Հիշատակարանին համեմատ մեր Եւեւոսարանն ալ այս եկեղեցւոյ խորանին համար էր: Թէեւ մէջը անէծքներ կը սպառնացուէր, սակայն նոյնը յափշտակուած էր եւ վերջապէս Լջմիածին եկած: Եւս ստացչաց փոփոխման մնախն կայ տեղեկութիւն մը: Չեռադրին 9^ր թղթոյն վրայ՝ Եւեւոսարանին սկիզբը կայ հետեւեալ տեղեկութիւնը. «Ի թուականութեան հայոց: ՈՒՎ. [= 1173]: Եւ ի տեւութեան Եւթարակ Եւթիջին [Լջակուղ] եւ ի հայր[ապետ]ութեանս Պարիգո. յ [Պարիգորայ Պ. 1173—93] եւ Պարիգի որդի Վահրամայ գնեցի յիմ հայալ յնչից զսուրբ զաւետարանս. եւ տիւ ի մեծահոգեակ վանքս Մաղարիտս ի սուրբ նախա(յ)փայս [Ստեփանոս]. ի յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց. որդոց իմոց. եւ ամուսնոյն իմոյ. արդ աղա՛ չեմ զամենեանս ով աստուածատէր քահանայք. յորժամ ընթեռնոյք զսուրբ զաւետարանս առաջի սուրբ խորհրդոյն զեւ եւ զծնողս իմ եւ զորդիս իմ. եւ զամուսին իմ. յիշեալեք առաջի զեմաննն Վրիստոսի: Եւ տէր աստուած յիշողացդ որորմեսցի ամէն: Եւ ես տէր Ստեփանոս գրեցի եթէ որ հեռացուցանէ զսուրբ զաւետարանս ի սուրբ ուխտէս. կամ զբաւականելով կամ ծախելով. այնպիսին նորով: Հիմ. Վ. հայրապետացն. զաւետարիչք Տրամանաց արհեստակ եղիցին²:», Թէեւ ձեռագրին այնուհետեւ ինչ ճամբով Լջմիածին հասած է, անձամբով է:

Յովհաննէս գրիչն, որ Եւեւոսարանն «յտոյզ ի հին յաւրինակաց», օրինակած է, իւր




ՁԱՐԳՔ 989ԻՆ ԳՐՈՒԱԾ ԱՆԵՏԱՐԱՆԻՆ

ձեռագիրը քանի մը զարդերով եւ եղերազարդով զարդարած է, որոնք կրնան մեզ վաւերարար աւանդել իւր զեղարուեստական կարողութիւնը: Զարդերը մերթ բոլորակ են, որոնք լաւ, աստղ, հանդուցաձեւ ժայգաւէն մը եւ այլն կը պարփակեն, եւ մերթ

¹ Saint Martin, անդ, էջ 3, 143. Բ. էջ 125:
² Եւս բնագիրը պարտական էմ Տր. Քարամանցին: Եւեւոսարանի համար յարգ ունի, որ Լջմիածնի մատենադարանի Մայր ցուցակն եւ ասիէ Ուրբաթի եւ Մուրիէ (անդ) 989ի յիշատակարանն եւ այս նորագիր տեւ-

խաչեր՝ որոնք կերևայ թէ Հայ եւ վրացի եկեղեցեաց աստուածային պաշտամանց մէջ գործածուած խաչերու վրայէն օրինակուած են, վասն զի վարի կողմը մաս մ'ունին որ պատուանդանի մը վրայ հաստատելու կը ծառայէ¹: Ամենն ալ խաչաթիւերու ծայրերն երկու բոլորակ մասեր ունին, որոնք Առ դարուն ի Ռիւզանդիոն առ հասարակ գործածուած նախատիպ օրինակէն են², զոր Հայ եւ վրացի զեղարուեստը փոխ առած է: Այս զարդերու գործուածն յետին աստիճանի կոչա է. չկայ զի՞ծ մը՝ որ ուղիւ ըլլայ, չկայ զոյն մը՝ որ խնամով տրուած ըլլայ: Արդէն ձևերու ընտրութիւնը կը ցուցնէ որ ծաղկոյն ամենեւին ճաշակագիտական աւանդական ուղղութեան մը բնառ հետեւած չէ:

Այլազգ է պատկերազիր եղբրազարդերն: Մտտի՞քի Աւետարանին մէջ առաջին անգամ հանդիպողը կը ներկայացընէ, զիմասցս ի զերեզմանի³:



ԿԱՆԱՅԷ Ի ԳԵՐԵՉՄԱՆԻ, ԵՉՆԻՍՏԱՆԻ ԳՅՑԻՆ ԳՐՈՒՄԸ ԱՌԵՏԱՐԱՆԻՆ

Հրեշտակը նստած է փոքրիկ կամարի մը վրայ դէպ ի ետեւ, որուն մէջ կանթիկ մը կարուած է: Չախ ձեռքն ունի խաչ մը եւ աճը կամբառնայ դէպ է երկու կանացի կիսապատկերաց, որոնք յաճախողմն վրայէ վրայ նկարուած են: Անդամոց անբնական զիւրքն եւ պատկերաց ըստ մասին միայն նկարուելը կը մասնեն ձեռք մը զոր ուսեալ արուեստագէտ մը չէ վարդն, այլ կը վերաբերի գրչի մը, որ միայն պատահարար նկարակերտը մը կ'ուզէ փորձել: Բայց եթէ ուզածն հասկընելու չափ ընդհանուր յաջողութիւն մը թերեւս ունեցած է, զայն պարտական է իւր օրինակին, որուն կազմակերտութիւնն (composi-

ղեկութիւնն, որուն թուականն իրենց ծածօթ չէր, ի մի ձուլած են, որով ընդհանապէս անյուծելի հակասութիւններ յառաջ եկած են: Տր. Քարամանցի հաղորդեց ինձ ուրիշ տեղեկութիւն մ'ալ որ ի թուղթն 10, ուր Գ.ուրջն անձամբ կը գրէ թէ թիկզպապառակի () վանքն հաստատած է ինք: Այս տեղեկութիւնն է՝ «Էս Գ.ուրջն որդի վանքանց հրաման առի հռչակաւոր եւ ի մեծ վանացն Մազարդին սուրբ Ստեփանոս նախա(յ)ղկայէն վանացն շինելոյ ու շինելի զթիկզպ պառակիս վա...յ...ս [ղթիկզպապառակիս վանոջ] Ով որ վանիցն հայր լինի կամ գեղեցի առաջնորդ որ մեծ վանացն մտոց կամ հասի կամ զբառեց մասոյ կամ կենաց: Կըզի: Գձ: Ժ: Ը: հայրապետաց եւ յայտ աւետարանն անիծաց ու կայած ենի. ամեն»

¹ Իմ պատկերս Ու վարդի, անդ. Տխա. ԺԲ. գծագրութեան վրայէն է: Հմմտ. նաև Ստատոթի, անդ. եւ «Արձագանք» շարաթիւսթիւն, 1886: Թէ ասոնք շատ տգեղ չեն յէջ 209 դրուած պատկերին երկու սեանց մէջ դրուածին պարզ հայեցումն է կերեւայ:

² Հմմտ. գերմ. հրատարակութեան Գաւելուած Բ:

³ Իմ ստուերագրէքը Տր. Քարամանցի նմանահան օրինակին վրայէն են:

tion) թէև թուլացուցած՝ կրնդ օրինակէ այս տեղ: Ըստ նախատիպ օրինակն անշուշտ Մոնցայի պաղեստինեան մետաղաշէրու վրայ տեսնուածին (Պարբ. 434/5) նման էր. վասն զի այստեղ ալ հրեշտակը նոյնպէս խաչ ի ձեռին շերտի ետեւը նստած է եւ աջն դէպ ի երկու կանաչքն ամբարձած: *Նոյնպէս նման է 586 ին գրուած ասորական Ըստուածաշնչոյն պատկերին, (Պարբ. 139, 7) ուր սակայն հրեշտակն փոխանակ խաչի՝ դուռապան մը կը բռնէ: Ը իրմին ձեւը նմանապէս ասորա-պաղեստինական արուեստէն քիչ կը տարբերի:

Յաջորդ եզերազարդը կը ներկայացընէ մոզուց երկրպագութիւնը: Ար տեսնենք զՊարիամ յառաջակողմն ի պատկերի՝ բազմալ հիւսկէն բարձր յենարանով ակժուոյ վրայ, եւ զմանուկն երկու ձեռք իւր առջև ընդդրկած: *Քրիստոս խաչաձև շրջանակ



ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ ՄՈՒԳՈՒՑ, ԵԶԵՐԱԶԱՐԴՆԵՐԿՆԵՐԿՈՒՄԺ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

ունի գլուխը, աջը կրծոց վրայ ամբարձած է օրհնութիւն տալով, եւ ձախ ձեռքը գալարեալ բան մը կը բռնէ: Ըթուոյն երկու կողմն երկու երկու հոգի կը կենան: Ըջակողմը կը տեսնենք նախ, ինչպէս թեւեթեւն եւ զլոյց շրջանակէն յայտնի է, հրեշտակ մը, որ ծածկեալ ձեռքերն ամբարձած է եւ *Քրիստոսի կը նայի: Ըսոր քովը կայ թագաւոր մը, որ ձախովն կը բռնէ սիւսառակ մը եզերքէն, որ ծածկեալ աջոյն վրայ կեցած է: *Նոյն շարժումը կընեն ձախակողմն կեցող երկու թագաւորք, որոց անուանքն քովը հայերէն գրուած են*: Ըսոնց գլխոյն նկարագիրն ինչպէս նաեւ զգեստները նոյն են՝ բաց ի տարբեր գուներով մօրուքներէն. երեքն ալ ունին տեսակ մը գրակ, որ կը յիշեցընէ փոխգականը, միայն թէ դէպ ի ետեւ ծածանող երկու ժապաւէններ աւելցուած են: Աւնին նաեւ կարճ վերնազգեստ մը՝ որ վարը սրունից վրայ կէս բոլորակ կտրուած է, ստնոց մը, սանաման եւ կրծոց վրայ կոծկեալ վերարկու մը: — Մոզուց երկրպագու-

* Այս նայնքն տառերն Աւետարանաց Համաձայնութիւնը կը ցուցնեն անշուշտ:

Թիւնը հին-բիւզանդեան ժամանակներն առ հասարակ այնպէս կազմակերպուած կը ըլլար, որ Մարիամ մէկ կողմը կը նստէր, մոզերն եւ հրեշտակը միւս կողմանէ անոր կը մօտենան: Եւս օրինակը չ'օրինակիր մեր մանրանկարը: Եւ սակայն եթէ առաջին եղբարգարդին հետ համեմատելու ըլլանք՝ աչքի կը զարնէ կազմակերպութեան ստոյգ հանդարտ վիճակը: Մինչևէ այս բոլորս ինձի մի միակ պատկեր մը ծանօթ է, ուր նոյնպէս կը ներկայացուի. այս պատկերը մեր 989 ին գրուած հայերէն Եւետարանին վերջը գրուած մանրանկարներէն մին է, զոր կը դնենք ի Տխտ. Չ. 1* : Ըսոր մէջ ալ Մարիամ Մանուկ ի ձեռին կը բազմի մէջտեղը, հրեշտակն ու թագաւոր մը աջակողմը կը կենան, միւս երկու թագաւորք ձախակողմը: Կտեւ ուրիշ մասանց մէջ նոյնութիւն կայ, եթէ ընդունինք՝ որ զրիչն ինչ որ չէ իմացած՝ թող տուած է կամ փոխած. այսպէս Մարեմայ սպիտակ գզակն եւ զԲրիտոսո նշաձեւ շրջապատող լոյսն (mandorla), եւ փոխանակ վերջնոյն՝ զլեոյ խաչաձեւ բոլորակ տուած է: Թագաւորաց նկարին մէջ ամենէն աւելի աչքի կը զարնէ զլեոյն եւ սրունից զրից նոյնութիւնը եւ մատուցած նուիրաց նոյն ձեւը: Փոխզական գզակէն շինուած է թերեւս ազգային զխանոց մը. երրորդ թագաւորն՝ որովհետեւ ծաղիղին անծանօթ էր կանոն, ընդունած է մօրուք: Ըստուածածնի զլեոյ բոլորակն անոր համար զանց առնուած է, վասն զի գրութիւնը նկարին շատ մօտ է: Թերեւս նոյն պատճառաւ նաեւ ճարտարապետական յատակն ալ ի բաց թողուած է: Եւ սակայն ամենեւին հարկ չէ որ զրիչը ձշղիւ մեր այս մանրանկարն ընդօրինակած ըլլայ. բայց ստոյգ օրինակած է նոյնպիսի օրինակ մը, ասորական ծնունդ մը, ինչպէս վարը պիտի տեսնենք: Կայ վերջապէս երրորդ եղբարգարդ մ'ալ Մատթէի աւետարանին մէջ, զոր վերն էջ 208 յաջակողմն կանանց ի դերեզմանի՝ զրած ենք, որ կը ներկայացնէ առանձինն կին մը՝ որ իւզաման մ'ունի ձեռքը:

Եթէ հայեցուած մ'արձակենք այժմ հայ Եւետարանին կցուած միւս մանրանկարներուն, որոնցմէ 15ր սկիզբն է եւ 4ր վերջը, ամենեւին տարակոյս չի մնար որ ինչպէս փղօսկրեայ կողը՝ նոյնպէս ասոնք չեն կրնար ճովհաննու հայ գրչին գործն ըլլալ. եւ հետեւաբար 989 թուականը միայն ամենամեծ գրուչութեամբ կրնանք ասոնց ալ մերձեցնել: Եւ յժմ փղօսկրեայ կողը կը նկատամ՝ զատ ի սկիզբն գրուած մանրանկարներէն, եւ զասոնք ալ զատ վերջը գրուածներէն: Պիտի տեսնենք որ երեք խումբն ալ տարբեր տարբեր ծագում ունին:

Ռ Ա Վ Ե Ն Ն Ե Կ Ե Ն Փ Ղ Ո Ս Կ Ի Ե Ե Յ Կ Ո Ղ Ե Ր Ն

Մեր ձեռագրին կողերը քիչ մը մեծ են հայերէն Եւետարանէն, այն է՝ 0·305 մեղր լայն եւ 0·365 մեղր երկայն: Երկուքն ալ փղօսկրեայ գործուած են եւ շատ լաւ պահուած:

Յատաջակողմը (Տխտ. Ե. 1) կը տեսնենք մէջտեղը երիտասարդ անմօրուս անձ մը դէպ ի յառաջ բազմած: Կրկին հանդերձ զգեցած է. հաս մը ներսէն որ լաւ յագլած է, եւ ուրիշ մը վրայէն՝ լայն թեկանեօք: Ըսոր վրայէն նետուած է վերարկու մը, որուն քղանցքը լայն զարդարանք մը եւ վերջաւորք ունի: Ոտքերն, որ պատուանդանի

* Սոյն տեսնուող կարելի է տեսնել մատենիս զերմաներէն հրատարակութեան մէջ: Ծ. Թ.

վրայ են, սանդղակ անցուած է: Մայրերն ճակարկն վրայ բոլորակաձև եզակի կը կազմեն, աջն օրհնութիւն տալու լատինական ձևով կրճոց առջեւ բարձրացած է, ձախն զիբք մը կը յեցուցանէ ձախ ծնկին վրայ: Արովհետեւ զիսոյ բոլորակը կը պակսի, մեկնութիւն միայն նմանութիւններէ կարելի է գտնել: Բստ այսմ պատկերին մէջ մեր առջեւ կեցողն է Վրիստոս Ըմենակալ: Վրիստոսի ետեւն՝ աջ ու ձախ կողմը մօրուաւոր երկու հոգի կայ որոնք իրենց աջն տափաձև եւ բունեն կրճոց վրայ: Վլիսոց նկարագրէն կը ճանչցուին Պետրոս եւ Պաւղոս, այսինքն՝ Պետրոս ձախակողմն, աւելի բոլորակ մօրուօք եւ Պաւղոս աջակողմն աւելի սուր մօրուօք եւ երկայնաձև կերպարանօք: — Եւս կենդրոնական խումբը քառակուսի կը պատէ դալմնայ պսակ մը, որուն եզերաց մէջտեղերը օղակաձև նշանով յայտնուած գոհարեղէնով զարդարուած է: Բստ չորս կողմն ալ կան ուրիշ բարձրաբանդակներ, որոնք կողմնական հորիզոնական շերտերով իրարմէ անջատուած են. այս շերտերու վերին եզրերը ձուածեւ եւ անկիւնական զարդերու շարք մ'ունին, իսկ վարինը՝ ատամնաձև է:

Վերին երկայնանկիւն դաշտին մէջ կը տեսնենք ճանկաձև եւ խաչ մը շուրջ պատեալ յաղթութեան պատկաւ, զոր երկու կողմանէ մէջ մէկ թուշուս հրեշտակներ կը բառնան որոնք իրենց մարմնովն, ծածանող հանդերձիւքն ու թեւովքն այն միջոցն այնպէս զրաւած են, որ միայն վերին անկիւնները տեղ մնացած է երկու կիսապատկերներու, որոնք երկուքն ալ՝ իրենց աջը տափաձև բունած են կրճոց վրայ: Զախակողմը կեցող անձը մօրուօք չունի եւ ճառագայթաձև թաղ մը կը կրէ: Աջակողման պատկերին զլուխը դժբախտարար կոտրած ինկած է:

Կենդրոնական խմբին ձախակողմը կը տեսնենք երկու բարձրաբանդակ իրարու վրայ: Վերին ձախակողմը կը ներկայացուի Վրիստոս, անմօրուս, կենդրոնական պատկերին պէս զգեցեալ կրկին հանդերձ, վերարկու եւ սանդղակ: Վեպ ի ձախ քաղերով՝ ետ կը նայի, ձախ ձեռքը խաչ մը բունած, եւ աջն օրհնութիւն տալով դէպ յաջ կարկառած՝ կը նայի երկայն հանդերձ զգեցեալ անձի մը՝ որուն որովայնն ուռած է եւ վերին իրանն ետ հակած: Եւս անձն աջը տափաձև կը կարկառէ առ Վրիստոս, մինչդեռ ձախն որովայնին վրայ հանդէտցուցած է: Հետապահովման յատակին վրայ կերեւան երկու մօրուաւոր կերպարանք, որմէ մէկն անշուշտ առաքեալ մըն է Վրիստոսի ընկերացող, եւ միւսն՝ կերպարանայ նկարագրին նայելով՝ հիւանդին ընկերը կրնայ համարուիլ: Ար ներկայացուի ջրողն: — Եւս խմբին տակ՝ կերեւայ դարձեալ Վրիստոս խաչ ի ձեռին, որ ձախ ծունկն ամբարձած՝ կը զիմ, յաջ, եւ աջն օրհնութիւն տալով կը կարկառէ մերկ եւ անմօրուս մարդու մը, որ ոտքերն իրարու անցուցած կը հանդէս լծի մը մէջ, որուն ափունքն ու ալիքն ձեւացուած են: Եւս մարդն աջն տափաձև կ'ամբառնայ եւ ձախը վար կախած կը շօշափէ ձկան մը բերանը: Վերը կերեւայ երեք ընկերացող անձանց մօրուաւոր զլուխը:

Կենդրոնական խմբին աջակողման վերին պատկերին մէջ Վրիստոս կը կենայ՝ զիմացի պատկերին պէս ընկերակցութեամբ առաքելոյ մը: Եւս խմբին հիւանդն է անդամացողը, որ իւր մահճին ոտքերէն բունած՝ զիսոյն վրայ բարձրացուցած՝ կ'ընթանայ: — Վարի խմբին մէջ կերեւայ Վրիստոս վերինին պէս, բայց դէպ ի յաջ կ'երթայ: Եւս ձևը կեցած է մէկն, որ միայն մէջքը ծածկած է. ասոր մտրին ծառայած են եւ ինքը

ձեռքերն յառաջ կարկառելով դէպ յառաջ կը կքի: Եսոր ետեւը՝ իրբու ի յառաջա-
կողման պատկերի կայ ուրիշ մերկ անձ մըն ալ, որուն մայրն ալ ծառայած են, եւ
կը նայի Վրիստոսի եւ իւր ընկերին: Ար ներկայացուի երկու դիւահարաց բժշկութիւնը:

Ստորին երկայնանկիւն դաշտին մէջ մէջտեղ Վրիստոս խաչը ձախն ստած՝ իշու
վրայ հեծեալ կը ներկայացուի, իրեն կը ներկայանան չորս անմօրուս անձինք, որոնք
հանդերձ եւ վերարկու հաղած են. ասոցմէ յառաջակողմանը՝ աջն դէպ ի Վրիստոս
կարկառած է ցուցնելով, յաջորդ երկուքն արմաւենուց ոտս բռնած են, իսկ վերջինը
կը ջանայ հեռու ձախակողմին կեցող արմաւենուց մը ոտն կորզել: Վրիստոս աջը կ'ամ-
բառնայ օրհնելով դէպ ի երկու անձինք որոնք ընդ առաջ կու գան: Ահին առջեւէն
երկայն հանդերձով փոխաթ մը կը տարածէ, ճամբուն վրայ, եւ միւսն ասոր ետեւը լայն
զգեատի մը մէջ պատատուած եւ զլուխը թագ, ձախ թեւն ալ սկիզբիւր մը պնդած՝
վերարկուաւ պատեալ աջը դէպ ի Վրիստոս կ'երկարէ: Հետակողման յատակի վրայ
ուրիշ երկու հոգի՝ դէպ ի այս երկուքը կու գան: Ե, յս անձանց զլուխներուն մէջտեղերը
կամարներ քանդակուած են: Ար ներկայացուի Սուսն Աշրուսաղէմ:

Ինչպէս որ կողմն յառաջակողմն այսպէս զՎրիստոս եւ իւր գործքերը կը ներկայա-
ցնէ, նոյնպէս ասոր հակառակ ընդդիմակողմը (Տխտ. Ե. 2) բողբոջին Ս. Եստուա-
ծածնի սեպհականուած է: Անդորոնական դաշտին մէջ կը տեսնենք զինքը, կրկին հան-
դերձ զգեցած եւ զլուխը կտաւով ծածկած, որուն տակէն գծաւոր խոյր մը կ'երևուց-
բաղմամբ է գահի մը վրայ եւ ազուցեալ ոտքերը պատուանդանի վրայ դրած է: Ար նայի
ինչպէս նաեւ յառաջակողմն ներկայացուած Վրիստոս, ուղիղ նայողին, եւ երկու ձեռք
հաստատուն բռնած է զՊանուկն Հիսուս, որ կրկին հանդերձ զգեցեալ եւ վերարկուա-
ծած կեալ Ս. Եստուածածնի ձախ ծնկաց վրայ նստած կը նայի մօրը, եւ աջն օրհնե-
լով կ'ամբառնայ եւ ձախովն զայարեալ բռն մը կը բռնէ: Գահին երկու կողմը հրեշ-
տակը կը կենան, ինչպէս կ'իմացուի անոնց զլիտոյն վրայի ապարօշէն, իրենց ձախ ձեռքը
բռնած զաւազանէն եւ պատկերին յատակին վրայ բարձրաքանդակ գործուած թեւերէն:
Խրկուքն ալ աջերնին բաց՝ կրծոց վրայ կը բռնեն: — Ե, յս կենդորոնական խորին եւ
կողմնական մասանց շրջանակին զարդն նոյն է յառաջակողման երեսին հետ: Նոյնպէս
վերին երկայնանկեան պատկերը ճիշդ նոյն է: Միայն ասոր վերին աջ անկեան անձիքն
ամբողջ մնացած են: Ար տեսնենք որ այս անձիքն փոխանակ ճտաղալթաձեւ թագի,
զոր միւս անկեան անձիքն ունին, մահի մը կը կրէ զլուխը: Արեւմն սրեզական եւ լուսնոց
անձնաւորութիւնքն են ասոնք:

Անդորոնական խորին ձախակողմը կը տեսնենք զՊարիամ, որ կենդորոնական պատկերին
պէս զգեցած, դէպ ի յաջ հիւսիէն թիկնաթոռի մը կռթնած է: Չախը՝ որ ծալեալ
առարկայ մը բռնած է, առաջակողման յենարանին կը յեցնէ, իսկ աջն զարմացած
վեր կ'ամբառնայ: Ե, յեւր կը կենայ ծնկերն իրարու անցուցած հրեշտակ մը, ինչպէս
կ'երևուց անթեւ, բայց ապարօշով եւ զաւազանով, որ աջն դէպ ի Ս. Աղոս կ'ամբառնայ:
Ար ներկայացուի Եւետումն: — Եսոր տակի դաշտին վրայ՝ յառաջակողման պատկերի
յաջակողմն կ'երևուց կին մը կանգուն կեցած: Եջը բարձրացուցած՝ կը բռնէ դաշտ մը
եւ զլուխը դարձուցած է մօրուաւոր անձի մը, որ իւր դիմացն ձախակողմը կը կենայ եւ
աջը խօսելու ձեւով մը կ'ոտջ կարկառած է: Խրկուքին մէջ կը տեսնուի երրորդ անձի

մը մօրուաւոր զլուխը: Պատկերին յատակին վրայ վերին կողմը կամար կը տեսնուի, զոր կ'ամբաստանն օձաձեւ մասնէքեայ սիւներ: Ար ներկայացուի Մարեմայ փորձուիլն անխճման ջրով:

Մշակողին վերին դաշտին վրայ կը ներկայացուի Վրխտոսի ծնունդը: Հասածակողման պատկերի մէջ Մարիամ ծնկերն իրարու վրայ կը հանգչի ծածկոցի մը վրայ, ձեռքերը կրծոց եւ որովայնի վրայ դրած: Հօգնած վիճակի մէջ երեսը կը դարձնէ մարէն, որ ածակողմը կը կենայ մէջը Մանուկ պատեալ: Մարջ վրայ կը տեսնուի աստղ մը, ձախակողմն եզ, ածակողմը էշ: — Ըսոր տակը կը տեսնենք զՄարիամ որ իշու մը վրայ դէպ ի յաջ կ'երթայ, եւ Հովսէփ, որ անասնոյն քովէն կ'երթայ եւ կը վարէ, կ'օգնէ իրեն: Մարիամ աջը Հովսէփայ ուսը դրած է եւ ձախովը վարչամակը կը բռնէ: Ըյս խմբին ի յետակողման պատկերի կրկնկրանոն երկու հրեշտակ, որոնցմէ ձախակողմանը դաւազան մը բռնած է եւ աջը բաց՝ վեր ամբարձած, իսկ երկրորդին միայն զլուխը կ'երեւայ: Ար ներկայացուի ուղեւորութիւնն ի Բեթղէհէմ:

Ղերջապէս վարի երկայնանկեան դաշտին վրայ մեղուց երկրպագութիւնը կը ներկայացուի: Մարիամ Ըւետեան պատկերին պէս թիկնաթոռի սը վրայ դէպ ի յաջ բազմած է, Հիսուս մանուկը զիրկն առած: Հիսուս աջը կը կարկառէ դէպ ի մեղերն, որոնք աջ կողմէն յառաջ կու գան: Ըսոնք հագած են սրածայր՝ կարուած հողաթափ, մուշտակե սոնոց, կարճ եւ գօտեւորեայ հանդերձ եւ փոխզական դգակ: Չեռքերը կը կարկառեն առ Հիսուս՝ ծածկած լաթով մը, որուն վրայ կեցած է բոլորակ եւ զծաշատ նուէրը: Իրենց եւ Հիսուսի մէջ հրեշտակ մը միջնորդ կըլլայ. ուրիշ մը իրենց ետեւէն դէպ ի յառաջ կը թռչի եւ աջովը դէպ ի վեր կը ցուցնէ: Միւս կողմը՝ Մարեմայ թիկնաթոռին ետեւը նստած է Հովսէփ շէնքի մ'առջեւ՝ որ վարպագուրով մը կրնայ ծածկուիլ: Երկրպագութեան տեսարանը կը դիտէ եւ խօսելու ձեւով աջը կ'ամբաստնայ: Պատկերին յատակին վրայ անձանց զլուխներուն մէջտեղերը կամարներ կ'երեւան:

Ըյս երկու փղոսկրեայ կողերն առաջին տեսութեան կը ներկայանան իրրեւ վերաբերող այն փղոսկրեայ կրկնակողերու, զորոնք Պուլիէրմոս Մէյէր¹ «հինգմաննեայ», անուանեց: Ըյսպիսի կրկնակողերէն վեց հաս միայն ծանօթ էր իրեն: Ըսոնք կը գտնուին

1. Ի գրաստան Պարպէրինի ի Հոմ. Westwood² ի Հաւելուածին, էջ 353: Պատկերը հրատարակած է Gori,³ Բ. Տխտ. 1, վերին մասը նաեւ Garr. 457, 2:

2. Ի քրիստոնէական թանգարանի Վատիկանու՝ գործեալ ի Լորդ: Westwood թիւ 117: Պատկերը հրատարակած է Gori Գ. Տխտ. 4 եւ Garr. 457, 1:

3. Ի South Kensington Museum ի Լոնտոն: Westwood թիւ 119: Հրատարակած է Maskell, Description of the ivories ancient and mediaeval in the South Kensington Museum. Լոնտոն, 1872, էջ 53:

4. եւ 5. ՀԵղղային գրաստան Փարիզի, Չեռ. թիւ 9384: Westwood թիւ 108

¹ Zwei antike Elfenbeintafeln der k. Staatsbibliothek in München, Միւնխեն 1879, էջ 49.

² A descriptive catalogue of the fictile ivories. Լոնտոն, 1876.

³ Thesaurus veteram diptychorum, Փար. 1759. Թաւելուած ի Փաստերայ:

և. 109: Հրատարակած է Lenormant, Trésor de glyptique Բ. Էջ 9—12, Garr. 458:

6. Ե Հրատարակական գրատան Ոսպեննայի՝ գործեալ է Մուրանո: Westwood թիւ 116: Հրատարակած է Gori Գ., Տխտ. 8, Garr. 456:

Էջմիածնի աւետարանին կողն այս տախտակաց հասարակաց ամէն յայտանշաններն ունի: Կտախ քան զամենայն մեծութիւնը:

Պարպերինեան Վատիկ. և. 1 ղնտ. Փարիզեան Ոսպեննեան Էջմիածնի
 $0\cdot26 \times 0\cdot33$ $0\cdot28 \times 0\cdot39$ $0\cdot29 \times 0\cdot36$ $0\cdot31 \times 0\cdot36$ $0\cdot305 \times 0\cdot365$ Մ.

Հայանի կը տեսնենք թէ վերջին երեք կրկնակողք մեծութեան կողմանէ իրարու աւելի մօտ են քան թէ առաջին երեքն՝ որոնց տարբերութիւնը մինչեւ 6 հարիւրորդամեզրի կը հասնի: Վարձեալ այս ամէն տախտակները հինգամանակայ են. վերն ու վարն երկայնանկիւն դաշա մը և այս երկուքին մէջ՝ բուն մարմինը՝ երեքմասնակայ — միջինը լայն, երկու կողմինները՝ աւելի նեղ — Փարիզի, Ոսպեննայի, ինչպէս նաև Էջմիածնի կրկնակողբուն միջին կտորը պատող կողմնական երկու մասերն երկու դաշտի բաժնուած են, մինչդեռ առաջին երեք կրկնակողբունը մէկ դաշա միայն ունին:

Եյս ամէն տախտակներն իրենց ներկայացուցած նիւթոյն կողմանէ ալ՝ իրարու կը նմանին: Եւմէն տախտակաց վերին երկայնանկեան մէջ օղոյ մէջ ծածանող երկու թևուաւոր անձինք կան՝ միասեղ պսակ մը բռնած՝ որուն մէջտեղը Վրիտաոսի կիսապատկերը կը ներկայացընեն Պարպերինեանն ու Էնտանեանը. խկ միւսը՝ խաչ մը: Պարպերինեան տախտակին միջափայլի մասը՝ մեր առջևը կը դնէ՝ կայսր մը հեծեալ ի ձի. Էնտանի, Ոսպեննայի, Փարիզիններէն միոյն և. Էջմիածնի տախտակաց կենդրոնը՝ զՎրիտաոս. Փարիզի, Վատիկանու և. Էջմիածնի կրկնակողբուն երկրորդ տախտակաց վրայ կը ներկայանայ Ս. Եստուածածին՝ իւր որդւոյն՝ զահոյնց վրայ բազմեալ: Կողմնական մասանց վրայ՝ արուեստական բաժանման համաձայն՝ առաջին խմբի մէջ (Պարպերինեան, Վատիկանեան, Էնտանեան) կը ներկայանայ անձ մը դէպ ի միջափայլ գարձած. այսպէս Պարպերինեանը կընծայէ մարտիկ մը՝ որ կայսեր Հաղթութեան պատկը կու տայ. Վատիկանեանը՝ երկու հրեշտակ, Էնտանինը՝ զԵսայի ու զՄեղքիտեպեկ: Երկրորդ խմբին մէջ (Փարիզեան, Ոսպեննայի և. Էջմիածնինը) երկուքի բաժնուած կողմնական մասերը՝ կենդրոնական պատկերին համաձայն կամ՝ Վրիտաոսի հրաշքները կամ Եստուածամօր կենաց այլեւայլ պարագաները կը պարզեն: Սակայն ամէնուն գատաւորութիւնը ճիշդ նոյն չէ: Եյսպէս Փարիզեանն ու Էջմիածնինը՝ վարն աջակողմը կը ներկայացընեն անդամայուծին և. զիւհահարին բժշուութիւնը: Փարիզեանն ու Ոսպեննայինը՝ ասոնցմէ զատ՝ վերը ձախակողմը կու բին բժշուութիւնը կը ներկայացընեն: Սիւս անտարաններն իրարու չեն նմանիր. Փարիզեանը կը ներկայացընէ տեսասեսին բժշուութիւնը, Ոսպեննայեանը՝ Պազարու յարութիւնը, Էջմիածնինը՝ ջրգողին բժշուութիւնը և. ուրիշ տեսարան մը, զոր տակաւին մեկնել չեմ կրցած: Երկրորդ խմբին (Փարիզի ու Էջմիածնի) Սարեմականաց արեւար շատ աւելի սերտ ու անձուկ է: Երկուքին վրայ ալ ձախակողմը՝ վերը Եւտուամը, աջակողմը՝ վարը՝ Ուղեւորութիւնն ի Վեթիկ հէմ կը ներկայացուի: Երկուքն ալ ունին Ս. Եստուածածնի անիճման ջրով փորձուելը. միայն թէ՛ Փարիզինն մէջ աջակողմը վերն է, Էջմիածնին

մէջ՝ ձախակողմը վարը: Մ'նայեալ միւս գաշտերուն զարով՝ Փարիզեանն Ս. Ըստուածածնի եւ Լշդիսարեթի տեսակցութիւնո, Լշմիածնինը՝ Վրիստոսի ծնունդը մեր առջեւ կը դնեն:

Պարպէրինեան տախտակին վարի երկայնակեան մէջ յարթուած բարբարոսներ կը տեսնենք, որոնք նուէր կը մատուցանեն. իսկ Վ ատիկանի՝ Վրիստոսականաց եւ Լշմիածնի Մարեմականաց վրայ՝ մոզուց երկրպագութիւնը՝ բարբարոսաց զգեստով: Փարպէ Մարեմականաց եւ Լշմիածնի Վրիստոսականաց վրայ ընդ հակառակն կը տեսնուի Մ'ուան յարուստիւմ. Լ ընտանի կրկնակողը կ'ընծայի Վրիստոսի ծնունդը, Փարպէ Վրիստոսականքը՝ խօսք ընդ կնոջ Սամարացուց եւ յարութիւն Վազարու. իսկ Ռավիննայինը բոլորովն խտորելով՝ էջովնանու գէպքը:

Ըյս համեմատութիւնը՝ ըստ իս՝ յայտնի կը ցուցնէ թէ Լշմիածնի աւետարանին կողերը՝ մեր առջեւ կը դնեն հինգմասնեայ կրկնակողերու եօթներորդ եւ ութերորդ օրինակը: Սա ալ բացերևու տեսնուեցաւ թէ մենք այս կրկնակողերը՝ մեծութեան եւ կողմնական մասանց նայելով՝ երկու խմբի բաժնելու սովորուեցանք. առաջին խումբը կը բաղկանայ Պարպէրինեան, Վ ատիկանեան, Լ ընտանեան, երկրորդը՝ Փարպէ, Ռավիննայի կրկնակողերէ եւ մեր տախտակներէն: Ըյս վերջինքս այնու ալ առաջնոց կը մերձեանս, որ անգամ մը (ինչպէս Վ ատիկանի կրկնակողին մէջ) մոզուց երկրպագութիւնը վարի երկայնակեան մէջ զետեղուած է, որուն կը նմանի Պարպէրինեանը՝ իւր նուիրատու բարբարոսներովը:

Սղն երբակացութեան կը հասնինք, եթէ արուեստին վրայ ակնարկ մը ձգենք: Պարպէրինեան կրկնակողը սքանչելի գործք մըն է: Այստեղ ու մարտիկն կերպարանքը ճարտար արուեստագիտի ձեռաց արդիւնք է¹: Ընդհակառակն՝ ըստ ընդհանուր ընկալելու կարճեաց միեւնոյն գործոյի գործ համարուող Վ ատիկանեան եւ Լ ընտանեան տախտակք² կը հաստատեն մասնաւոր գաշտագրութեան համեմայն գործուած ըլլալին. այսպիսի են միանգամայն Պարպէրինեան տախտակին վերի ու վարի երկայնակեանները: Ըրուեստագէտը մեծ խնամով գործած է բարձրագանդակները: Փարպէ ու Լշմիածնի տախտակաց նմանութիւնը շատ զգալի է: Երկուքն ալ թոյլ, նուրբ ըլլալուն ամենւին միտ չդնելով գործուած են, կարճես նորաձեւութեանց բազմաթիւ գործատան մը մէջ: Բայց Լշմիածնինը միշտ կը ցուցնէ թէ Փարպէանին համեմատութեամբ՝ աւելի ճարտար ձեռաց պարտական է իւր գոյութիւնը: Վ երջնայէս Ռավիննայինն ամէնէն ստորինն է. երկայն բարակ մարմիններն ու անկեղան գլուխները՝ տախտակին փճուն արուեստագործի մը ձեռքին երաժ ըլլալը կ'ուղարկուին: Էջընդհանուրն կրնանք ըսել թէ առաջին խմբին պատկանողք՝ աւելի խնամով գործուած են. Փարպէ ու Լշմիածնի կրկնակողք թէեւ նշանաւոր կենդանի մ'արտագրութիւնքն են, սակայն Ռավիննայի թոյլ կրկնակողին նման նրբութիւն չունին:

Լթէ հինաց հարցընեմ թէ Լշմիածնի աւետարանին փոսկրեաց կողը կրնայ՞ 989ին՝ ձեռագրին զրուած տարին ի Հայաստան գործուած ըլլալ, յայտնի է թէ ժխտական պատասխան պիտի տրուի: Չենք կրնար միանգամայն ընդունել թէ Լշմիածնինն ուրիշ

¹ Gori's հրատարակութիւնն այնպէս անյաջող է, որ ասոր ճարտար ձեռաց գործ ըլլալն իմանալ անկառնելի է: Նոր հրատարակութիւնը կը պարտաստէ մ:

² Maskell, անդ. էջ 53. Westwood, անդ. էջ 52, Kraus, Real-Encyclopädie, Հտ. Ը. էջ 410:

Հնադոյն կրկնակողէ մ'օրինակուած ըլլայ, ինչու որ այն ասոն օրինակոյն շատ աւելի յաջող գործած տիրաի ըլլար քան եթէ զ. օ. Փարթիզեան տախտակաց նախադիր փորագրողը: Այս խնդիրը շատ զերբու կրնանք պարզել Հեռուեալ եղանակաւ. Այս կրկնակողքս թէ ժամանակի եւ թէ ծագման կողմանէ՝ վերը յիշուած օրինակաց կարգն են: Սեայն Սաքել 1 նոստնան օրինակն թի դարուն գնելու դաղափարը ունկյաւ: Westwood այնը Չ. եւ Ը դարուց մէջ կը գնէ. Վատիկանեանն եւ Փարթիզեանը Է, Չ. կամ Է, Ռաֆիննայինը՝ Չ. կամ Է: Չ. դարուց մէջ: Փ. Վ. Վրատս¹ յամենայնի մտր կը հեռուէի ի Յանկին, թէ եւ այլուր, զ. օ. Է. էջ 459 Ռաֆիննայի կրկնակողը Է դարուն վերջը կը գնէ: Մէյեր, որ Westwoodի համամիտ է, Պարթիզեաններ Վ. կամ Է դարէ կը համարի: Բնականաբար մենք ասոնցմով զոհ չենք կրնար ըլլալ. ուստի քննենք ուստուղենք ասոնց ժամանակն ու անզը՝ միմիայն ազահով ձամբով՝ սյսինքն նկարաց տիրան ու նկարագրներն իրարու հետ համեմատելով:

Վրէժոսոս Բաղճեալ է Զահոյս ընդ մէջ Պետրոսի եւ Պաւղոսի: Միլանի Trivulzi կոչուած թանգարանը հիմնականաց կրկնակողն մը վերի ու վարի երկայնակիւն մասերը կը պահուին, որոնց վերինն ունի. AC TRIVMFACTORI † PERPETVO SEMPER. AVG., վարինը. VIR ILLVSTR. COM. PROFICT. (?) ET CONSVL ORDINAR.² Մէյեր (էջ 51) ասկէ իրաւամբ կը հեռուցընէ թէ այսպիսի կրկնակողեր բղեալէն կայսեր նուիրուելու սահմանուած էին: Ասոր կը համաձայնի՝ աշխարհական անսարան ներկայացընող միմիայն մեզի հասած այս կարգի օրինակին՝ պարթիզեան կրկնակողին կենդանական դաշտին վրայի կայսրը: Վրիտանոնայք՝ որ կայսերական կրկնակողերու գործածութիւնն իրենց մէջ ալ մուծին, կայսեր պատկերին անզ Վրիտանոսինը գրած են եւ հաւանական է որ զՎրիտանոս իրենց առջևի օրինակին ձեւերովը կը ներկայացընէին: Բնականաբար ասոր օրինակ չի կրնար ըլլալ Պարթիզեանն, ինչու որ հոս կայսրն ի ձի հիծեալ կը ներկայանայ մեզ: Բայց կան կայսերաց պատկերներ, ինչպէս Աոստանդիտոսինն ի Տուսնարին 354 ամին³, թէպոսինն ու որդւոյը՝ ձանթ շքանդաններ մը վրայ ի Մատրիս⁴, կամ Աոստանդիտոսինն ու որդւոյը՝ ձանթ շքանդաններու վրայ⁵, որոնց վրայի կայսրն երկայն ժամանակ կը կարծէին թէ Վրիտանոս է: Այս ամէն օրինակաց մէջ կայսրն՝ իւր պաշտօնական անզը բազմած պաշտօնէի երեւոյթն ունի՝ քրիտանոնաց արուեստաւորաց Վրիտանոսի առած երեւոյթն ալ այս է, ինչպէս մտադիր կ'ընէ Մէյեր (էջ 41): Ասոր վրայ է Էջմիածնի աւետարանին կրկնակողը: Այժմե Պերլինի թանգարանին⁶ Vicarius urbis Romae Probianusը՝ որ ասխատի մը վրայ դատաւորական պաշտօնական զգեստն (trabea) հագած եւ ասոնին նախագահ բազմած կը ներկայանայ, Էջմիածնի կողմն Վրիտանոսին հետ համեմատելու ըլլանք, կը անոնէք թէ կատարելապէս իրարու նման են: Պարթիզեանի կրկնակողն ըստ կարծեաց Մէյերի Վ. դարուն կամ առ անագանն Չ. ին սկիզբներուն կը վերաբերի: Ասոր հետ ցոյս վայր ամէնէն աւելի կը

¹ Real-Enc. II. էջ 404:

² Հրատարակած է Մէյեր. անդ. Տիւ. Է. Բ. վարը:

³ Հրատարակած է Strzykowski, die Calendarbilder des Chronographen vom Jahre 354. Պերլին, 1888.

Տիւ. Է. Բ.:

⁴ Հրատարակեալ առ Շնապէի, Բ. Տոյ. Գ. էջ 73:

⁵ Հրատարակած է Froehner, Les médaillons de l'empire Romain, էջ 278, եւ Musei Sanelementiani numismata selecta, էջ 182:

⁶ Հրատարակեալ առ Մէյերի, անդ. Տիւ. Բ.:

Համեմատուէր սրբատփի մը վրայի Վրիստոսը՝ բազմեալ ի գահոյս, որ կը գտնուի ի Պերլին. սոյն սրբատուփը Շնաղէ¹. և և Քրաւս² Պ, Տապելբը³ առ անագանն Պ, և և Պերլինի Յուցանն³ ապահովապէս Պ գարէն կը համարին: Վրիստոսի՝ ասոր նման պատկերի մ'ալ կը հանդիպենք Հռոմիոս Բաստոսի († 359) շիրմին վրայ: Եւ որովհետեւ Էջմիածնի կրկնակողն Վրիստոսը շատ աւելի նման է Պրորիանոսի կրկնակողն քան թէ միւս երկուքը — զիսուն ու սրունից բռնուածքէն և զիբբը ձախ ծնկին յեցուցած բլբլէն առեալ — ուստի որչափ որ մնացեալ նկարագիրները կը ներեն, պիտի ջանանք



ԿՐԿՆԱԿՈՂ ՊՐՈՐԻԱՆՈՍԻ Ի ՊԵՐԼԻՆ (ԸՍՑ ՄԵՆԷՐԻ)

կողինն Պ կամ Ե գարու արդիւնք համարիլ: Յուցում կրնայ համարուիլ առ այս Վրիստոսի անմորուս բլբլը. վասն զի նորագոյն շիրմնեկու վրայ՝ Վրիստոս Պաւղոսի և Պետրոսի հետ խումբ կազմած միջոցին՝ մորուսուր է, այնպէս որ միեւնոյն շիրմին վրայ (Garr. 334 և 335) սոյն խմբին մէջ Վրիստոս մորուսուր է, իսկ իւր կեանքէն այլ աւեսարանայ մէջ՝ անմորուս: Բայցկէս թէ մորուօք և թէ առանց մորուաց կը գտնենք զՎրիստոս ի Ուալեննա S. Vitaleի (Garr. 258 և 259) և S. Micheleի միւսիոններուն վրայ, որոնք Զ գարուն առաջին կիսէն են, ուր Վրիստոս կամարին ներքեւը՝ հրեշտակաց մէջտեղը անմորուս է, իսկ յաղթութեան կամարին վրայ՝ մորուօք: Կոյնք

¹ Բ. Տպ. Պ. էջ 95:

² Բնց. Ա. էջ 401:

³ Repertorium für Kunstwissenschaft 1885. էջ 168:

⁴ Bode-Tschudi, Beschreibung der Bilderwerke der christl. Epoche etc. Թ. 427:

կը տեսնենք, եթէ Փարիզի զՎրիտտո մօրուօք ներկայացընող կրկնակոյն (Garr. 458) եւ Պերլինի կրկնակոյրէն մին (Garr. 451) համեմատելու ըլլանք Ռաֆիննայինն հետ (Garr. 456), որ զօրծուածքէն դատելով թէ, եւ յետագոյն է ժամանակաւ, սակայն զՎրիտտո սակաւին անմօրուս կը ներկայացընէ: Բայ այսմ՝ պէտք ենք բակ, թէ Վրիտտոսի գլխոյն նկարագրէն տախտակին ժամանակը հետեւցընելու համար զգուշութեամբ վարուելու է: Բիւզանդական արուեստն՝ Էջմիածնի կրկնակոյնը ընծայած զրիւք ներկայացեալ Վրիտտոսը՝ Էմենակալ կանուանէ, բայց միշտ մօրուօք կենթադրէ: Ըստնց բացատրութեան այսպէս ներկայացեալ կը տեսնենք զՎրիտտոս՝ եկեղեցեաց գլխաւօր գմբէթը զարդարող նկարաց կենդրոն եղած ժամանակ, այսպէս մանրարուեստի անթիւսն համար արտադրութեանց մէջ, եւ հետեւինն ստի, բայց աւելի յաճախ հոգեւորական Զմեկիկ ժամանակէն սկսեալ զբանց վրայ: Վրիտտոս իրր մանուկ միայն այն ատեն կը տեսնուի, երբ իրր Էմենակալ կը ներկայացուի:

Սոյն կրկնակոյն առ անագանն Օ գարուն սկիզբները գնելու կը ստիպէ զմեզ՝ Պատրիսի նկարագրէր, որ հոս եւ Փարիզի կրկնակոյն վրայ մօրուօք, այլ ոչ կուզէ կը ներկայանայ. Պատրիս առաքեալ՝ Լ գարուն վերջերէն եւ Օ կն սկիզբներէն սկսեալ առհասարակ կուզէ կը նկարուի¹:

Վ երկն երկայնանիկանց պատկերներն ալ՝ Վրիտտոսի պատկերին պէս աշխարհական կրկնակոյնը նմանութիւն են, ինչպէս կը հետեւի Միլանի վերայիշեալ եւ ի Պաղէ² գտնուող ուրիշ վերին երկայնանիկանէ մը: Ըստնք հոսովկական արուեստին, ի մասնաւորի շիրաքանդակութեան ձեւին նկարագրին ունին, որուն էական էր՝ պատկերակիր վահանակ կամ արձանագրութեան տախտակը կրող թեւաւօր մանուկներ: Վրիտտոնայ շիրիմք ալ արձանագրութեան տախտակն ունին, միայն թէ հոս մանուկներն չեն թուիր, այլ տախտակին քոյր կը կենան: Բնդհատական հինգմանանց կրկնակողք առհասարակ թուշուն կը ներկայացընեն զանոնք՝ լայն զգեստով, ծածանող վերարկուաւ եւ սանդղաղով: Ոտերններն խաչաձեւ բունած, մարմիններն դէպ ի մէջտեղ, որոնքին՝ դէպ ի դուրս դարձուցած կը թուշին ձեռքերն ունենալով յաղժութեան պսակ մը, որուն ժապաւէնները դատարկ միջոցը զբաւած են եւ ծածանելով մինչեւ եղբքը կը հասնին: Ըստնցն անգամ Էջմիածնի կրկնակողը զանոնք ժապաւնով կապեալ մայրով կը ներկայացընէ, Վ ատիկանի եւ Էնտոնի կրկնակողք՝ շրջանակով, ուստի ստով յայտնի կը տեսնուի թէ, ստոնք հրեշտակ են: Ը, յաղիսի պսակակիր հրեշտակաց օրինակ են — ի բաց առեալ Մոնցայի (Garr. 434) պաղեստինական մտազաշխարհ վրայներ — S. Vitaleի միսիոնները ի Ռաֆիննա (Garr. 258 եւ 262): Ը, յաղիսի հրեշտակ մ'ալ կը գտնուի արբապի մը վրայ ի S. Ambrogio ի Միլան (Garr. 437, 2) հոգեւորական զիպաց առթիւ: Օղջ մէջ կը թուշտի այն հրեշտակը՝ ձեռքը խաչ մը բունած եւ ինքնին իսկ ստով կը յայտնէ իւր սովիննական ծագումը, ինչպէս պիտի տեսնենք:

Հաղժութեան պսակին միջավայրին բովանդակածն այլեւայլ է: Ինչպէս ի Պաղէլ եւ ի Միլան գտնուող կտորները կը ցուցընեն, աշխարհական կրկնակողք Հոսովայ եւ Պատանդուարոյ Մատիսի զիցուհին (Tyche) անուշա կը ներկայացընին: Պարպէ-

¹ Ճմեռ. Fieker, die Darstellung der Apostel in der altchristl. Kunst Լայպցիկ 1887, էջ 153:

² Հաստարակալ առ Մէլէրի, անգ. Տետ. Ը. (թ. 59 ի թանգարանին Trivulzi, ի Միլան) եւ առ Ռոստի, Bull. 1878. Տետ. Ը. (թ. 60 ի Պաղէլ):

րինեան եւ Լոնտոնի կրկնակողք սոյնին տեղ՝ զՔրիստոս ունին: Լոնտոնինը զՔրիստոս իբր Ամենակող կ'ընծայէ, բայց անտօրուս եւ խաչաձեւ շրջանակով: Պարզէրինեանին խաչն եւ բարձրաբանդակ յատակին վրայ փորագրեալ արեգակը, լուսինն ու աստեղք՝ զՔրիստոս կը նշանակեն¹: Վատիկանի կրկնակողին մի մասին վրայ որ Լոնտոնի կրկնակողին կը վերաբերի, այնպիսի ձեւով խաչ մը կայ պատկին մէջ, որ Փարիզի ու Էջմիածնի կրկնակողերուն համար ծանուցիչ կրնայ համարուիլ: Խաչը հաւասարաբարուն է եւ թեւերուն անկիւնները բոլորակաձեւ յաւելուած մ'ունին. խաչին թեւերուն վրայ եւ ճիշդ մէջտեղը ծակ կայ, որուն տեղ Վատիկանինն ու Լոնտոնինը վարդ ունին: Ըսոր ներքեւ՝ բարձրաբանդակ յատակին վրայ փորագրեալ ճառագայթը կը տեսնուին: Ըյս խաչս այնպիսի է որ բիւզանդական արուեստին մէջ որոշ նշանակութիւն ունի:

Էջմիածնի տախտակայ վերին մասանց անկիւնները՝ արեգական եւ լուսնոյ կիսապատկերներն ունին: Միւս կրկնակողերէն եւ ոչ մին զանոնք ունի: Ըյս կիսապատկերքս՝ խաչին հետ ի մասին եկած՝ ուրիշ երկու յիշատակարան կը յիշեցնեն. նախ՝ Լատերանեան թանգարանին մէկ շերտիք (Garr. 350, 1), ուր արեգակն եւ լուսինը՝ Քրիստոսով՝ յաղթութեան պատիւ մէջ առնուած մենագրին վրայ կը նային վերէն. երկրորդ՝ Մոնցայի պաղեստինական մտադաշնը (Garr. 434, ջեւ 2, 5, 6), սակայն հոս ասոնք երևանին խաչէն ի բաց կը դարձնեն: Բայց այսմ՝ այս կողմանէ ալ Էջմիածնի կրկնակողը կը մերձեւայ շերտնց նկարագրին: Ասպիննայի դրատան կրկնակողն՝ արեգական ու լուսնոյ տեղ երկու հրեշտակապետ ունի:

Բժշկո-Բէռն Էրֆուրէն ըստ Ղուկ. ԺԳ, 2: Ըյս տեսարանը քրիստոնէական արուեստին մէջ թերեւս առաջին անգամն է որ յառաջ կու գայ: Museo Kircherianoյի շերտին (Garr. 404, 1) վրայինը կրնայ հնարոյն ըլլալ: Սակայն ասիկայ Էջմիածնի կրկնակողին շատ աւելի մաս է յետին-բիւզանդական նկարագրին, ինչպէս ինձ յայտնի է միջին եւ յետին-բիւզանդական մանրանկարներէն, Ըթոս լերան նկարաց-մասունէն². Եւ ասոր հետ ամենայն մասամբ միարանող նոր յունական նկարներէն: Հեն՝ մեր կրկնակողին պէս բոլորովին զգեցած չէ հիւանդը, այլ մէջքը զննչակով մը միայն ծածկած: Շիրմին պատկերին նման՝ սոլորբար հիւանդն անթացուպի կոթնած կը ներկայացուի: Երբեք Էջմիածնին պէս ազատ կեցած չի գտնուիր: Ինչ հակառակն երբեք աջը Քրիստոսի աջոյն վրայ դրած չի ներկայանար՝ շերտին վրայինին պէս, այլ մեր կրկնակողին բնծայածին նման՝ ձեռքը բարձրացուցած:

Ըյսպէս կ'ընծային տեսարանս՝ ամէն զծագարդ մանրանկար ունեցող աւետարանք³ եւ Ըթոսի Լաւրա, Պիտիրիսիու եւ Կուտլումուսիու մենաստանաց եկեղեցեաց նկարներն յՕ. զարուն առաջին կիսէն:

Հաջորդ տեսարանին ինչ ըլլան որոշ իմացած չեմ: Որչափ դիտեմ, ոչ հին-քրիստոնէական եւ ոչ բիւզանդական ժամանակն այսպիսի տեսարան մը կ'ընծայէ այն ձեւով՝ զոր ունի Էջմիածնի կրկնակողը: Երկու մեկնութիւն կ'առաջարկեմ. ըստովն բժշկութիւնը՝ ըստ Մատթ. ԺԻ, 14⁴, որուն համար հայրը կ'ըսէ թէ բազում անգամ

¹ Սոյն փորագրութիւնը կը զանոնի սիպերական բաժակի մ'ալ վրան. տես de Rossi, Bull. 1871. Տխտ. Թ. 1, Եւ Garneci 469, 10.

² Հրտ. Schaefer, էջ 192:

³ Տես Kondakoff, История византийскаго искусства стр. 235 сл.

⁴ Հմեմ. Մարկ. Թ. 17, Ղուկ. Թ. 38:

անկանի ի հուր եւ երբեք է ջնւր, կամ անդամալուծին բժշկութիւնը ի սրահս առ
 աստուծոյն Ռեթհեղայ՝ ըստ Յոզի¹։ Եւ 2։ Երկու դէպքի մէջ ալ՝ ջրը մերձակայ կոնքը
 ձկով մէկտեղ՝ ուրիշ բան չի կրնար նշանակել, բայց եթէ հիւանդին տեղական մտաւ-
 որութիւնը։ Սակայն ես իսկ կը տեսնեմ թէ այս մեկնութիւնը զոհացուցիչ չէ։ Ըւե-
 ասարանաց համաձայն՝ լնտար զեանի վրայ է։ Բեթհեղայ աւաղանին քովէ հիւանդը՝
 սրահի մը մէջ։ Հետին-բնադրական եւ նոր յունական արուեստն այս երկու տես-
 արաններս ալ կը նկարէ։ Եւստոյն բժշկութիւնն այնպէս չէ, ինչպէս կը ներկայացնէ
 'Կարաց-մատենը'՝ պատանին մէջ քէն վեր մերկ, կարճ սոնոցով կը ներկայանայ՝ ձեռքն
 ետեւ ու անձինքը՝ յետ հակած. նկարագիր մը, որուն Ոստիպել անգամ հետեւած է
 իւր Ըյալիերպութեան մէջ։ Ըթոսի Գոքեխարիւ եւ Լաւրա մենաստանաց եկեղեցեաց
 նկարներուն մէջ այսպէս կը տեսնենք լուսնոտը՝ Ժ.Օ. դարէն։ Բնդհակառակն անդամա-
 լուծին բժշկութեան տեսարանը՝ 'Կարաց-մատենին'² համաձայն է. միայն հրեշտակը³
 կը պակաս եւ աւաղանը ջրօրի է փոխուած։ Ար տեսնենք թէ ինչպէս բժշկեալը, որ
 կարճ վերարկու մը հագած է, անկողինը կանակն առած՝ կը մեկնի։ Իրեն քոյր եր-
 կու կամ երեք հիւանդ ալ կը կենայ։ Ըյալէս՝ ի Ժ.Օ. դարու՝ Լաւրա, Գոքեխարիւ
 եւ Աուարումսիւու վանաց կաթուղիկից մէջ։ Եթէ հմտագոյնը այս տեսարանին ինչ
 ըլլալը բանի մը նմանընէլ չյաջողին, ամէնէն լուսագոյնը կը լայ ընդունիլ, որ անվաւե-
 րական զիւահամութիւն մըն է։

Ըրաւմալու-ձին Էթլիւ-նիւնը հին-քրիստոնէական արուեստին սովորական արտա-
 դրութիւններէն է։ Գեանագիտորէն նկարաց մէջ մարդ մը կը տեսնենք կարճ զգեստով,
 անկողինը կանակն առած, ուր Վրիստոս ներկայ չէ։ Ըյալէս միանգամայն սակի բաժակ-
 ներու վրայ, սակայն ոմանց վրայ Վրիստոս ալ կը տեսնուի (Garr. 171, 1 եւ 177, 2)։
 Վրիստոս զիւսուր անձն է շերիմներու պատկերներուն մէջ, ուր՝ ինչպէս նաեւ այլ
 տեսարանաց մէջ հիւանդը շատ փոքր կը ներկայացուի՝ տեղ շահելու համար։ Ապու-
 չէի վիցյութեան համեմատ՝ մեասասն շերմի վրայ անդամալուծը՝ Վրիստոսի դէպ ի աջ
 բարձրացուցած աջոյն ներքեւը կը կենայ. Վրիստոսի ձախը զարտեալ բան մը կ'ունենայ։
 Վանի մ'օրինակներու մէջ միայն անդամալուծը քիչ մը մեծ (Garr. 314, 5—306,
 1—404, 2) կը ներկայացուի կամ տեսարանը տեղափոխութեամբ մը կը փոփոխի
 (Garr. 313, 4—315, 2—319, 3)։ Փոքրիկ կէտ մը կայ, որ շերմի վրայ ներկայա-
 ցեալներուն յատուկ է. այսինքն թէ հիւանդը սովորաբար մահճն՝ երկայն կողմը դէպ ի
 աջնու բռնած կը տանի։ Սոյն երևւոյթը կը տեսնենք միանգամայն Միլանի փղոսկրեայ
 տախտակին վրայ (Garr. 455)։ Շերմի այս նկարագրէն զատ կայ նկարագիր մը՝ որուն
 ներկայացուցիչն են փղոսկրեայ բարձրաբանդակաց խումբ մը եւ S. Apollinare nuovoյի
 միւսիոնն ի Ոստիանայ (Garr. 248, 1)։ Փղոսկրեայ բարձրաբանդակներէն են Փարիզի
 (Garr. 458) եւ Ոստիանայի (Garr. 456) կրկնակողք, Միլանի փղոսկրեայ մի
 տախտակը (Garr. 448, 2), ուրիշ մը՝ Պոպէ, Կանա⁴ գրաստնէ եւ երբորդ մը՝ Լուք-
 աչնայուրիէ (Garr. 452, 1), զարձեալ Hahnի ափերն (Garr. 438, 5) ի Musée

¹ Schaefer, էջ 191։

² Ընդ. էջ 188. § 249։

³ Միայն Ապուսիայու վանաց կաթուղիկէն մէջ կը գտնուի։

⁴ Նկր. առ. Westwood, անդ, թ. 126, յէջ 55։

Cluny (Garr. 438, 4) եւ ի քրիստոնէական թանգարանին Վատիկանու՝ ի Սիլանէ (Garr. 438): Ըստնք հիւանդը՝ մահճին նեղ կողմէն ուսոյք վրայ առած եւ երկու ձեռքերնորով կրծոց վրայ՝ մահճակալին երկու ոտքերէն բռնած կրնծային: Լա դարձած կը նայի Վրիստոսի, որմէ կը մեկնի: Ի բաց առեալ միսինն ու տիւրը՝ Վրիստոս ձախ ձեռքը խաչով կը ներկայանայ: Լճէ հիմնց աչքերնիս Լճմիածնի կրկնակողին դարձը նենք, կը տեսնենք որ ասիկայ կէտ առ կէտ այս նկարադրին կը համապատասխանէ եւ մասնաւորապէս կը նմանի Փարիզի կրկնակողին եւ Սիլբէլեան ժողովածոյին տախտակին: Ըստճին անգամ՝ հոս այնպիսի պատկերաց խմբի մը կը հանդիպինք, որ իւր ներկայացուցչէն՝ S. Apollinareի միսիննին միջնորդութեամբ իւր ուղիննական ծագումը կը յայտնէ: — Սեր կրկնակողին փորագրիչը յաւելումս մ'ըրած է՝ մահճակալին ձախ ոտքին կտոր մը կցելով՝ թէ ինչո՞ւ անմեկնելի է: Հաւանականաբար անմտադրութեան արդիւնք է, որ օրինակողը կը մասնէ:

ՎԻՄԻՆԻՒՄ ԷՃԻՒՆԻՆՆԸ հին քրիստոնէական արուեստին եւ այն հին յիշատակարանաց մէջ չի գտնուիր, որովք վերջիչեալ խմբին շին վերաբերելի — այն խմբին վրայ աւելցնելու է սուսի մ'ալ՝ որ ի Սէս կը գտնուի: — Ըստ տեսարանիս մէջ՝ ասոնց նկարադրիչը միեւնոյն չէ: Վասն եւ յատաճ այն ներկայացումն առնենք, զոր յայտնապէս մեր առջեւը կը դնեն աւետարանք: Սէսի վերջիչեալ տիւրն վրայ՝ աջակողմը շերիմ մը կը տեսնենք փակեալ դռներով: Սոյն շերմին առջեւէն զիւահար մը մէջքէն վեր մերկ ձախակողմը կը վազէ դէպ ի Վրիստոս՝ որ զենքը կ'օրհնէ: Ընչուչա Սարկ. Լ. 2, Գուկ. Բ. 27. մէջ պատմութեան ներկայացումն է: Սոյնը կարծեմ կրնծայէ Hahnի տիւրնէ մին (Garr. 438, 5). վասն զի զիւահարը հոս ալ կէտ մէջքէն վեր մերկ է: Երկրմ չկայ: Հիւանդը՝ աւետարանի պատմութեան համեմատ՝ ի ծունր իջեալ կը կենաց Վրիստոսի առջեւ եւ թէ ոտից եւ թէ իրարու հետ շղթայի զարնուած ձեռքերը անոր կը կարկատէ: Վասն՝ այլ յոսին կանգեալ կը տեսնենք զիւահարը՝ Փարիզի կրկնակողին վրայ, ուր ձեռքերնորով միայն շղթայակապ են: Վ Երջնապէս շղթայք բոլորովն խզած ինկած են Լճմիածնի կրկնակողին վրայ՝ աւետարանի բնագրին հետ կէտ առ կէտ միարանելով: Ի վերայ այսր ամենայնի փորագրիչը հոս Սաաթ. Բ. 28 պատմութեան հետեւած է՝ երկու զիւահար ներկայացրելով: Սին՝ ի յատաճակողման պատկերի՝ իւր զրիւքը կը համապատասխանէ մեր վերը յիշածին. երկրորդն անոր ետեւը կեցած է՝ բոլորովն մերկ: Յայս վայր ամէն ծանօթ բարձրաբանդակներու մէջ Վրիստոս խաչը ձախ ձեռքը բռնած է: Սոյն այս դործողութեանս մէկ յետնագոյն տեսիլը կրնծայէ S. Apollinare nuovoյի սրբանուական միւսէտնն եւ Պատլեանան դրատան տախտակը. ի ծունր իջեալ բժշկելոյն քովը կը տեսնենք այն սիւնը, յոր կը մտնէ զիւաց լէզէտը: Սուրբանոյի կրկնակողին ընծայածն բոլորովն տարբեր է (Garr. 456): Հոս զիւահարը մերկ չէ եւ շղթայակապ ձեռքերնորով վզին կարգած են: ՎԵԼԸր զիւէն կէլէ: Վիւին զգեստն ու տիւրը յետնագոյն դարերը մասնանիչ կրնէ: Ըստճին անգամ Սարուլայի Ս. Վրբին մէջ՝ յամ 586 (Garr. 141, 2) սոյնը թուարկեալ կը գտնենք: Ըստ որշիչ նկարադրիչը բարձից կրկնուած կը գտնենք բիզանդական նկարաց, Վկարաց-մասնին, Ըթոս լերին Վիտնիսու մենաստանին տավանկարաց (fresque) մէջ՝ յամէն 1523, Սուարու մուսիու եւ Վորէլարիու մենաստանաց մէջ՝ յամէն 1540 եւ 1568 եւ այլն:

Մ․․․․․ Վրիստոսի յՂրուսաղէմ չէ գտնուիր զեանադարձանաց նկարներուն մէջ․
 ընդհակառակն սովորական է շերիմներու։ Առհասարակ (Garr. 322, 2. — 348, 1.
 — 381, 2 եւ հաւանականագոյն 399, 8) Վրիստոս իւր Վրայ հեծած զէպ յաջ
 կերթայ։ Չախ ձեռքովն էր կը վարէ, աջովը կ'օրհնէ։ Իւր առջեւէն տղայ մը վերար-
 կուն կը տարածէ, ուրիշ մը մազցնելով ծառ կ'ելլէ։ Հիօլմակը ետեւէն կու գայ։ Առա-
 քեալք (Garr. 313, 4. — 367, 2. — 372, 2. — 402, 1 եւ հաւանականագոյն 317, 4)
 կ'ընկերանան, վերջապէս չուոյն զիմացը կ'ելլէ մարդ մը (Garr. 324, 2. — 365, 1),
 որ շերմի մը նկարին վրայ (Garr. 314, 5) քաղաքին զրան առջեւ կեցած է ձեռքը
 պսակ մ'եւ իրեն ընկեր ունի երկու հոգի՝ որ ձեռքերնին արմուէնեոյ ոտ կը բռնեն
 (հմմտ. Garr. 404, 4)։ Փարիզի ու Լըժմիածնի հինգմասնեայ կրկնակողերն այս պարա-
 կան անձին տեղը Լըրուսաղէմայ Բախտը կ'ընծայեն։ Իձեւ այս փոփոխութիւնը չնչին բան
 մըն է, սակայն նկարի մը հին-քրիստոնէական թէ բիւզանդական ծագում ունենալը կ'որոշէ․
 Վրիստոս՝ շերմի նկարաց համեմատ այնպէս իւր Վրայ կը հեծնէ որ երկու ոտքերն
 անասնոյն երկու կողերէն կը կախուին, իսկ հոս այնպէս, որ երկու ոտքերն ալ մէկ կող-
 մանէ կախած է։ Բիւզանդական ինչ ժամանակէ ինչ գործ ալ առնուս՝ այսպէս կը նկարէ
 զՎրիստոս․ նոյն իսկ արդի Հնդկը եւ Ռուսը՝ այսպէս հեծեալ կը նկարեն զՎրիստոս։
 Վաղաքի մը անձնաւորութիւնը՝ հին քրիստոնէական արուեստին օտար է․ իսկ բիւզան-
 դականին սովորական․ կը յիշեցնեն միայն այն անթիւ անհամար օրինակները՝ զոր կ'ըն-
 ծայէ Հիսուսայ գայարածը, Կոստանդնուպոլսոյ՝¹ քրիստոնէութեան ժամանակ ծագում
 առած Բախտը, նոյնպէս Ռաֆնէնայինը, որ՝ Agnellusի² բաժնին համաձայն՝ ինչպէս
 անձնաւորեալ չ'ուզուց քով, նոյնպէս Իձեղորթիկոսի պարատան զլիսաւոր զրան վերելը
 գտնուող միւսէնին մէջ՝ ինքնին իսկ թագաւորին քով կը կենայ։ Ինչպիսի է թէ արեօք
 ռաֆնէնացի արուեստագէտը՝ Վրիստոսի յՂրուսաղէմ մուտին մէջ անմտադրութեամբ
 մուծած չնչն Լըրուսաղէմայ Բախտը։ Ինչու որ Codex Rossanensisը, ուրիշ ամէն բիւ-
 ղանդական, այլ ոչ ռաֆնէնական նկարք՝ անձնաւորութեան տեղ պարսպապատ քաղաքն
 ունին³։ — Միլանի արուեստագիտաց զլիսաւոր մէկ գործոյն՝ մայր եկեղեցոյ գանձա-
 տունը պահուող մատենին կողմն (Garr. 454) եւ Մաքսիմիանոսի Ռաֆնէնական Պահուան
 ընծայած՝ Մուսան յՂրուսաղէմն, իրարու հետ համեմատելը շահաւէտ կրնայ ըլլալ․
 Միլանինին վրայ Վրիստոս հեծեալ կը վարէ այնպէս, ինչպէս շերիմներու վրայ, ետեւէն
 կու գայ մարդ մը՝ ձեռքն արմուէնեոյ ոտ, մանկունք իրենց զգեստները ճանապարհաց
 վրայ կը տարածեն։ Իսկ Ռաֆնէնայինին վրայ՝ Վրիստոս բիւզանդական ոճին համաձայն
 հեծած է եւ ուն առած խաչը՝ ձախովը կը բռնէ։ Բայ ի քանի մը խոտորումներէ այլն
 ամենայն նոյն է․ արք՝ արմուէնեոյ ոտերով եւ կին մը Վրիստոսի առջեւ փոխաթ մը կը
 տարածէ։ Լըժմիածնի կրկնակողին պէս։ Այս երկու փորագրութեանց հասարակաց նկարա-
 գրին վրայ աւելցնելու է որ Վրիստոս՝ Մաքսիմիանոսի զահայեց վրայ՝ ձախ ձեռքը խաչ
 ունի, ինչպէս առհասարակ ամէն հրաշագործ տեսարանաց եւ յՂրուսաղէմ Մուտին մէջ։

Ս․ Առաքելաբանի Բաղնիշատի Գրքի մէջ աւելուցանուած է զնկարն իսկ զարեւելի
 զարեւելի եւ ըստ սովորութեան կրկնակողներու վրայ ներկայացեալ կնոջ մը նկարէն առնուած

¹ Հմմտ. Strzygowski, die Calenderbilder des Chronographen vom Jahre 354, էջ 24։

² Liber pont. De S. Petro seniore XXVIII. c. 2, էջ 175։

³ Codex Rossanensis, հրտ. Gebhardt եւ Harnack, Տես. Ե։

է այնպէս, ինչպէս Վրիտտոսներ՝ պաշտօնէից նկարէն: Երբեամբք ալ ի Պագէլ կողեացեալ պահուած վերին մաս մը կայ, որուն վրայ կ'ընթեռնուէր PERPETUAE SEMPER † AVGVSTAE,¹ հաւանականագոյնս ինչպէս բրեաշեր կայսեր հինգմասնեայ կրկնակող մը կը մատուցանէր՝ մէջտեղը կայսեր պատկերով, սոյնպիսի բնծայ մ'ալ կ'ընէր բրեաշեր կամ իւր կ'ինը՝ իշխանուհոյն, միջովայրը կայսրուհոյ պատկերով: Եւ այս օրինակ չունինք: Բայց այս դէպքիս մէջ ալ՝ համեմատութիւններով կրնանք այնպիսի նկար մը կազմել, որուն վրայ իբր թէ կայսրուհին արդեամբք ներկայացեալ ըլլայ: Պահակորիդիս ձեռագրոյն² մէջ ի Վիեննա՝ ճիշդ կրկնակողերու յատուկ ոճովն է ներկայացած Հռութանէն՝ երկու կողմն ունենալով զՓϩΟΥΣΙΣ եւ զΜεγαλοϩυχία: Ենպահաս չեն օրինակներ՝ որ կ'ընծայեն մայր մը՝ որդին գիրկը: Փաւստայի երեք ոսկեայ շքադրամ կայ՝ վրան կայսրուհին՝ գիրկը իշխան, որ ըստ Kennerի³ 317ին դրոշմուած են եւ զկայսրուհին ի յառաջակողման պատկերի՝ ի դահոյս բաղմեալ եւ երկու ձեռք գիրկը հանդող տղան բունած կը ներկայացընեն: Ենոր համար անկարելի կը համարիմ այս պատկերին Ս. Ըստուածածնի՝ որդւոյն հանդերձ անհարկել տալը, վրան զի կ'ինը հոս քօղ չունի եւ զլուրը դրած է երկու կողմանէ վար կախուած եւ պատուական քարերով զարդարուած թագ մը: Kenner մտադիր կ'ընէ որ տակաւին ցուցուած չէ Աստանդիանոսի եւ իւր որդւոյ շքադրամներուն վրայ սուրբ անձանց պատկերներ ըլլայր եւ թէ բաղմերոյն քով կեցողք՝ Երջանկութիւն եւ Ըստղիկ են եւ ասով Ս. Ըստուածածնի հետ չեն կրնար միարանել: Կայսրուհին պարզապէս իբր Վիթութիւն կը ներկայանայ հոս՝ կայսերական շքանակով: Մտադիր ընել կ'ուզեմ որ շերտ Մամէայի նկարագիրն ալ ճիշդ այս է: Եւ այս եւ ցուցում ունինք Վատիկանեան ծանօթ խումբը⁴, նոյնպէս Հռութան Մամէայի († 235) եւ Լուկիլա Վէրիի⁵ շքադրամները: Եւս հնագոյն ներկայացմունք՝ հին քրիստոնէական արուեստին իբր օրինակ ծառայած են, յորում Մարիամ մերթ մանուկը բաղկաց վրայ կամ գիրկը, մերթ խանձարրապատ մանկամբ կ'երեւայ⁶: շին բիզանդական արուեստը միայն՝ զՍ. Ըստուածածին միշտ ի յառաջակողման պատկերի՝ փակեալ զգեստով կը ներկայացընէ: Եւսպէս է միանգամայն Փաւստա՝ ոսկեայ շքադրամներու վրայ եւ անշուշտ այսպէս կը ներկայանար կայսրուհին զահաժառանգով մէկտեղ՝ փղոսկրեայ կրկնակողերու վրայ: Հաւելուածէն դատելով՝ թերեւս Պերլինի արքունի թանգարանը գտնուող փղոսկրեայ տախտակ մը՝ այսպիսի կրկնակող մը հետ ունեցած սերտ յարաբերութիւնը կը ցուցընէ: Ըստ Ս. Ըստուածածին՝ S. Apollinare nuovoyի միակրնին (Garr. 244, 2) Ըստուածամօր բուն բիզանդական տիպն ունի: Լոնտոնի (Maskell էջ 53), Փարիզի (Garr. 458, 2) եւ Եջմիածնի հինգմասնեայ կրկնակողերու խումբը քիչ մ'աւելի ազատօրէն կազմուած է: Թէեւ Ս. Ըստուածածնի գիրքը՝ ամէնուն վրայ ալ ի յառաջակողման պատկերի ըլլալուն՝ ճիշդ նոյն է, սակայն մանուկը բռնելու եղանակն երեք կրկնակողին վրայ ալ այլեւայլ է: Լոնտոնեան օրինակին վրայ՝ զՎրիտտոս ի յառաջակողման պատ-

¹ Հրատարակած է de Rossi Bull. 1872, Տխտ. Ը. թիւ 3:

² Հրտ. Labarte, Les arts ind. pl. 78, Agincourt Peint. pl. XXVI Kondakoff, Hist. de l'art byz. էջ 108:

³ Jahrbuch der Kunstsammlung des Kaiserhauses Զտ. Թ. էջ 170. թիւ 270:

⁴ Visconti Museo Pio Clementino, Տխտ. 4:

⁵ Ekhel. doct. num. Է. էջ 288, Cohen, Méd. impér. Գ. էջ 493, թիւ 32-34:

⁶ Հմտ. de Rossi, Imagines selectae. Roller, Les catacombes, Բ. էջ 6Ը եւ 2Բ. Rohaut de Fleury, La sainte Vierge. Lehner, Die Marien-Verehrung etc. Տխտ. Ը. եւ Liell, Die Darstellung der allerheiligsten Jungfrau und Gottesgebärerin Maria etc. էջ 236:

կերէի՝ բարձր — գրեթէ թմաշերտ պէս Ս. Մատուածածնի բաղկաց վրայ նստած կը տեսնենք: Ս. Մատուածածնի ածողը՝ Վարխատոս ուսէն, իսկ ձախողը ոտքէն բռնած է: Փարիզի կրկնակողը Չարխատոս քիչ մ'աւելի ցած նստած եւ զՍ. Մատուածածնի երկու ձեռքովն Վարխատոսի ծնկերէն բռնած կը ներկայացընէ: Էջմիածնի կրկնակողն վրայ մանուկն աւելի կողմնակի կը տեսնուի: Ոտուրները մօրը գրկից դրած անոր կը նայի իսկ Ս. Մատուածածնի ձախ ձեռքովն որդին գրկած է եւ աջն անոր ոտքին վրայ հանդէջուցած: Հիսուս Մանկան բռնած իրերն ալ այլեւայլ են: Ընտոնեան կրկնակողն վրայ կը տեսնենք որ գիրք մ'ունի ձեռքը եւ խաչաձեւ շրջանակն ալ կը նշմարուի: Փարիզի կրկնակողը՝ ձեռքը խաչով, Էջմիածնիներ՝ զալարեւալ բանով մը կը ներկայացընէ առանց շրջանակի: Մտով յայտնի կը տեսնենք թէ տակաւին այն ժամանակ, յորում ծագած են այս կրկնակողք, որոշ եւ հաստատուն նկարագիր մը չկար, որուն հետեւէին զՍ. Մատուածածնի՝ Հիսուս Մանուկը գրկից ներկայացուցած ժամանակ: Ըրուեստագէտք կը համարէին կամ կ'ընդօրինակէին այնպիսի սիւրճադրեր, ինչպիսի էին անոնք, որոնք զՀերա Սամէա կամ զկայսրուհին կը ներկայացընէին: Սակայն կրկնակողք այսու զՍ. Մատուածածնի չեն բնծայեր իբր Ս. Ուղեցոյց, ինչպէս կրնար կարծուիլ առաջին տեսութեամբ: Վերջերս ի Բիւզանդիոն ընդհանուր գործածութիւն զանտղ այս նկարագիրը զՍ. Մատուածածնի միշտ յտանկայս կ'ընծայէ՝ աջ բաղուկը մանուկը եւ աջ ձեռքը կրծոց առջեւ տափաձեւ բռնած, ինչպէս կը կարծեմ թէ այլուր ցուցընել պիտի յաճողեմ:¹ Միայն տառատուն ու գլխազիրը կրնան մասնանիշ ընել կրկնակողերու բնծայած տեսարանաց բիւզանդական բլլարը: Ի գահայս բաղմեալ Մատուածածնի նկարագիրը գրկից որդին եւ երկու կողմը Վարրիէլ եւ Միքայէլ հրեշտակապետք, Ըմենակալին պէս բիւզանդական եկեղեցեաց նկարաց մէջ՝ այն ալ կանարաց վրայ իւր որոշ տեղն ունի: Ըստպէս Ս. Սոփիայ եկեղեցոյն² միւսէնններուն վրայ, ի վանս Վասինի՝ Ըթէնքի³ մօտ, ի մենաստանին Ս. Վուկասու ի Հեղեկոն⁴, ի Կոյմիսիս եկեղեցոյն ի Եփեսոս⁵, եւ առանց բացառութեան՝ յամենայն եկեղեցիս Ըթոս լերին եւ այլուր⁶: Ըստպէս միանգամայն վրան ալ՝ որոնք բիւզանդական սաղեցութեան գրոշմը կը կրեն. որպիսի են Փարենցոյի⁸, Սոնրէայի եկեղեցին, ուր Ս. Մատուածածնի կամարին մէջ զետեղեալ Ըմենակալին առջեւ խոնարհադոյն տեղ մը կեցած կը տեսնուի⁹, Վենետից Ս. Սարկոսը եւ Վապուայի քով Գորմիսի Ս. Հրեշտակը:

Նոյն նկարագիրը կամ գրոշմը բիւզանդական Սաղմոսարանին այն խմբագրութեանն ալ անցած է, որուն մանրանկարները նուիրուած են Վաւթի կեանքը եւ փառաբորութիւնները պարզելու: Ըստպէս է ներկայացած Մատուածածնայն երկու հրեշտակապետք

¹ Ըստ այն տիպն է, զոր եւ (Cimabue und Rom, էջ 49) կանգուն կեցող Մատուածածնի նկարագիր տեսնուած էմ: Ընդհանուր բնօրնելութիւն գտած էր այս նկարագիրը Խոսայիս Թ. Գ. գարուն:

² Salzenberg, Die altchristlichen Bandenkmale von Constantinopel, էջ 108. Տխոս. Լ. Բ.

³ Χριστιανική ἀρχαιολογία της μονής Λαφτιον υπό Γ. Λαφτιανη εν Αθήναις 1889, էջ 136:

ներն այն մանրանկարաց հետ համեմատելը, որ յիշեալ կարողնեցան ձեռագրաց մէջ եւս
կենաց աղբեր հետ առնութիւն ունին, ճոխադոյնս պիտի սպացուցանէ վերջնոյս ասորի
սկզբնագրերու վրայէն առնուած ըլլալը:

Պատճառնք տեսնենք թէ որպիսի է Ըջմիածնի աւետարանին ընծայած սրբարանին
նկարագիրը: Սրբարանն՝ պարզ եղանակաւ՝ խաչով, կանթեղով եւ վարագուրաւ նշանու-
կուած ըլլալովն, քրիստոնէական հնարոյն անպաճոյճ՝ արուեստին արդիւնքը կրնայ հա-
մարուիլ: G. B. de Rossi, որուն մանրանկարներս ցոյց տուի, կը կարծէ թէ սրբարանի
իրական օրինակն ալ կրնայ մասնանիշ ընել: Սեր առջեւը կը դնէ եկեղեցւոյ այն ոչ-
փակ կողմներն (abside), որ կիսարդը ձեւով կու գան կը կցին եկեղեցւոյ զլուսար
նաւուն սեանց վրայ հանգչող երեք կամարաց միջնորդութեամբ եւ կըսէ² թէ ամենահին
օրինակն են Սեյլերոս եպիսկոպոսի եկեղեցւոյ (366 — 412/3) — այժմեան S. Gior-
gio Maggiore ի Նէապոլիս — մնացորդներն: Թէ մանրանկարիչն կիսարդը կողակ
մը կուղբը ներկայացընել՝ շատ հաւանական կ'երեւայ, ինչու որ ասով միայն պատշաճ-

¹ Հրտ. է Bastard, անդ եւ Louandre, Les arts somptuaires.

² Հմտ. Bull. di arch. crist. 1880, էջ 144 եւ Schum. Ժ-ԺԸ: Holtzinger, Die altchristliche Architektur in systematischer Darstellung, էջ 79:

օրէն կը մեկնուի քովժարին՝ կրտսրորն հեռանկարի ձեւով ներկայացնելուն անցածոյ փորձը ըլլալը: Վճիպակի վրայ¹ հաստատուած խաչն Արկատիոսի ժամանակէն ի վեր դրամոց վրայ յաճախ կը գտնուի եւ կը յիշուի² միանգամայն արձանաց ձեռքը արուած ըլլալն, ինչպէս՝ Հուստինիանոսի ծանօթ ձիւղոր անդրոյն ձեռքը յAugusteon ի Ա. պոլիս: Արդէն Պրոտրոպիոս զեզակի յΑΠΟΛΟΞΙ՝ այսինքն տիեզերաց նշանակութիւն կու տայ՝ որուն Հուստինիանոս կը տիրէ խաչով³:

Վերջորոս Բագրեատը է Գահնոյս ընդ մէջ Պետրոսի եւ Պօղոսի ամենեւին չի համարատարաներ Ամենակալի նկարագրին, որուն ծանօթացանք փորսկրեայ առաջակողմեան կողին վրայ խօսած ժամանակին: Այստեղ ձեռքը մատեան չունի, այլ ոսկիդէն մակամուրը խաչ՝ որ պատանոց կերպարանօք ներկայացելոյն աստուածածային աստքումը կը ջուցընէ: Հոսարուլայի ասորի աստուածաշնչոյն մէջ Վրիստոս միշտ մօրուաւոր է: Հրաշարծութիւն ներկայացընող տեսարանաց եւ զՎրիստոս ի զահոյս բաղմեայ ընծայող մանրանկարին մէջ շատ անօր մօրուօք կը տեսնենք զինքը: Ամանադէս իրը 600ին դործեալ պաղեստինական մետաղաշէջք եւս ի Մոնցա մօրուօք զիտնի զՎրիստոս:⁴ Հաւանականացոյնս մեր մանրանկարը այդ Օ. դարուն վերջին քառորդին արուեստական արտադրութեանց կրիցագոյններէն մին է: Ասորական աստուածաշնչոյն հետ յայնմ կը միարանի, որ Վրիստոս պարզ շրջանակ եւեթ ունի: Արմիք բարձն ու քառակուսի եւ ձուածեւ աստղըք զարգարեալ պատուանդանն հնազոյն միւսիտներու մէջ կը զրուտուի, ինչպէս ի միւսիտին S. Pudenzianaի (Garr. 208):

Պետրոս եւ Պօղոս զրեթէ այն նկարագրու կը կենան զահոյցից կրկու կողմն, որով կը ներկայանան աւետարանին փորսկրեայ կողին վրայ. հանդերձք եւ աջոյն շարժուածք ճիշդ նոյն են: Միայն Պետրոսի գլխոյն կրած դրոշմը քիչ մ'աւելի որոշ է կրկու կողմանէ, զորս ցցուած զանդուր մտղերուն պատճառաւ: Պօղոս այստեղ ստիպալին կնպաղուխ չէ: 586ի աստուածաշնչոյն մէջ զինքն անդամ մ'ի նկարին Պետեակոստի կնպաղուխ կը տեսնենք, անդամ մ'ալ մազով՝ ի Համբարձման: Արեմն Օ. դարուն տակաւին որոշ չէր յԱսորիս Պօղոսի նկարադիրը:

Մանրանկարուցս հնութեան վկայ է ձախ բարկի վրայէն վար կտիեալ ազանելեաց ծաղքերուն մէջ տեսնուած H տառը, որ ամէն սպիտակագրեաց արանց, նոյն խակ Վրիստոսի հանդերձից վրայ կը գտնուի ի տեսարանին Աստուածամօր: Սոյն այս տառս միայն ի զահոյս բաղմեալ Վրիստոսի ծիրանեզոյն զգեստուն եւ Արրահամա վերաբրելուն վրայ չի տեսնուիր:⁵ Սոյն նշանադիրը կ'ընծայեն եւ 586ի աւետարանին մէջ գանուող Պետրոսի եւ Պօղոսի ազանելեքներն (Garr. 139, 2). այդ տեղը կայ եւ հրեշտակ մը՝ որուն զգեստին ճիշդ միւսեւոյն տեղը կայ Γ՝ կրկու զձերու մէջ կիտով մը: Անշուշտ նախնարար այդ նշանադիրը դործատան նշաններն էին եւ յետոյ ու ասկաւ ասկաւ սոսրական

¹ Sabatier, Description gén. des monnaies byz. Գ. 4. Գ. 31. Օ. 5 եւ 19 եւ այլն:

² ELL. Phil. Σύλλογος, Բ, էջ 103:

³ De aedificiis, Ա. էջ 182:

⁴ Կառուչի կը կարծէ (առ. 434. 3) թէ քրիստոս այստեղ՝ ի Համբարձման ցարտուղութեամբ միայն մտքում ունի: Բայց այս կարծեաց զէմ՝ կը բողոքեն այն տեսարանին ուրիշ երեք օրինակներն ու այն պարագան, որ մետաղաշէջքու ի մանրանկար անորոշ ու տարրամ փճակը այսպիսի ենթագրութիւն մ'ընելու բացարձակ ասուգրութիւն չեն կրնար հայտնայթել:

⁵ Գրեմէ կը պակտի Տր. Բարամեանցի զձագրութեան մէջ եւ ես եւս չկրցայ իմ եղծեալ լուսանկարի մէջ նշմարել:

եղան: ¹ Այնիւրը կը գտնենք եւ գեանադարձանաց նկարներուն (Garr. 12, 18, 21, 26) եւ ոսկեայ բաժակաց վրայ, որոնք ըստ Աստուչչիի Վ գարու սկիզբէն կամ Վ գարու վերջէն են: ² Վրեթէ ամէն միւսիաններու վրայ կը գտնուին: Մանաւորապէս H տառը յաճախ գործածուողներէն է — յորոյ են եւ I, Z եւ Γ —: Ար տեսները այն դիրքն ի գեանադարձան (Garr. 12 եւ 21, 2), ոսկեայ բաժակի մը վրայ վեց անգամ (Garr. 187, 4), Թէոդորիկոսի ժամանակէ մնացեալ միւսիաններու վրայ՝ որ կը գտնուին ի S. Maria ի Առմեղին եւ ի S. Apollinare nuovo ի Ապօլիննա, ի Մայր եկեղեցւոջ Փարենցոյի (Garr. 276), ի S. Venanzio յէ գարե եւ նոյն իսկ յէ գարե ի Շաշարանի Ղեւոնի Վ (Garr. 283) եւ ի SS. Nereo ed Achilleo (Garr. 284): Աստի այն նշանադրին Էջմիածնի աւետարանին մանրանկարուց մէջ գտնուելէն կրնանք հետեւցրնել թէ ասոնք 800էն յստաջ նկարուած են. մեծ նշանակութիւն ունի H տառին 586ի տարրի աստուածաշնչոյն մէջն ալ գտնուիր:

Յաջորդ թղթահամարաց ընծայած Աբէոյ Ըոնոյն Ըրուլէն՝ չորս աւետարանիչք կը հետեւին: Թէեւ անձանց նկարադիրք առ այս զորս որ ցուցում մը չեն ընծայեր, սակայն ասորական ձեւադրաց վրայէն եղած կարողնելեան ընդօրինակութիւնք հետեւութիւնս կը հաստատեն: Թէ Վոդեակալիի եւ թէ Աուստինի աւետարանաց մէջ բաց ի միտարանէ եւ կենաց աղբիւրէ կան եւ այնպիսի մանրանկարք՝ որ զԲրիտանոս պատանոց կերպարանօք ի զահայոց բազմեալ եւ չորս աւետարանիչները մեր աջեւր կը գնեն: Ահարադիրք հոն արեւմտեան են: Մեր ձեւադրին մէջ ապուսին աւետարանիչք յոտնկայս կը ներկայանան, որ եւ թՎ գարուն իսկ բիւզանդական ձեւադրաց մէջ մերթ ընդ մերթ կը տեսնուի: Թէ զվրայ նկարադիրք այս անձանց առաքեալ ըլլալը կը հաստատէ՝ յայտնի է չորսին ալ մօրուաւոր ըլլալէն: Այսօրինակ կը ներկայանան արդէն առաքեալք Աստանոյի ³ աւետարանին ճակատը, ի միւսինս S. Vitaleի, ի Լուքսեանուրիկեան կրկնակողին եւ ի տախտակա զանձատան Մայր եկեղեցւոյ Միլանի (Garr. 454/5): Յնդհայնու ըն առեալ այսպէս կրնծայեն սակաւի ինչ յեանադոյն նկարք, որոնց մէջէն Աողմաս Էնդիանաւորդի (Indikopleustes) մանրանկարքն միջին եւ յետին բիւզանդական արուեստին յատուկ նկարադրին ունեցող օրինակաց ամենահները կրնան համարուի: ⁴ 586 տարուց աստուածաշնչոյն մէջ աւետարանիչներէն մին տակաւին անմօրուս է: Այս մանրանկարքս այն ժամանակներս զոյութիւն ունեցող երկրորդ խմբի մ'աւետարանաց նկարներուն կը մերձենան, որուն զիւաւոր ներկայացուցիչն է Մաքսիմիանոսի զահն ի Ապօլիննա: Էջմիածնի աւետարանը մեր աջեւր կը գնէ, երեք ծերունի եւ ուրիշ թխահեր եւ թխամօրուս անձ մը: Եթէ ասոնց անուններն խնամալ ուղեւք, առաջինն Մատթէոս է, երկրորդը՝ Յովհաննէս յետին բիւզանդական նկարադրին համաձայն: Արկրորդ թիւն վրայ առաջինն է Մարիոս՝ թէեւ բիւզանդական արուեստն զինքն աւելի երկտասարդ կը նկարէ, իսկ վերջինն՝ Վուկաս՝ ըստ նկարադրին ամենակրտսերը, ինչպէս եւ յետոյ ի Բիւզանդիոն շիկահեր եւ երբեմն նոյն իսկ կնդաղլուս կը ներկայանայ: — Աւետարանաց աջ ձեռաց բունուածքն օրհնութիւն սպու ձեւով է. իսկ ձախերնին զարարած ու-

¹ շմեւ. J. P. Richter, Die Mosaiken von Ravenna, էջ 66:

² Vetri orati, էջ 122: շմեւ. F. X. Kraus, Roma sott. էջ 190:

³ Gebhardt und Harnack, Տեւ. թ. Բ.

⁴ Strzygowski, Cimabue und Rom, էջ 69:

նենայր Ռայփննայի S. Giovanniի կնարանդակէն ի վեր միշտ սոյորական է ըր զանդական արուեստին, նոյն է և ձախր վեկարկուաւ ծածկելու շարժառիթը:

Ի Ժողովոյ Բառուածամայրը կը յիշեցնէ Ս. Բ. Գնիսի գեանափորին մեծամեծ վիճարանութեանց նիւթ եղած այն պատկերը, զոր de Rossi Արտամայրնոս Սեծի ժամանակէն կը համարէ:¹ Ինդրարկուի այս սիւրը Բիւզանդացոց շատ սիրելի է: Վանի մ'այսպիսի օրինակներ՝ ուր Սարիամ առանց Վրիստոսի կը ներկայանայ, այլ առ թիւ արդէն յառաջ ըրեա՞ծ եմ:² Հոս մասնաւոր մտադրութեան արժանի է Արտամայրնոս Սեծի (1042—1055) մէկ գրամը՝ որուն վրայ խնդրարկուն կայ հետեւեալ վերատուութեամբ՝ ΜΡ ΘΥ Η ΒΑΑΚΕΡΝΙΤΙΣΑ.³ Արձոցը վրայ խաչ կայ, որ ըստ իմ կարծեաց զՎրիստոս պիտի նշանակէ և և ի թէ տեղ ըլլար, անշուշտ զՎրիստոս ալ հոս կը տեսնենք: Շատ քիչ անգամ Բաբելոնիայի աստուածամայրը ճիշդ կրկնօրինակաց վրայինն պէս կը զանուի: Sorlin Dorigny այլակերպներն ի մի հաւարած է:⁴ Շատ բազմաթիւ են օրինակը՝ նոր-յունական ժամանակէ, որոնցմէ ոմանք հրատարակուած խիկ են:⁵ Սեր մանրանկարը՝ Ս. Բ. Գնիսի գեանափորին նկարէն ետքն՝ ամենահինն է այս նկարապրով: Կեղարիւք սոյնը վարագուրօք որոշեալ տեղ մը զետեղած է իբր մեծարկի պատկեր:

Ընթացողո՞ւս զո՞րք բազում մասամբ կը նմանի այն պատկերին, զոր J. Wilpert յօրինած է հին-քրիստոնէական արուեստի վերարեբեալ առարկայից վրայէն:⁶ Երբ այս տեղ նկարադրին հետ առնչութիւն ունեցող առարկաները միանգամայն յառաջ կը բերեմ, պատճառը Wilpert է, որ իւր յառաջադիր նիւթոյն համապատասխանելով՝ արուեստական ծանրակշիռ մանրամասնութեանց նշանակութիւն տուած չէ: Կախ և յառաջ կը յիշեմ այն շերիմները, որոնց շինուածքը հաստատուն ձեւի մը վրայէն է: Ըրրահամ մօրուօք՝ պատմութեան և ուսանոց կամ թիկնոց զգեցած ի յառաջակողման պատկերի կեցած և անք սրով բարձրացուցած է ձախարկով գէպ ի վեր, ուր և ուղղած է աշուրները, փանց զի պատեղ կը տեսնուի Աստուծոց անք: Չախը կը հանդէ՛ Խաչակաց պիտուն վրայ, որ ձախարկողմն հօրը ոտից առջև ծուրը դրած է ետեւը կապեալ ձեռքերով և կարճ պատմութեան զգեցած. ելիցն իրաց կը սղասէ: Ըստ է ամենապարզ ձեւը (Garr. 376, 4. 369, 4). ասոր վրայ աւելցած է Խաչակաց քօփն կեցող սեղանը (Garr. 376, 3. 367, 3. 365, 1. 360, 1. 318, 1. 364, 3) կամ Ըրրահամու ձախարկողը կեցող դասնուկը (Garr. 301, 3. 377, 1. 359, 1. 374, 1. 312, 1) և վերջապէս թէ սեղանը և թէ դասնուկը՝ որ հազուադէպ երևոյթ չէ: Գարձեղ գործախտար անձանց վրայ կաւենայ երբորք մը՝ որ Ըրրահամու բաղկաց մը կիկնայ (Garr. 313, 6, 363, 2, 367, 1/2, 378, 3): Ըստ ամենայն երևոյթք այս հիմնականաց այլակերպութիւնքն են, ինչպէս Խաչակաց սեղանի վրայ ի ծուրը իջած ըլլալը (Garr. 323, 4. 324, 3. 326, 2. 327, 4. 379, 3) կամ անձանց իրարու ունեցած զիբքը փոփոխած ըլլալը: Բիւզանդական ժամանակն խիկ այս

¹ Imagines selectae deiperæ Virginis, Տխտ. Զ. — Liell, անդ. Տխտ. Զ.

² Δελιον της ιολογικής και εθνολογικής εταιρείας, Բ. 723:

³ Զոր. Sabatier, Բ. էջ 1010. 12. Garr. 482. 14:

⁴ Revue arch. 1877, Լ. էջ 85:

⁵ Didron Hist. de Dieu, էջ 267. Schäfer, 'Egumenia, յառաջին տախտակի. Bayet l'art. byz., էջ 257. Kraus Real Enc. Բ. 364. Garr. 478, 36:

⁶ Römische Quartalschrift 1887, էջ 130:

նկարագիրս նշանաւոր փոփոխութիւն կրած չէր: S. Vitaleի միսինն հաւատարմութեամբ կրնորօրինակ շիրմաց նկարագիրը՝ սեղանի վրայ ի ծուներ իջեալ Խասհակաւ հանդերձ, եւ Աղոյմս Հնդկանաւորդի մանրանկարը սոյն այս նկարագիրս Ալատիկանու, Լաւրենտեան եւ Վինայի գրատանց երեք ձեռագրաց մէջ յայնմ եւեթ փոփոխած է, որ Եւրրահամ աջակողմ դարձած է՝ նոյն կողմը վերն երեւցող ձեռին, եւ սուրն Խասհակաց զլիսուն վրայ կը ձօնացրնէ: Իսկ սեղանը նշանակուած է կրակեղջուրը:

Երգ եթէ, աչքերնիս մեր մանրանկարին վրայ դարձրննք, ձախակողմն կը գտննք զԵւրահամ՝ ըստ նկարագրին. սակաւիկ ինչ զլուխը ձախակողմ կը դարձրնէ, ուր ձեռքը կերևուայ ոչ թէ, ամպի մէջն, այլ հրոյ: Չախ ձեռքն Խասհակաց զլուխը դրած է: Եւրահամու ձախակողմն է խոյր: Յայլ պարագայս տեսարանս աչքի զարնելու չափ կը խտորի: Սակայն եթէ, տեսարանս ցայս վայր շհամեմատուած այլ օրինակաց հետ համեմատուի, կը տեսնուի թէ ամենայն ուրեք աւանդութեանց համաձայն է շարժած հին արուեստը: Եւրահամ վար կախեալ աջոյն յառաջնթաց օրինակն է S. Trassone գեանափորին մէկ նկարը (Garr. 69) եւ երկու շերիմք (Garr. 312, 2, 352, 2): Խասհակաց տեսքը մտադրութեան արժանի է, զգեստն անդամ այլեւայլ օրինակներ մասնացոյց կրնէ, զորս կրնձային մեզ գեանափորի նկար մը (Garr. 20) եւ S. Vitaleի միսիններէն մին (Garr. 262, 2): Եւրոպրածեալ յիսնաւորդի ժամանակներն, նոյն իսկ Աղոյմս Հնդկանաւորդի ժամանակ: Ալտիմի հնութիւն ապացուցանող այս վկայութեան քով կուրայ երկրորդ մը: Խասհակաց ետեւը կայ սանդուղ, զոր միայն Պերլինի թանգարանի հըրչակաւոր սրբատիկն հետ կրնանք համեմատել (Garr. 440, 11), որ ըստ միտքան համաշունչ վկայութեան՝ Պ, առ անագանն Պ դարէ կը համարուի: Խասհակ հոն մերի է. ձեռքերն ետեւ կապուած՝ սանդուղին առջեւը կը կենայ: Հոն՝ ուր սանդուղամաք Խասհակաց զլիսուն վերեւը կը սպառին, Պերլինի սրբատիոյն վրայ սափորանման անօթ մը կայ, որ դէպ ի վեր ճիշդ այնպէս կը բարձրանայ, ինչպէս Ալմիսինինը: Հաւանականացոյն սանդուղամաք՝ սեղանոյ մը հիման մասին աստիճաններն են յար եւ նման անոնց՝ որ սպարաբէ շինուած են, ինչպէս կը տեսննք ի ասձարին յարութեան Վաղարու ի Պերլին (Garr. 443): Համեմայն դէպս այս մասնական երեւոյթս կարեւոր կուտան մըն է, մեր մանրանկարաց ժամանակը մինչեւ Խ դար մշելու:

Վլխտարները: Ալմիսինի աւետարանին սկիզբը յաւելեալ մանրանկարաց վրայ խուզարիւտ հայեցուածք մը նետելով իմացանք թէ, ասոնք բոլորովն անկախ կերպով յառաջ եկած են՝ առանց ամենեւին 989ին գրեալ հայկական ձեռագրին զարդուց եւ եզրագարդուց հետ յարաբերութիւն ունենայու: Կա մանաւանդ թէ զարդուց 586ի ասորի աստուածաշնչոյն արտաքոյ կարգի նմանիլը նկարաց ասորական ծագումը մասնացոյց ըրաւ: Վարով ժամանակին՝ Ի զիրը ստիպեց զմեզ թուականը 800է յառաջ մշել, մինչեւ ամենայն յայտարար նշանք սոյնին 586ի ասորի աստուածաշնչէն աւելի յառաջ ըլլալը կը վկայեն. նախ եւ յառաջ՝ կարի իմն պարզութիւնն յարուետողութեան կազմութեան եւ ի զարդարանս կամարաց, Վրխտասի անձօրուս պատանեակ ներկայանալն ի գահոյս, Պօղոս ասաբելոյն մազ ունենալը կամ կունց չըլլալը եւ եկեղեցոյ շատ նշանակա-

կան եղանակաւ ընծայուած ըլլալը: Եթէ այս յայտնանիշք Տին-բրիտաննական նկարագրին Պերլինի սրբատփին հետ եղած աղբար կը ցուցնեն, այն ատեն Խասհակայ սեղանի առջև նովին եղանակաւ ներկայացեալ ըլլալը՝ մեր մանրանկարաց Վա կամ Ե գարու արուեստակերտաց հետ ունեցած աղբար կը հաստատէ: Վժուարաւ կը սխալինք կարծեմ, եթէ ընդունինք թէ Եջմիածնի աւետարանին սկիզբը գտնուող մանրանկարք իրենց նկարագրին համաձայն Գ գարու գործ պիտի ըլլան:

Պարոլինգեան ձեռագրաց՝ կամարներէ շրջապատեալ մանրանկարներուն նմանած ըլլալը գտնելիս մեծ նշանակութիւն ունի: Ը.ս այս անժխտելի ապացոյց մըն է եկեղեցին ներկայացնող մանրանկարին ընդօրինակութիւնն յաւետարանս Վոդեակալի եւ Սուսանի: Այն ինչ նուալ ապացոյց է եւ սոյնին յաջորդող մանրանկարաց՝ այսինքն՝ ի դահոյս բազմեալ Քրիստոսի չորս աւետարանօք՝ վերոյիշեալ Պարոլինգեան ձեռագրաց ճիշդ նման ըլլալը: Ը.ս նմանութիւնը շատ պարզ եղանակաւ կը մեկնուի, եթէ Theganի՝ պատմածը լսենք. Պարորոս մեծ իւր մեռնելէն ոչ շատ յառաջ Յունաց եւ Ըսոբոց հետ չորս աւետարանաց պատկերներն սրբազրած էր. ուրեմն ինչ աւելի բնական բան կայ, քան եթէ ըսէ թէ այս առթիւ եւ յառաջագոյն եւս աւետարանաց յոյն եւ ասորի սկզբնազիրք Փրանկաց երկիրն եկան, զորոնք հոն տեղուան ծաղկողք ընդօրինակեցին: Պերլեայ թէ առաջինն եղաւ Մէջի դարոցը, ինչու որ, եթէ Janitschek իրաւունք ունի, թէ Վոդեակալի եւ թէ Սուսանոսի աւետարանն ի Մէջ գրուած են: Կոյն եղանակաւ եւ կը մեկնուի թէ ասորի եւ յոյն կանոնաց-տախտակաց կարոլինգեան ձեռագրաց մէջ անյնիւր եւ թէ Ս. Վրաց ինչ ինչ աւետարանաց կազմութեան միարանիւր՝ զ. օ. Եւեաման Գաքարիայ՝ 586ի ասորի աստուածաշնչոյն նկարաց հետ:

Ա Ս Ո Ր Ա Կ Ա Ն Մ Ա Ն Բ Ա Ն Կ Ա Ր Գ Ի Վ Ե Բ Զ Ն

Ի ձեռագրին Եջմիածնի՝ հայերէն աւետարանին կը յաջորդեն մագաղաթի երկու թերթք՝ որոնց 989ին գրեալ բնագրին չվերարերին անկէ իսկ կը տեսնուի, որ ձեռագրին ծաղբին մտա կտրուած թերթերուն կտրուած են ասոնք: Սա ալ աւելցնենք որ անոնց վրայ նկարեալ չորս մանրանկարք էպպէս ուրիշ արուեստ են եւ մեծապէս կը խոտորին հայկական եղբարագրողց եւ աւետարանին սկիզբը գտնուող ասորի մանրանկարաց արուեստին: Հայկական մանրանկարք վրձնով սպիտակ մագաղաթի վրայ սոււերագրուած են եւ անձանց պատկերքն յետոյ ներկով լեցուած են: Պիլլըն գտնուող ասորի մանրանկարաց՝ հարկ չեղած տեղ՝ զոյն արուած չէ. ասով ձեւերն շատ որոշ երած են: Ի վերջն զետեղեալ մանրանկարք մեր առջև կը պարզեն գունոց ահագին գանգուած մը՝ որ բոլորովին ծածկած է մագաղաթը. անձինք՝ բազմազոյն յատակի վրայ անորոշ եղանակաւ կը տարածին: Մանրանկարացս առաջին երեքն՝ որ շրջանակ չունին, ի յետաւորդման պատկերի կոտուցեալ շէքերու հետ կու գան կը միանան պարզապէս: Սխալն վերջներ չորեքանկան շրջանակ մ'ունի, որ սակայն ամենեւին նմանութիւն չունի այն մանրանկարաց շրջանակներուն հետ, որ աւետարանին սկիզբը կը գտնուին: Տեսարանք ալ այլեւսլ են:

¹ Mon. Germ. P. 49 592:

Ըստ ձևին թերթին վրայ (Տխտ. Կ. 1.) ի յետասկողման պատկերի կը տեսնենք շէնք մը՝ զոր կը պատկէ կորնթական սեանց վրայ հանդէպ երեքանկիւնի յարկ մը: Շէնքն աջէն դէպ ի յառաջ կ'երկարի՝ ճակատը ձախակողմ ուղղելով: Շակատի վրայ կը տեսնենք, թէ սեանց վրայէն կամար մը ձգուած է, որ ինքնին իսկ սեանց պէս պատուական քարերով զարդարուած է: Այսպէս մը շէնքին ներքո կիսով չափ կը ծածկէ: Շէնքին առջևը քառակուսի ցած սեղան մը կայ, որուն վրայ տարածուած է ծոցաւոր ծածկոց մը: Սեղանոյն աջակողմն երկայնահէր եւ երկայնամօրուս ծերունի մը կը տեսնենք, որ զլուխը բորբոսձեւ զգակ մըն է դրած՝ վրան պակ: Մինչև եւ ոտքերը հասնող պատմութեանին քղանցքը զարդարուն յատուկ մտա մ'ունի: Սոյնին վրայէն զգեցած է ուրիշ հանդերձ մը՝ զոր գօտով պնդած է. այս հանդերձս առջևի կողմննէ, օձաձեւ բաց է: Աւտոց վրայէն կը կախուի շքեղազարդ վերարկու մը՝ որ առջևէն կոճկուած է: Կտրուանին աջովը բուրուստ մը բռնէ, սեղանոյն վրայ. իսկ ձախը՝ զոր բարձրացուցած է, ծածկուած է վերարկուաւ: Ըսոր զիմացը կանդուն կը կենայ հրեշտակ մը, զոր կը ճանչնանք հերաց երկազկապէն, շրջանակէն ու թեւերէն: Այլտակ երկայն հանդերձ մը զգեցած է: Չախ ձեռքն ունի սակեղէն երկայն դաւաղան մը. աջը խօսելու ձեւով դէպ ի ծերունին կարկառած է: Կերկայցուածն է Ըւետումն Օւարարիայ:

Յջարդ մանրանկարն ալ (Տխտ. Կ. 2) սեանց վրայ հանդէպ յարկաւ շէնք մը կ'ընծայէ, բայց այս սնդամ ձախ կողմննէ, դէպ ի յառաջ կոյս: Կտրան վրայ կամար մը կայ՝ վրան խաչ, զոր քառակուսի մը կը պարփակէ: Ըյստեղ եւս ձախակողմը հրեշտակ մը կը կենայ խօսելու ձեւով: Չեռքը ունի դաւաղան: Ըսոր զիմացը շրջանակով կին մը կը տեսնենք, որ զգեցած է երկայն պատմութեան՝ որուն գօտին սպիտակ կաւեղէն մը կախուած է, եւ տառատով շքեղ վերջաւորօք: Տառատովը՝ զոր սպիտակ գլխանոցի վրայէն զլուխն առած է, ուսոց վրայէն վար կը կախուի: Արբուհին աջ ձեռքը ծնօտին է մերձեցուցած. ձախը զետին խոնարհեցուցած՝ տառատովին եղբրէն կը բռնէ: Իւր ետևը կը կենայ հիւսկէն թիկնաթոռ մը, ոտքերուն առջև դէպ ի ձախ բորբոսձեւ կողով՝ որմէ դուրս կ'երկրնայ կարմիր դերձան: Տեսարանս է Ըւետումն Ս. Ըստումաձանի:

Կրրորդ մանրանկարին (Տխտ. Օ. 1) յետասկողմը տարածեալ շէնքը նոր ձեւով կը ներկայանայ մեզ: Մէջտեղը կորնթական երկու սեանց վրայ հանդէպ խորշ կը տեսնենք՝ որուն կիսալուսնակներ խեցիներով լեցուած են: Շէնքին յարկն եռանկիւնի է, որուն զաշտաց վրայ նոյնպէս խաչեր կը նշմարուին: Արնթացի յարկարարձ սեանց մէջտեղը վարպէտը կայ: Յետասկողման այսպիսի արուեստգիտական համախորման կը համայատասխանեն ի յառաջակողման պատկերի տեսնուող սնձինք: Միջավայրը կը զրուէ Ըստումաձանային իւր որդւոյն՝ ականակուռ գահու վրայ բացմեալ, որուն թիկունքը քնարաձեւ է: Արդի կը հայի. շրջանակը կը պատէ զլուխը՝ որ զգալու ծածկեալ է: Ս. Ըստումաձանին ոտքերը մեծագին պատուանդանի վրայ հանդէպեցուցած է: Չեռացը մէջ ձուածեւ վահանակ մ'ունի որ տեսակ մը շրջանակ կը կազմէ Մանուկ Յիսուսի բորբոսիքը: Յիսուս Մանուկը՝ որուն զլուխը շրջանակը պատած է, զգեցած է պատմութեան եւ արկանելիք, աջը զետին խոնարհեցուցած է, իսկ ձախովը զարարած մը կը բռնէ: Ըջակողմը գահուն մտա կը կենայ հրեշտակ մը՝ շրջանակով եւ երկազկապով ի հերս: Ըսոր աջակողմն ու գահուն միւս կողմը՝ դէպ ի ձախ կը կենան երեք մոզք՝ արևելեան

Ճոխ զգեստով: Պատեւոր կարճ վերարկուն, սենսպանն ու հողաթվափք զարդօք ու ակամփք զարդարեալ են: Միայն վերարկուն պարզ է, եւ սպիտակ: Աշրկայնադէս զլուխնին ծածկած են փոխգական զգակաւ: Բաճեքն ալ Վարխտոսի տեսակ մը պակ կերկարեն, զոր մէկ ձեռքով հաստատուն կը բռնեն, մինչդեռ միւս ծածկեալ ձեռքերնին հանդէս-ցուցած են: Բաճեուն տարիքը նոյն չէ: Բջակողմեան մոզք սպիտակահէր է, ձախակողմեանը՝ թխահէր, երրորդը մօրուք անդամ չունի: Չենք կրնար մտադրութիւն չընել որ ասոնք իրենց սրունքները տարածած են:

Պ Էրջին մանրանկարը (Տխտ. Չ. 2) շրջանակ մ'ունի, որուն չորս անկիւնները չորս փահանակք կան՝ մօրուաւոր զլուխներով: Ըստնց մէջ ապ անդ թռչունք կը տեսնուին, որ իրենց թռիչքն ի վեր բարձրացուցած բարձրադիր կողովոյ վրայ թռտած են եւ ըստ երեւութիւն իրենք զերենք փեարաթփափ կ'ընեն: Խակ դաշար կը ներկայացնեն Վարխտոսի մկրտութիւնը: Եղբրաց վրայ ձախակողմը կը կենայ Զոպհաննէս՝ որ սեւ մօրուք, շրջա-նակ, երկայն բազմածալ զգեստ ունի, զոր ձախովն ամիտփած է: Եջը Վարխտոսի զիւոյն վրայ է դրած՝ որ անմօրուս է եւ մինչեւ մէջքը մերկ ջրոյ մէջ կը կենայ: Չեռքերը վար խոնարհեցուցած է: Խւր վրան կը սաւառնի ազաւնին՝ որուն բերնէն գնդաձեւ ճառագայթք Վարխտոսի գլխուն վրայ կ'արձակին: Եղանոյ վերելք Ըստուճոյ օձը կը տեսնուի՝ որ օրհնութիւն տալու յունական ձեւն կ'ընէ եւ կիսաշրջանակ մը կը պարփակուի:

Եթէ այս մանրանկարաց սեղն ու ժամանակն ալ գտնել ուզենք, հարկ է որ սկիզբ ընենք երեք առաջիններուն յետակողման շէնքերէն: Ըստնք միջին-բիւզանդական արուեստին յատուկ երեւակայական խղիկներէն չեն, այլ հնութեան զրոշմը կրող անակներ՝ յար եւ նման անոնց՝ զորս կը գտնենք 354ի տունմարին եւ 586ի ասորական աստուածաշնչոյն մէջ: Իրենց յետին աստիճանի պարզութենէն Վ կամ Ե դարու կրնային յարմարիլ, եթէ սեանց եւ կիսալուսնակաց պատուական քարերով զարդարուած ըլլային յետնադոյն ժամանակները մատնանիշ չ'ընէր. վասն զի պատուական քարերով առ հասարակ կահակարասիք եւեթ՝ շատ քիչ անդամ պատուանդանք կը զարդարուէին:

Ե-Էրոս-Տ Չ առաջինայ ծանօթ չէ հին արուեստին, եթէ չուզենք սոյն այս տեսա-րանս տեսնել առ Garr, 399, 5՝ Peiresc, ստուերադրեալ շերտին վրայ: Սոյնը առաջին անգամ կը տեսնենք 586ի ասորի աստուածաշնչոյն մէջ (Garr, 129, 2): Ըստ ալ տեսարանս երկու սեան վրայ հանդէղ կամարի մ'առջեւ տեղե կ'ունենայ: Վրասանկիւն սեղանը մէջտեղն է. Չ աքարիս ձեռքը բուրուսուաւ՝ աջակողմը. հրեշտակը ձախակողմը: Ուստի գրեթէ նոյն անձիւքներէ կը կազմուի, որ եւ մինչեւ յետնադոյն ժամանակները նոյն մնացած է: Բարխտանական թանգարանի (Harl. 2788, թղթհ. 109^բ) կարօյն-դեան ձեռագրի մը մէջ կայ ընդօրինակութիւն մ'որ մերինին կը նմանի¹: Բիւզանդական մանրանկարք եւ միւսինք սոյն նկարազիրը պահած են² եւ նոյն իսկ Վիոնիսիտի՝ Եկարաց - մատենանը նոյն կանոնը կու տայ՝ միայն հրեշտակի համար կ'ըսէ թէ օդոյ մէջ ծածանելու է:³

¹ Հրատարակեալ ի Die Trierer Ada-Handschrift, Տխտ. 28. Հմեմ. էջ 91:

² Հմեմ. զ. օ. Cod. Vat. gr. 752, Fol. 17^ν կամ Էսփիկմեմու. մենաստանին ձեռագիրն՝ յԵթոս թղթհ. 234ա եւ այլն. եւ Գիէզի Ս. Սփիտայ Եկեղեցոյն միւսինն:

³ Հրտ. Schaefer, էջ 342:

Լեռնայի Մարտիրոսյան տեսարանին մէջ, ինչպէս բռնեք, երբ Լեռնայի մասին տեսարանին երկրորդ կողմն վրայ կը խօսենք, ապիննացի արուեստագէտը կը ներկայացընեն ձախակողմը բարձր թիկնաթոռի վրայ նստած կոյս մը՝ որ կը մանկէ: Լ.յս խմբին դիմացը կրնայ զրուիլ ուրիշ խումբ մը, յորում Մարիամ թիկնաթոռին առջեւը ոտքի վրայ կը կենայ: Լ.յսպէս ներկայացուած կը տեսնենք աւետու՛մը 586ի ստորի աստուածաշնչոյն մէջ (Garr. 130, 1), Հաւանականագոյնս նաեւ Bibliothèqu nationaleի աստուածաշնչոյն մէջ (Cod. Syr. 33), որ նոյնպէս Չ. գարե է,¹ եւ յետոյ պաղեստինական շշի մը վրայ՝ ի Մոնցա (Garr. 433, 8) 600է, վերջապէս ըստ ներքնագրոյն Հաւանականագոյնս ի Պաղեստին ծագում առած երկու նկարէն սարգիսններու վրայ ի Cabinet des médailles ի Փարիզ (Garr. 478, շեռ.՝ 29/30): Ուստի յայտնի է թէ այս նկարագիրս Ըտրիքէ եւ Պաղեստինէ ծագած է: Ըստուածամօր վրայ աչքի զարնող կէտ մը կայ՝ որմէ զուրկ են ապիննական եւ միլանական արուեստակերտը, այսինքն գտնի են կախեալ սպիտակ կտաւեղէնն: Ըստ վրին անգամ սոյն կտաւեղէնը կը տեսնենք 586ի աստուածաշնչոյն մէջ, բայց ոչ եթէ յաւեաման, այլ ի Համարձման Վրիստոսի (Garr. 139, 2): Նոյնպէս եւ յետին բիւզանդական արուեստը սպիտակ կտաւեղէնը միայն ի Համարձման գիտէ՝ ոչ թէ յաւեաման,² վասն զի առաջնոյն մէջ Մարիամ ինդրարկուի նկարագրու կը ներկայանայ, ուստի այս կէտին բիւզանդական ժամանակի մէջ յառաջ գալը մեծ նշանակութիւն ունի:³ Վարչական Ըստուածամօր գտնի են կախեալ կը գտնենք սոյն կտաւեղէնն ի պատկերին ընծայման՝ ի զրատան Ղաթիկանու Cod. Reg. I: Կոնստանդ կը Համարի թէ այդ լաթը Հոն ուրիշ նշանակութիւն չունի, բայց եթէ առանին եւ մայրենի զբաղմանց նշան մըն է:⁴ Ար սկայի երբ կընէ թէ այս կտաւեղէնս առաջին անգամ S. Venanzioի միւսինին վրայ յառաջ կու գայ՝ որ 640—49ի մէջ կ'իկնայ:

Մոնցայ երկրորդաթոնիւնն մէջ՝ զոր Հայ գաղափարողն ընդօրինակած է իւր աւետարանին երկրայ վրայ, սա աչքի կը զարնէ որ ծագողը յետասկողման շէնքը փոփոխութեան ենթարկած է: Մոնցայ երկրպագութեան ընծայած սոցորական գրողմին — որ եւ գեանափորերու նկարաց մէջ ստէպ, իսկ ի շիրմաքանդակս եւ ի փղոսկրեայ տախտակս միշտ կը տեսնուի⁵ — աւելի կը պատշաճէին այն դէպ ի մէկ կողմ՝ ծոած երկու շէնքերն՝ որ յաւեաման Չ. քարիկայ եւ Մարեմայ մեր առջեւը կ'իկնեն, վասն զի Հոն Մարիամ մէկ կողմը կը նստի, միւսէն մոզերը կու գան: Բիւզանդական արուեստն եւս այս բնա-

¹ Kondakoff, Hist. de l'art. byz. էջ 134 գտնեայ կը շեշտէ Համարձման թեան մեծ նմանութիւնն 586 տարւոյն խմբին Հնու:

² Ըստուածան մասին Համեմատ էլ. օ. այն մանրանկարներն՝ որ զՍ. Ըստուածամին բազմալ կը ներկայացընեն. այսոյէս Vat. gr. 1162, թղթ՝ 122a, Bibl. nat. fonds. gr. 1208, թղթ՝ 160v, Barb. gr. III, 91, թղթ՝ 114r, Laur. Plat. 6 Cod 23 (ըստ Մարիկանոսի՝ առ Fleury, l'évangile IV, 1) մանրանկարները. նոյնպէս Մեգասպիրոյն մենաստանի ձեռագիրն 11x15՝2 սանդիթ. ի զատանակին Ղուկայ. Ղաթիկանի մենաստանին (լիթոս) միւսինն ենք. Վեարաց. մասնին կանոնը եւ Ըթոսի մանրանկարները: Ընք մանրանկարները՝ որ զՄարիամ ոտքի վրայ կը ներկայացընեն, Գրիգոր Կապանցւոյ մանրանկարը թ. 510 թղթ՝ 3r թ Bibl. nat. ի Փարիզ. Ս. Ղազարու Հայկական աւետարանը առ Fleury, անդ. IV, 2. Ըթոսի ուս. մենաստանին աւետարանը թղթ՝ 236v, Բիւզի Ս. Ստիկայ Եկեղեցւոյ միւսինն, անդ. Տիտ. 7, Չեռ 26/7, Փարիզի միւսինն տախտակներն առ Bayet, l'art. byz. էջ 151, Էթիօպիոսի եւ Պերլինի թմանգարանին փղոսկրեայ տախտակներն, S. Paoloի դռուը՝ առ Fleury, անդ. V, 2. Էթիօպիոսի միւսինն եւ մանրանկարը Ըթոսի:

³ Հմեմ. էլ. օ. Ուղեկնայի արքեպիսկոպոսարանի մատարն միւսինն (Ricci Wr. 210) եւ Եկեղեցւոյն Բիւզի, անդ. Տիտ. 9:

⁴ История изн. искусства, էջ 157:

⁵ Հմեմ. Liell, անդ. 236, Lehner, անդ. Տիտ. Բ., 8—11 եւ Գ—Չ:

գրողն էր Երբ Է խոտորի: Աւստի արուեստագէտը Հոս անդուց պէտք ունենալուն՝ կենդանացնելով կամ մահելու Է անսարմն: Ընկարել է որ արուեստագիտին վրայ ազդեցութիւն բրած ըլլան այն երկու բացառութիւնը — Գ. դարէ —, որ կը զանուին ի զենանափորս Գոմիտիայի եւ Ս. Պետրոսի եւ Սարկիզինոսի (Garr. 36 եւ 38) կամ Museo Kircherianoի անօթն (Garr. 427): Հոս աւելի համեմատութիւն կրնայ ըլլալ Սոնցայի պաղեստինական շէն հետ, որուն վրայ մոզուց երկրագագութեան հետ միացած է հոգւոյը: Ըստուածամայրն այս երկու խմբին մէջտեղը ի գահոյս բաղմնած է: Եթէ, ասոնց նկարադիրը մեր մանրանկարին ընծայածին հետ համեմատելը, յայնմ իրարու հետ կը միարանին որ Վրիտանոս եւ Սարիամ սովորականին պէս ոչ թէ մոզուց կը նային, այլ ուղիղ իրենց դիմացը ճիշդ այնպէս, ինչպէս ի միսիոնին S. Apollinare nuovoի: Կոյն օրինակ կազմուած է զրեթէ եւ գահը: Ինչպէս Էջմիածնի աւետարանին մէջ թիկնաթոռին քնարածեւ կոր փայտերը, նոյնպէս եւ Սոնցայի շէն վրայ թիկնաթոռին ուղիղ փայտերն ականակուռն է:

Յայն ամենայնի մետաղաշէրէ կը տարբերի մանրանկարը. զի սա որ զանազանութիւնը յայնմ է որ Սարիամ իւր որդին ոչ թէ պարզապէս երկու ձեռք կը բռնէ, այլ այն փահանակին ծայրին կամ եզրէն բռնած է, որուն վրայ Վրիտանոս կը ներկայանայ: Սոյն եղանակաւ բազմաւ Մատուածամոր օրինակ մ'եւեթ գիտեմ՝ որ այն բնագրումը կը կրէ. Պաղիկեթաթա գանուած ոսկեայ տախտակի մը հատակոտորն է, զոր Արուշէի ի Կէտպոլիս ձեռք անցուցած է (Gaar. 479, 4): Սոյն նորաղեւ հատակոտորս զՍ. Մատուածամորին գահոյց վրայ բազմաւ կը ներկայացնէ, որուն թիկունքը շատ կը նմանի S. Apollinare nuovoի ընծայածին: Մատուածամայրը փահանակը վարի կողմնէ, երկու ձեռք կը բռնէ: Վրիտանոս խաչածեւ շրջանակ ունի. բազմած է ի յատաճակողմն պատկերի եւ երկու ձեռքերն ալ բարձրացուցած է: Սարիամը շրջանակին մէջ կընթեռնուէր ՄԱ, իսկ Վրիտանոսի բոլորաբեր ԸՏ ԱՏ: Արուշէի (Չ. Էջ 122) այս հատակոտորս միջին բիւզանդական ժամանակէ երկու գրամնց կարգը գասելու իրաւունք չունէր: Չմէկիկի (969—975)¹ գրամնց վրայ միայն Վրիտանոսի գլուխը կը տեսնենք շրջանակով՝ Սարիամը կրծոց առջեւ. սպա ուրիմն մեր առջեւն ելածը Բարթեոնիայի Մատուածամոր համառօտութիւնն է: Երկրորդ՝ Էլեքսի Արմենեոսի (1087—1118)² գրամնց վրայինն Բարթեոնիայի Մատուածամորն է, կիսանկարաւ ներկայացեալ այնպէս, ինչպէս տեսնենք Էջմիածնի աւետարանին սկիզբը զանուց ստորական մանրանկարին մէջ: Բայց շրջանակն այստեղ ոչ թէ Վրիտանոսի գլուխը կը շրջապատէ, այլ կիսանկարը: Ըյամ նման է Սարիամ եւ ոտքի վրայ ներկայացեալ է բարձրաբանդակի մը վրայ՝ որ Սեւանիկի մայր կեկղեցոյն մէջ՝ Եպիսկոպոսական գահուն մի մասը կը կազմէ: Սանրանկարին կրած գրումը վերոյիշեալ գրամնց ու բարձրաբանդակին գրումն շատ կը տարբերի եւ սպահով՝ աւելի հին է: Երբէն Արուշէի միտ գրած է որ ամենեւին արդիւք չկայ իւր ոսկեայ հատակոտորն ժամանակը անցը քան զժամանակ Չմէկիկի միջու՝ զի սա որարար Սոնցայի մետաղաշէրէ մի քանիկն եւ սրբատիի մ'ի Արատո նմանելուն պատճառաւ: Ըյսպիսի հետեւեան

¹ Sabatier, անդ. ԼԲ, ԹԻ. Գ. Բ: Sanley, Essay de clasification, ԻԲ. 1. Madden, Numismatic Chronicle, 1878, ԹԻ. 11:

² Madden, անդ. ԹԻ. 12:

վիպ կը հանդիսանայ եւ Մատուածամօր ՄԱ(ՊԱ)ով նշանակուած ըլլալն՝ փոխանակ վերջերն սովորական եղած ՄՐ՝ ՅԿ: Նմանապէս հարկ է որ մեր մանրանկարին հետեւեան վիպէ, եւ Քրիստոսի շրջանակի մէջ տակաւին խաչ չունենալը, ինչպէս ունին S. Apollinare nuovoի միւսինն, Կարուչչիի ոսկեղէն հասակաօրոն ու Մոնցայի մետաղաշէրք:

Մեր մանրանկարը շատ որոշ մեր առջեւը կը դնէ մոզերը՝ այլ եւ այլ սարկերով իբր Տերունի, այր կատարելալ եւ երեսասարգ: Հին-քրիստոնէական արուեստը, S. Maria Maggioreի միւսինն, Սեւիլիի բեմն, South Kensington Museumի եւ Միլանի մայր եկեղեցոյն փղոսկրեայ տախտակներն եւ ռավիննական սրբատուփն այս զանազանութիւնը չեն զտեր. ասոնք առհասարակ երեք մոզերն ալ անմօրուս կրնձային: Ընձինքներն իրարմէ զանազանող օրինակք՝ Օ, դարէ են ի Տիտ.ի Մարեմականաց Էջմիածնի եւ դարձեալ ի մետաղաշէջ Մոնցայի:

Վերոգրոյթի Վերոգրոյթի Էջմիածնի աւետարանին ի վերջն զետեղեալ մանրանկարաց տեղն ու ժամանակը ստուգելու համար ամենակարելւորն է, ինչու որ այս առարկայիս՝ մեզի ծանօթ կրկնօրինակաց մէջ հատ մը միայն կայ՝ որ իւր կրած դրոշմովն մեր մանրանկարին հետ կը միարմի — եւ այս է ասորի աստուածաշունչն՝ յամէ 586: Հոն (Strz. II, 9) զէջովհաննէս զգեցեալ կը տեսնենք, իսկ զլուսն ձեւն ու ձեռաց շարժուածքն ոչինչ իւրք կը խտորի մեր մանրանկարին ընծայածէն — միայն սակաւիկ ինչ աւելի կանգուն է կեցած եւ շրջանակ ունի: Քրիստոս մեր մանրանկարին ընծայածին պէս ջրէն կ'ելլէ, եւ ձեռքերը վար է կախած: Բայց Քրիստոս՝ 586 ամին մանրանկարին մէջ արդէն մօրուօք եւ շրջանակով կը ներկայանայ: Եղանուոյ կողէն արձակեալ ճառագայթք թէեւ կը գտնուին Յունիոս Բաստի — † 359 (Strz. I, 12) — շերմին, Միլանի մայր եկեղեցոյ զանձատան փղոսկրեայ կողին (Strz. II, 2) եւ Ոսպլենայի արիանոսական Մկրտարանին միւսինին վրայ (Strz. I, 15), բայց միայն 586ի ստորական աստուածաշնչոյն մէջ Մատուոյ աջոյն հետ յօդուած է: Ուստի պէտք ենք ըսել թէ Էջմիածնի թղթահամարները ծաղկոյն թէ անդուով եւ թէ ժամանակաւ արուեստագիտաց այն շրջանին կը վերաբերին, որուն կը պատկանի այս ձեռագիրս: Բայց Քրիստոսի մօրուօք չունենալը պարագայ մըն է, որ մեր մանրանկարին 586ի ասորի աստուածաշնչէն քիչ մ'աւելի հին ըլլալուն կը վիպէ:

Եւ յն չորս մօրուօք արք՝ ամէնն ալ նոյն նկարագրաւ, որ Քրիստոսի մկրտութեան շրջանակին անկիւններն զրուած են, չորս աւետարանիչք են: Եթէ այս մեկնութեանս հաւանինք, այն ատեն ասոնք ալ մանրանկարաց Օ, դարէ ըլլալը կը հաստատեն, վասն զի սոյն ժամանակէն միայն ունին այնպիսի իրարու հետ համեմատելի առարկաներ, որոնք ամէնն ալ չորս աւետարանչաց՝ զլից նոյն ձեւը կու տան մօրուօք հանդերձ: Եւսպէս կրնձային S. Vitaleի միւսիններն ի Ոսպլենայ (Garr. 263, 3—6), Միլանի եպիսկոպոսանստին զանձատան փղոսկրեայ կողերն (Garr. 454/5) եւ Batemannի ժողովածոյն յԱօրիկրավ՝ Լուբսեմպուրիէ ծագած (Garr. 452, 2) եւ վերջապէս Hofmannի հաւաքածոյն չորս շքադրամփն՝ որ 1878ին Եսիղիի մօս՝ S. Maria degli Angeli անուանեալ տեղը գտնուած են²:

¹ Հմտ. Strzygowski, Ikonographie der Taufe Christi, München 1885:

² Catalogue vom Jahre 1886, Nr. 576—579, էջ 10:

Աթէ աչքերնիս դարձրնենք այն արդեանց վրայ, զոր ստացանք աւետարանին ի վերջն գանուող մանրանկարները մանր հետազօտելով, կը անեննք որ կայ սերտ աղերս մը 586ի ասորական աստուածաշնչոյն եւ Մոնցայի պաղեստինական մետաղաշէկու հետ, որ գրեթէ նոյն ժամանակէ են: Ի մասնաւորի զայս կը ցուցնէ Աստուածածնի աւետման բնադրոշմը՝ յոտին կանդնեալ կուսով, եւ մոզուց երկրպագութեան կազմութիւնն իրեն կից ունենալով ի գահոյս բազմեալ աստուածամօր նկարապիրը: Ամենասերտ աղերսը՝ զոր ունի ասորի աստուածաշնչոյն հետ, յերեւան կ'ելէ ի մկրտութեան Վրիստոսի: Վանի մը նշաններ՝ ինչպէս յերկրպագութեան մոզուց՝ Վրիստոսի շրջանակի մէջ խաչ չունենալը եւ ի մկրտութեան անմօրուս ըլլայն կարծել կու տան թէ մեր մանրանկարներուն ժամանակը Չ գարէ յտաջ է: Հետաւորդման շէնքերը ստիպեցին զմեզ մանրանկարաց ժամանակը Ա գարուն, իսկ վերջապէս աւետարանչաց գլխոց նոյն գրոշմը Չ գարուն գնելու: Այս ամէն մտադրութեան արժանի կէտերուն անիրաւած շէնք ըլլար, եթէ հաստատենք թէ Աջմիածնի աւետարանին վերջը գանուող մանրանկարը Չ գարուն տաւջին կիսուն յԱսորիս գործուած են:





ՄԸՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ

Եր նախնիքաց հետադատութիւնք ցուցուցին թէ Լճվածանի աւետարանն 989ի զրեալ հայկական ձեռագիր մըն է փղոսկրեայ կողերով ու սկիզբն ու վերջը մանրանկարներով . և և ասոնց նկարազիրն աչքի առջև ունենարով տեսանք՝ թէ Օ. դարու առաջին կիսուն ռավենական արուեստին արտադրութիւնք են կողերը, իսկ մանրանկարը՝ նոյն ժամանակի՝ ասորի արուեստին: Ընչուշտ միտ զրուեցաւ, որ երբ նկարաց կրած գրողներն իրարու հետ կը համեմատեինք՝ ամենեւին չիօտեցանք հայկական արուեստի եւ ինքնին իսկ հայերէն աւետարանին զարդուց եւ եզերազարդուց մասին եւ չփորձեցինք լուծել այն խնդիրը թէ արդեօք արուեստադիտական այն առարկայք՝ որոնց վրայ խօսեցանք, չն հրնար հնագոյն օրինակաց վրայէն՝ 989ին ի Հայաստան ընդօրինակուած ըլլալ: Յայտմ մասին մեր բազմա-ցած արդիւնքն ձեռք կը ձգենք, եթէ արուեստին ձ. դարուն ի Հայաստան ինչ վիճակ ունենարուն վրայ ակնարկ մը ձգենք:

Փղոսկրեայ տախտակաց նկատմամբ խնդիրը զիւրու կ'որոշուի, վասն զի Հայք երբեք արձանագործութիւն (plastique) զործածած չեն այն եղանակաւ, որ զերկնք ատակ ընէր յառաջ բերելու այն փորագրութիւններն, որոնց վրայ խօսք եղաւ: Թէև Բու-թայի 1003ին կառուցեալ եկեղեցւոյն մէջ ի Վ ըաստան կը գտնենք անասնոց կերպարանքով խոյակներ եւ զուրար շէնքին վրայ աստ անդ զլուխ մը կամ ամբողջ անձ մ'իրր զարդ, նոյնպէս եւ ի Մցիսեթա ձ.Վ. դարէ, սակայն այս ըստ ինքեան աննշանակ օրինակները կը վերաբերին Վ ըաստանի, այսինքն երկրի մը՝ որ նախնարար թէև Հայաստանի ենթարկեալ էր, բայց յետոյ յարուստս բողբոջին ինքնակաց կերպիւ զարգացաւ: Հայաստանէն ինձ երկու օրինակ եւեթ ծանօթ են եւ այն Հ. Ալեշանի նորոգ հրատարակեալ երկասիրութենէն¹. Վանիէլ ի մէջ առիւծուց եւ եկեղեցւոյ մը զրան կիսալուսնակն ի Մրեն, ուր վերն երկու հրեշտակ, վարն Վրիխասս ընդ մէջ Պետրոսի եւ Պօղոսի մեր

¹ Ալեշան, Այբբան, Ս. Ղազ. 1890, էջ 148 եւ 155:

տաճեւք կ'ըլնեն: Բայց այս օրինակներս անոճ են ևւ կոչա, որով կը հաստատեն միայն այն ընդհանուր կանոնը թէ Հայք արձանագործութեան բոլորովն անհմուտ էին:

Հարարերութիւնը շատ տարրեր չեն ի զիմագիծ մանրանկարչութեան յառաջ քան զամեն 1000: Հայկական ամենահին ձեռագիրն՝ յամէ 887 ի Ղազարեան ձեռարանի ի Մոսկուս չունի ամենեւին անձ ներկայացրնող մանրանկար: Rohault de Fleury¹ այս կարգի ամենահին ձեռագիրը կը համարի աւետարան մը յամէ 770 ի վրան Հց. Մխիթարեանց Ս. Ղազարու ի Վ Էնտօփե. բայց շատ կը սխալի: Ըմենեւին կուսուան չկայ այսպիսի թուականաւ նշանակելու սոյն ձեռագիրն, ևւ զիրն իսկ Ճ. զարու է ըստ հաստատութեան զիտնական Մխարանից: Մանրանկարք՝ որ Էջմիածնի ստորական մանրանկարաց պէս հայ աւետարանին յաւելելու էին, այժմ՝ բաժնուած՝ առանձին կը պահուին: Գնդ ամէնն տասն թուով թէ 0՛34 × 0՛45 մեզր մեծութեամբ, այլ վերջէն շատ ծայրակաւուր եղած են: Ըմբողջ իջի մեծութեամբ կանոնադրանքներու ներքեւ թերթի մը վրայ մի անգամ չորս աւետարանիչք ի միասին, ևւ ապա առանձին առանձին Մատթէոս ևւ Մարկոս կը ներկայացուին: Վարձեակ թերթի մը վրայ կը տեսնենք զՔրիստոս՝ 0՛22 մեզր բարձրութեամբ՝ ընդ մէջ Մարեմոյ՝ որ ձախակողմն է, ևւ Հոմախանու Վարապետի՝ որ աջակողմն է: Աշրեքն ևւս այնպիսի մեծփայլութեամբ մեր զիմացն կ'ըլնեն, որ զասոնք այսպէս միայն Վատիկանեան զրատոն ծանօթ Վոզմաս Հնդկանաւորդի մէջ զարձեակ կը գտնենք: Մեր այս յիշածներուն կը յաջորդեն այլեւայլ տեսարանք Քրիստոսի կեանքէն՝ այսպէս Ըւեռուսմն, Կճուսնայ, Տեսուերնդատաջ, Մկրտութիւն ևւ Ըյլակերպութիւն՝ ամէնն ալ իջին մեծութեամբ²: Օւարդերէն, յունարէն յուշագիրներէն ևւ ի Մկրտութեան Քրիստոսի ոտից առջև գտնուող խաչէն դատելով՝ բիւզանդացի ծագող մ'իրբ 1000ին նկարած է այս մանրանկարներս: Հայ զաղափարոյն Քրիստոս Ըմենակալ տեսարանն ևւեթ աւելցուցած է վահանակի մը վրայ: Բայց զործուածքն այնպէս կը տարրերի միւս մանրանկարաց զործուածքէն, զոյնն այնպէս անյաջող է ևւ կոչտ որ անկարելի է զայն բիւզանդական ձեռաց արդիւնք համարիլ. իրբ ընդօրինակութիւն սոս միայն կը ցուցնեն թէ Ճ. զարու հայ զաղափարող մ'ինչ կրնար յառաջ բերիլ: Եւ ոչ իսկ կրցած է ըստ օրինակել աջոյն մատանց զիրքը՝ որ օրհնութիւնն տարու ձեւ կ'ըլնեն:

Ըյս կողմանէ ամենեւին համեմատական է աւետարանս՝ Էջմիածնի աւետարանին: Ուրիշ տեղէ առնուած մանրանկարք զարդարուած է: Վաղափարոյն այս տեղ ևւս այլեւայլ պատկերներ նմանցնել կը փորձէ, որ յաջողած չեն, ինչպէս ևւ յաջողած չեն Էջմիածնի հայ բնագրին երբազարդքն: Հայկական մանրանկարչութեան նոյն առնեներն ինչ որոմէլի վեճակի մէջ գտնուիլը կը ցուցնեն երկրորդ ձեռագիր մ'ի Ճ. զարե ի Ս. Ղազար, 0՛35 × 0՛45 մեզր մեծութեամբ՝ միջին-մեկուսական զրով զրեակ: Օւարդերէն մնացած են երկու աւետարանիչք ևւեթ՝ Վուկաս ևւ Հոմախան, որ ամբողջ էջ կը զրաւեն: Վուկաս հայերէն զրութեան կից ունի ևւ յայտնապէս սխալ յունարէն յուշագիրը (A) AOKAZ: Ըստից կրած զրոշմն ամենայն եղանակաւ յունական նախանկար օրինակն մասնացոյց կ'ըլնեն, ևւ այնպէս անյաջող է ևւ ի մասնաւորի սխալներով լի, որ ընդօրինակութիւնն անհնար է շփոթել բիւզանդական սկզբնագրի մը հետ:

¹ L'Evangile, Հո. Ը. Լ. Էջ 45:

² Ըւեռուսմն ու ձեռագրը հրատարակած է Fleury, Հրո. Ը. անդ. Տի. Գ. 2 ևւ Ժ. Ը. 3: Հմեմ. Schmid, անդ. Թիւ. 22 ի Գանկին:

Հայոց՝ մանրանկարչութեան մէջ անընտել և անյաջող բլլալուն գրաւոր վկայութիւն մ'ալ յառաջ բերենք, զոր պատահան եմ Վ իննեակն Սիբիլիարեանց Ընդհանրական Երբա՛հոր՝ Ը յարնեան Ըբբեպիսկոպոսի: Ս. Պաղարու ձեռագրաց միոյն մէջ կը գտնուի խօսակցութիւն մը պատկերաց եկեղեցեաց մէջ գործածութեան մասին: Հ. Վարեղին¹ սոյն գործքը Վ ըմանէս Վերթողը՝ Հայ մատենագրի մը կու տայ, որ 581—594 տեղագահ էր: Կարծեմ թէ Վ ըմանէս անոր Համար չի կրնար գործոյն Հեղինակն բլլալ, վասն զի խօսակցութեան առիթ տուողն յայտնապէս պատկերամարտութիւնն է, ապա ուրեմն առ կանուխն Ը զարու կրուէն կրնայ բլլալ:՝ Ը յս գրութեան մէջ կը կարդանք. «Ճեկեղեցիս քրիստոնէից և յարկս վկայից Ըստուծոյ տեսանմբ նկարեալ զսուրբ Պարիզոր, և աստուածահաճոյ շարչարանք իւր և սուրբ առաքինութիւնք, և զՍտեփանոս նախավկայ ի մէջ քարկոծչայն, զերանելի և զխառաւոր կոյնն սուրբ Պապիանէ և զՆովիսմէ Հանդերձ ամենայն ընկերօքն և յաղժող նահատակօքն:», Ը ս այս պատկերամարտք կը պատասխանեն, թէ այսպիսի սոբորութիւն մը հին ժամանակներն ի Հայս ծանօթ չէր և թէ զայն առաջին անգամ Պապ թագաւորը Հռոմաստանէն ի Հայաստան բերաւ: Ը աքիւրութեան պատասխան կը արուի. «Մանեցուն յայտն է թէ սուտ խօսիք, քանզի է Հայ՝ պարթևոս՝ և շէրթէր առնէլ զնշէլ յայտն, Էսայ է Հռոմէնց Էրթէն, և մեր ուսմունք անտի էին . . . : Ը ս քան զՊապ յառաջ այլ թագաւորք էին և պատկերն են նկարս առնէին յեկեղեցիս յանուն Վրիտտոսի, և դարձեալ զինի Վապայ և այլ թագաւորք եղն ի Հայս և Հայրապետք՝ որպէս երեւելի սուրբ Սահակ և Սարգս և Եղիշի և Ը շան և Կորիւն և ընկերք նոցա, որ ես ի ձեռն իսկ նոցա Հայոց զպրութիւն շորհեցաւ ի Տեառնէ Ըստուծոյ, և ոչ որ ի նոցանէ վասն պատկերաց և նկարաց եկեղեցոյ բանսն ոչ սրար, բայց միայն պիղծն մղին թագաւոր և Ը սայի և ընկերք նոցուն:»,

Սուրբն ըստ այսմ վկայութեան՝ պատկերամարտութեան ժամանակ ի Հայաստան չկայ տակաւին մանրանկարչութեան ինքնակաց զպոլոց և ոչ ընդօրինակողք, այլ ամէն պիտոյք կը հոգացուէր ընդանդական ներածութեամբ: Ը յս կիսիս Հաստատութիւնն գտանք Fleuryի սխալմամբ 770է համարած, այլ արդեամբ յ զարու աւետարանին մէջ՝ ի Ս. Պաղար: Ը նհերբիլ փաստեր վրացի ձեռագրերէ և ոչ կրնամ յառաջ բերել:

Փեթերպուրիի կայսերական գրատունը փնտցերէն քառածալ աւետարան³ մը կայ (0-235 × 0-19 մկր), որ մէն մի աւետարանի վերջն գտնուող յիշատակարանաց համաձայն Վաւիթ և Ըբբին անուն երկու զաղափարողք 995ին գրած են Ը աքերոց եկեղեցին ի Տրեաի: Թղթ Հ. Պ՞ վրայ յեանադոյն ժամանակներէ՝ ըստ Փրոմի. Zagareli՝

¹ Պատմ. Հայ. Պատմ. Բ. Տղղ. Վ Ընտ. 1886. էջ 448:

² Ը ս այս ապացոյց կրնայ բլլալ և Սոյն-Վ ըմանէս հետեւեալ կտորը. «Զտիպս աւետարանին տեսնենք նկարեալս ոչ միայն յսկուոյ և յարձանոյ այլ և յսկերաց փոց և կարփր մօրթով կազմեալ. և մեր յորձամ երկիրագորաներ, ոչ եթէ փոյն սոկերաց մատուցանմբ զերկիրագորութիւն կամ լայքայն, որ յեղեղ բարբարոսացն (ընդանարս ոչ Եռուսոյ, թերեւս ի Հնդկաստանէ) եկեալ է ի վաճառ. այլ բանի Փրէլին որ ի մարտալմին գրեալ է: Ը յս կարն ճիշդ այնպէս կը հնէլ ինչպէս կը հնէլ Եմհանուն. Սոկերանի պատկերամարաներ բազմոյն ի վկայութիւն կուտայ ոչ Նուրմա ճառին սս կտոր (Հմն. և Ըբբիսու. Ը ս թուղթ առ Արտանդիանուս և Երնէ, Labbé, Concil. VIII, 758). թէ էր կայսերական նկար քաղաք կը բերուին և իշխանք և ուսմիք յարցանօք ընդ առաջ կ'ըլլեն, ոչ թէ փայտն ու ժամանկորներն կը պատուեն, այլ անոնցմով ներկայացեալ կայրքը:

³ Cod. Sinaiticus և Յովհ. Պրոց զննեալ իշխանին թ. 212: Հմն. A. Zagareli, Свѣдѣнія о памятниках грузинской письменности, Ը. էջ 17, թ. 5:

որ քաջ հմուտ է Վրաց գրչին, ժՎ կամ ժՎ՝ դարե գրութիւն մը կայ, ուր կընթեանունք. “Դստ կղկիկե Սամուէլ” որ ըստ յաջորդութեան չորրորդ եպիսկոպոսն որով արժանաւորեցայ, (. . . այս ձեռագիրս . . .)”¹ ամենայն կարեւորք ի դուռն հանեցի: Բայց կը պակսէին պատկերք եւ կամարք:² Հոգւով չափ աշխատեցայ այն պատկերներն ու կամարները մեծ զոհորութեամբ Յօննատարանէ՛ այն մէջ քաւարէն բերել տալ, ուր էլէսն էր Զորն, եւ այս սուրբ աւետարանին կցեցի . . .: Աւրեմն տարակոյտ չայ թէ Սամուէլ լաւ վճարելով Աստանդնուպոլսէն բերել տուած է մանրանկարները եւ զեւզած՝ արդէն պատարաս ձեռագրին մէջ: Զարդ մնացած են թղթ՝ Ը՞, Ը՞ եւ Ը՞ երեք կանոնաց տախտակք. եւ մէջ է ինչո՞ւն է կաւարէն է Ը՞ թղթի վրայներ: Խարարաններ աւետարանի սկիզբն գրուած է իւր աւետարանիչը: Մարկոս եւ Պուլխաս եւեթ մնացած են այժմ: Մանրանկարք՝ ժՎ՝ դարու այն ամենալաւ գործերէն են, զորս բխանդական արուեստն արտադրած է ժՎ՝ դարու իւր գաղափրակիտին հասած ժամանակ: Շատ ալ լաւ պահպանուած են:

Վրացիքն այլ աւետարանի մը մէջ՝ վրական բնագրին աւարտելէն ետքն սակգիր գրերով գրուած է. † Ἐχρηστογραφήθη ἡ βίβλος αὐτῆ παρὰ Μιχα(αἰ)χρυσογραφοῦ τοῦ χοροῦ. այս աւետարանը գտայ Քուրթայի քով՝ Պուլխասի վրական վանքը, որ այս սեղ թատարաց աւետարանը կը համարուի. մեծութիւնն է 0.21 × 0.29. եւ զազաւփարեալ ժՎ՝ գարուն: Զայն ծագողն Միքայէլ՝ վրացի ձեռագիրը ձեռքն ունեցած է անտարակոյտ: Բայ ի կանոնաց-տախտակներէ եւ չորս աւետարանիչներէ՝ նկարած է եւ երկու մանրանկարք, որոց մին կանոնաց հեղինակներն՝ զԱւսերիտս եւ զԱրարպիտոս կը ներկայացընէ, իսկ երկրորդ՝ զՔրիստոս ի սկիզբն աւետարանաց՝ ի մէջ չորից աւետարանաց: Ըյս ամեն մանրանկարք տակաւին կան: Ար սեաները որ կանոնաց զեղակալով կամարակալ սեանց վրայ զեւզուած են երկոտասան ամսոց նկարներն իւր սեանց խոյակ եւ խորխոխ՝ նման Մարկիանեանին Շյո, ինչպէս յիշած եմ այլուր:³ Մատթէոսի մեծագիր պատկերին վերելը նկարուած է Նճուռնդ, Մարկոսի՝ Սկրտութիւն, Պուլխայ՝ Ը. ետուն, իսկ Յովհաննու՝ Զարութիւն:

Ըյս կարգի երրորդ օրինակ մը կը գտնուի ի Տփղիս՝ Վրաց Արև կեղեցին: Այնն ինձ ծանոց եւ ստորագրեց Յ. Smirnoff ի Փեթերպուրկի:⁴ Զայսմաւուրք մըն է զըջազիրս, որ բայ ի սրբոց պատկերներէ կը բովանդակէ եւ բազմաթիւ դէպքեր նոր կտակարանէն, ըստ Smirnoffի ընդ ամէնը 81 մանրանկար: Մանրանկարացս ժՎ՝ դարու բխանդական գործ ըլլան կը ցուցուի ոչ միայն պատկերաց նկարագրէն, այլ եւ յունարէն բազմաթիւ յուշագիրք ամեն տարակոյտ կը փարատեն այս նկատմամբ: Պարջարիս ճակատին երկրորդ թիւն վրայ կը կարգանք հետեւեալ չափական յիշատակարանն. “Այր այս մատենիս մէջ առօրեայ տօները, ամբողջ տարւոյն նշաններն սեանես, զարմացիր նկարէն ճարտարութեան վրայ: Արկինդ կը նմանի մատենան: Քրիստոս իրրեւ արեգակն մէջտեղն է, նոյնպէս եւ Արար՝ իրրեւ լիալուսին, որ ծնաւ զՔրիստոս: Չորս կողմանէ շուրջ են

¹ Ըյսոր ասոր սեղը բերուած է եւ գրուած. “Երկար սանն զայս գրել ցանկացայ ես՝ աւագ երէցս Սափարու զեղէ:”

² Κατάνα = կամար կանոնաց-տախտակաց:

³ Repertorium für Kunstwissenschaft 1890, էջ 6:

⁴ Կարեւոր ասոր վրայ խոսած է Koudakoff, *Ониъ памятниковъ древности въ нѣкоторыхъ храмахъ и монастырахъ Грузіи*, С. Петерб. 1890, էջ 165:

պատած զինքը ամենայն արգարաց զունդք ի յախտնից՝ որ հաճոց եղան սնոր: Հաւատք կը գործէ, եւ յառաջ կը բերէ. կ'աղօթէ, եւ նոր կը կերպաւորէ, եւ կը գրէ: Չաքարիայ վանականի վնացոյց: Որում (տայի) սէր աստուածեղէն:»,¹ Հունական մանրանկարները նկարող եւ յունական վերնագրերով զարդարող այս վանականն՝ Չաքարիա վրացի՝ յոյն մին է սողաւ, իսկ ինք զինքը վրացի անուանելն կրնայ վայելչապէս նշանակել թէ ինքն Եթովպի Իվերոն վրական վանաց վանականներէն է, զոր իբր 980ին երեք վրացիք սուրբ լերին յոյն Հանգստականաց (Hesychiasten) գաղթականութեան մէջ հաստատեցին: Ուստի Եթովս լեռը վրացի վանական մը գրած է ձեռագիրս, իսկ յոյն վանականն Չաքարիա՝ նոյն մենաստանէն սոյնը զեղազարդած է մանրանկարներով:

Եւս ամէն օրինակներս բաւական են ցուցնելու թէ ԺՎ (այս ուրեմն եւս ստաւել Ժ գարուն չկար ի Հայաստան եւ ի Վրաստան ամենեւին մանրանկարիչ մ'որ ի վիճակի բլար Էջմիածնի աւետարանազարդքն յամենայնի սկիզբնազրին համապատասխան եղանակաւ ընդօրինակելու: Չայս կ'ապացուցանեն նոյն իսկ 989ի հայկական բնագրին եղբարազարդերն: Պանայր առ Վերեղմանին՝ (տես էջ 19) այս տեսարանիս կազմակերտութեան ասորապարտեալական ձեւը կ'ընծայեն այնպէս խանդարեալ վիճակի մը մէջ, զոր մի միայն սկզբնազրի մ'ըստ պատահման ձեռքն ինայէն զրդեալ եւ սրուեստին մէջ թերազարթ ծաղիղ մը կրնար արտադրել: Մոզուց երկրագոյութիւնը (տես էջ 20)՝ որ ըստ կազմակերտութեանն՝ այնպէս ինչպէս որ է՝ ասորի ստուածաշնչին վերջին մանրանկարին (Տխտ. Չ. 1) վրայէն ընդօրինակուած կրնայ բլար, ի մանական մեծամեծ փոփոխութիւններ է կրած, եւ յայտնապէս կը մտանէ իւր հայ հեղինակը՝ զգակներէն առկախեալ ժապաւէններովն: Եւսպիտի իրականութիւնը կարծես՝ զրականապէս սոցոյգ կը հրատարակեն թէ 989ի հայկական աւետարանին սկիզբն ու վերջը կիցալ մանրանկարք չեն կրնար իրենց ծագումն Հայաստանի պարտական բլար: Կա մանաւանդ պատկերաց անխառն նկարազրէն գտակով՝ Չ գարուն առաջին կիտուն յԱսորիս գործուած են:

Եւսմ՝ պիտի հետազոտենք թէ արդեօք Հայաստանի համարձի եղած է ժամանակ մը, յորում ասորական մանրանկարք մուտ գտնել կարենային, կամ արդեօք բիւզանդական նկարչութեան ազդեցուցեալ տիրապետութիւնն Ժ եւ ԺՎ գարուց զիմագիծ մանրանկարչութեան մասին՝ ի սկզբնէ անտի ի Հայաստան տիրող եղած է:

